







ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱՆՈՒ

VI



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ Լիոնի և չափազանց ազգային միության կենտրոնական վարչության և մայր մոլորակին	3
ԽՈՐԱԿՐԱԿԱՆ.— Սարոց քաղաքանշան տունը	6
ԹՈՒԹԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՐԱՄՐՅԱՆ.— Սուրբ Էջիածին	10
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ	13
ՊՐՈՑ. Ն. ԱՃԱԹՅԱՆ.— Հուշեր Կոմիտասի մասին	18
ՊՐՈՑ. Լ. ՍԵՄՅԱՆՈՎ.— Ահալիա Շիրակացիի որսին աստղաբաշխ	21
ԻՔՆԱՏՐՈՍ ՍԱՐԱԿԱՆԿ ՄԱՐՏԻՐՅԱՆ.— Ջերիկ-Մուռայի բաբառը	27
ԻՄՅՐ ԱԹՈՒԹՈՒՄ	35
ԹՈՒԹԵՆ ՍԱՐԱԿԱՆԿ ԻՄՐՏԻՐՈՍՅԱՆ.— Ախտագնացությունը Գեղի Օջական	39
ԻՄՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Հայկական փրկամանկայի համերգային մեծ դահլիճը	43
ՓԱՅԼԱԿ ՄԻՆԱՆ.— Ռուս մեծ մոլորակին (բանաստեղծություն)	48
Կոմպոզիտոր Ալեքսանդր Ալեքսանդրովի մահվան 25-ամյակը	50
Ճարտարապետ Ալեքսանդր Ռոմանյանի ծննդյան 75-ամյակը	51
Կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 50-ամյակը	52
ՀԱՄԱԹՈՍ ԼՈՒԻՍ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅՈՍԱՆԻՑ	54
ՎԱՋԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՆՃՅԱՆ.— Կոլեր ոտմանակը կյանքի մասին	57
Կյանքը Ինդունկայի մայր գաղութում	61
Շերիկի դիմանք	61
Նորայր Բյուզանդացու ձեռագրերի մասին	62

ԽՐԱԿՐԱԿԱՆ ՀԱՅՈՑԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՌ, ԷՋՄԻԱՄԻՆ

«ԷՋՄԻԱՄԻՆ» ՍՄՍԱԳՐԻ ԽՐԱԿՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР. Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“

Redaction of the magazine „Etchmiadzin“, Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1953 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ

Տ. Տ. ԳԵՈՐԳԱՅ Զ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՐԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Լիոնի «տարագիր», աշխատավոր, հավատավոր հայկական գաղութը ազգային տուն ունենալու ցանկությունը, ինչպես նաև ներկա ազգային բնության վարչությանը «վեռակում որոշումը» սեփական եկեղեցի, պարոց, մատենադահան և հանդիսարան ունենալու», Մեզ՝ ծերունի Հայրապետիս, ամենարագեղի հոգեկան հանույժ է մխիթարություն է պատճառում։ Հոգեկան հանույժ է պատհասում, որովհետև կենտրոնական Ֆրանսիայի վահանակաձևական բնույթ կրող մեծագույն քաղաքներից մեկում՝ Լիոնում, նոր հաստատված տարագիր մի շինարարական գաղութ ազգային ինքնագիտակցություն ունի, իբրև Ազգային մեծություն և անկախ ապրելու։ Մխիթարություն է պատճառում, որովհետև այդ փոքրիկ գաղութը գիտակցում է քե՛ս՝ ազգայնապես ինքնություն գոյություն պահպանելու հիմնական պայմաններից մեկն է՝ իր կապը ամուր և անխզելի պահել Հայ եկեղեցին զխավորող Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության և նորա Կրոնապետի ու Ազգապետի հետ։

Ի իսկի հայկական զաղուրի եկեղեցի կառուցանելու ռոշումը անփոխադրելի մի ձեռնարկ է իր ազգային գոյությունը, իր հայությունը պահպանելու համար։ Հայրենիքից հեռու, օտարության մեջ ապրող պանդուխտ զաղուրահայությունը, զուրկ հայրենի հողերունը հույարձաններից ու ազգային-եկեղեցական նվիրական սրբություններից, որոնք խոսում են նորա սրտի, նորա հոգու երեւելիների հետ և կենդանի պահում նորա ներքին աշխարհում ազգային ոգին, հետզհետե օտարանում է Հայ Ազգից, մարում է նորա հոգու մեջ սիրո կրակը առ Մայր Աթոն և առ Մայր Հայրենիքը, որոնք այնքան կարևոր են ազգային ինքնագիտակցության և Ազգի ինքնությունը գոյության համար։ Սփյուռքի հայությունը կարող է իբրև հայ ապրել, երբ Հիսուս-Քրիստոսի հավատով վառված, Մայրենի եկեղեցուն փառի և հայ դպրոցին ապավինի։

Հայ եկեղեցին զարեւի ընթացում է հայության համար ոչ միայն հավատի վառարան, այլև ազգապանդուխտան էական ազգակ։ Հայ եկեղեցին է, որ հավատացյալների աշխն ու սիրտը ղեկի ինքը դարձնելով, ի մի է խլում և շաղկապում իր տառազլի զավակներին, ջերմացնելով նոցա սիրտը նախնայաց ջերմեռանդությամբ և մեծագործությամբ ու առ Ազգն և Հայրենիքը ունեցած անձնվիրությամբ՝ պանելով նորան ճանադարյան հաստատության՝ Մայր Աթոն Ա. Էջմիածնի հովանու ներքո։

Նշտական եկեղեցին բարոյական շենք դարձնողը կենդանի հավատն է, իսկ հավատը կենդանի և վառ պահողը՝ անձնվեր հովիվն է։ Անձնվեր հովիվն է, որ հավատացյալների միտքը լուսավորում է Ա. Ավետարանի լուսով և սիրտը ջերմացնում սիրո զգացմունքով պեպի ընկերը, և այսպես ղեկավարում է անձնվեր հովիվը հավատացյալների միտքն ու սիրտը պեպի բարին, զեղեցիկն ու ճշմարիտը՝ դաստիարակելով նոցա ճշմարիտ հավատացյալ և դարձնելով Հիսուս-Քրիստոսի ճշմարիտ աշակերտ։

Հայ դպրոցն է, որ հայ մատաղ սերունդը հայեցի է դաստիարակում և կրթում՝ մարզելով նորա միտքը Հայ Աշխարհի Բազմաւորտիկ հաճատակների պատմությամբ և սրբազան ավանդներով։ Հայ դպրոցն է, որ վառում է հայ մատաղ սերունդի սիրտը Հայրենիքի սիրով և մկրտում նորան ազգային ոգով։ Հայ եկեղեցին՝ իր անձնվեր հովիվով, և հայ դպրոցը՝ իր անձնվեր ուսուցչով ազգային ինքնագիտակցության և ազգային ինքնությունը գոյության սյուներն են։ Սոցա միացյալ ջանքերով է, որ հայությունը ամենաուրեմ, մանավանդ գաղութահայությունը օտար երկրներում և կոլտուրապես բարձր ազգերի մեջ կարող է անխաբար պահպանել իր ազգային ոգին և՛ իբրև Ազգ, անձույլ մնալ։

Իմ սիրելի՛ ժողովուրդ, հարդեցե՛ք և զնահատեցե՛ք կարող, բարեխիղճ և անձնվեր հովիվն, հարդեցե՛ք և զնահատեցե՛ք կարող, բարեխիղճ և անձնվեր ուսուցչին, նո՛րա ձեռ ազգային գոյության անփոխադրելի սյուներն են։

Օրհնյալ լինի Էրեւնի գաղութահայությունը, որ խորհում է ստեղծել ազգապանդուխտան արժեքավոր գործոններ։ Աստվածային օրհնությամբ օրհնում ենք նաև Ձեզ՝ Լիոնի և չրջակայի Ազգային միության կենտրոնական վարչության անդամներիդ, որպեսզի Ձեր ազգօգոստ և ազգաշեն ձեռնաշկներ հաջողությամբ սյակվին և փութով ի կատար ածվին՝ հուրախություն Մեր սիրելցյալ հոտի և ի մխրաբություն Մեր։ Օրհնում ենք նաև Ձեր լեւտանիքն ու զավակները և մաղբում մարդասեր Փրկչին, որ պարզե՛ք Ձեզ և ձերայնոց առողջ ու բարձր կյանք և պապաստե՛ք Ձեր բարեպաշտ ու ազգասեր ուլին նոցա հոգու մեջ։

Մաղթում ենք Ռաբոյալին, որ Սփյուռքի մեր սիրելի հոռը առնե Իւ-
ամենազոր Աջի հովանու ներքո և պտրգեե նորան խալաղ, աճաստան և բա-
րօր կյանք ու բարի վերադարձ ի Հայրենիս:

Աստվածային օրհնությունը, շնորհքը, սերն ու խաղաղությունը իջնի և
բնակի Ձեր մեջ, որպեսզի Դուք միշտ հավատարիմ մնաք Մայր Աթոռ Ս. Էջ-
միածնին և Հայրենիքին, ճախանձախնդիր լինեք Հայրենի երկրի շինարարու-
թյան ու հառաջդիմության և միմյանց հետ սիրով և խաղաղությամբ ապրեք.
ամեն:

ԳԵ. . . 23

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուտ: կոնդակո ի 20-ն ապրիլի
1953 թրկական ամի, և ի տումարիս Հայոց ՌՆԹ,
յիճնհրաջում ամի Հայրապետության Մեռոյ,
ի վաճա Սրբոյ էջմիածնի:





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՍՐԲՈՑ ԹԱՐԿԻՄԱՆՉԱՆՑ ՏՈՒՆԸ

«Ուր դարդաւեցին տնօրէնարար դիմատառ անդին,
Հաստատելով յերկրի զգիր կենդանի...»:

ՇԱՐԱԿԱՆ ԹԱՐԿԻՄԱՆՉԱՆՑ



այաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին վաղուց սրբերի կարգն է դառնայ հայ մշակույթի և հայ ժողովրդի յուսավորության գործին ելլելով ամեն վաստակավորներին: Համագրային եկեղեցական տոներն շարժում առանձնահատուկ կարևորությամբ է նշվում մեր մեծ քաղաքաճիշ-յուսավորիչների՝ Ս. Սահակ Պարբերի և Ս. Սեբուսի Մաշտոցի տոներ, որը, առավելապէս, պանծացումն և հայ դրի և զբաղանքության:

Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը 5-րդ դարի սկզբներում յիսն դեցին մշակութային-պատմական այնպիսի մի շարժման, որ բազմաթիվ կարևորություն ունեցող իրադարձությունն հանդիսացավ հայ ժողովրդի պատմության մեջ: Դրանի գլուխը և հայ ինքնուրույն զբաղանքության սկզբնավորությունը հայ ժողովրդի կյանքում ունեցան ոչ միայն մշակութային-պատմական նշանակություն, այլև հա իրա իրազեկական գոյության, ազգային-եկեղեցական միասնության կարևոր ազդակներն էին և եկել հանդիսացան:

Մեր առաջին քաղաքաճիշ-յուսավորիչներն էլ, սկիզբ առնում հայեցի ինքնուրույն զբաղանքությունը, որն իր հարուստ ու բազմակողմանի բովանդակությամբ իր անցնելի կնիքն է դրոշմել միջնադարյան մեր ռդջ մասնագրության վրա:

Ի՞նչ էր մշակութային, յուսավորական, ազգային-եկեղեցական այս շարժման հիմքն

ու պատմական նշանակությունը հայ ժողովրդի համար:

Հայ դիւն ու զբաղանքությունը ստեղծվում են պատմական այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ օրակարգի էր դրված հայկական պետականության ինքնուրույնությունն ու անկախությունը, երբ Հայ եկեղեցու վրա զստկւյան սրի նման կախվել էր նուստաւորական մշակույթների վտանգը: 4-րդ դարի վերջերին և 5-րդ դարի սկզբներին հայ ժողովրդի համար ստեղծված վաղաժաման այս ճանր իրադրությունն անհրաժեշտություն դարձրեց դիմել վնասված միջոցների՝ ստեղծել հայ գիրն ու հայ զբաղող զբաղանքությունը և պայմարել հանուն ազգային անկախության, հանուն հայ ինքնուրույն մշակույթի, քնդդիմ նույն և ասորական սզդեցություններին:

Հայ ժողովուրդը, որը ճախտոյ դարերում հայրական դիմադրություն էր ցույց տվել իր ժամանակվա երկու հզոր «վիշապներին»՝ բյուզանդական ու պարսկական բռնապետություններին, 4-րդ դարի վերջերին հաղափականապէս զգալիորեն բուլացել էր: 387 թվականին Նյուզանդիոնն ու Տիգրոնը, փոխադարձ հասկացողության հիման վրա, բաժանել էին մեր երկիրը երկու մասին: Հաստատան բյուզանդական մասում շուտով վերացվեց հայ պետականությունը: Շատ շանցած նույն բայտաին արժանացավ նաև պարսկական ազդեցության տակ ընկած Արևելյան Հայաստանի կիսանկախ հայ պե-

տականությունը: Երկու գիշատիչ պետություններն էլ աշխատում էին հոգեպես չլատել, բարոյապես ընկնել հայ ժողովրդին ու վերացնել գաղափարական այն նախադրյալները, որոնք կարող էին օժանդակել ազգային, ֆաղափական անկախություն ձեռք բերելու ձողումներին:

Հայ ժողովրդի համար հակառակորդական այդ օրերին, Հայաստանյայց եկեղեցին ևս իրենից չէր ներկայացնում մի գորավոր կազմակերպություն: Քրիստոնեությունը Հայաստանում հույների և ասորիների ձեռնումն էր. «Պաշտօն եկեղեցւոյ և կարգացմունք Ս. Գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոց» (Ղազար Փարպեցի): Ավելին. քրիստոնեությունը չէր մտել հայ ժողովրդի կենցաղի մեջ, որպեսզի կարողանար իր շուրջ հավաքել նրա ֆաղափականապես անջատված բեկորներին: Ժամասացությունն ու ընթերցվածները տարվում էին հունարեն և ասորերեն լեզուներով և անիմաստ հեշտյուններ էին հայ ժողովրդի համար: Եվ էրեզզայզ գցերեկ նստեալ վարդապետացն և ըստ նմանութեան ամպոց իբրև գյուղանեղեղ ինչ անծրեաց սաստկութեան զվարդապետութիւն ի վերայ հոսէին, ոչ ոք ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ մի նշմարանս ինչ գորլսէին և ոչ կարէին ինչ ունել ի մտի» (Փաւրստոս Բյուզանդ):

Այս դրությամբ այլևս անհնարին էր շարունակել: Անհրաժեշտ էր համախմբել ներքին ուժերը և նրանց վրա հենված՝ մշակութային պայքար սկսել դրսի օտար ազդեցությունների դեմ: Ներքին ամենամեծ հենարանը եկեղեցին էր: Եկեղեցին ուժեղացնելու միակ ելքն այն էր, որ այնտեղ մտցվեր ամենին հասկանալի հայերեն լեզուն, Հայ եկեղեցուց ու դպրոցից դուրս վանվեին ասորերենն ու հունարենը և ստեղծվեին ինքնուրույն ազգային եկեղեցի և դպրոց: Հարկավոր էր ուժեղացնել Հայաստանյայց եկեղեցին: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ունենալ սեփական դիր ու դրականություն: — Անա՛ր բարգմանչաց շարժման ֆաղափական մեծ նշանակությունը:

Բյուզանդիայի և Պարսկաստանի դեմ մղվող ազգային-եկեղեցական մշակութային պայքարում, մայրենի լեզվով ինքնուրույն գրի ու գրականության ստեղծումը մեծ նշանակություն պիտի ունենար երկրի ներքին կապերն ու ուժերը ամրապնդելու գործում:

Այսպիսով, ժամանակի ֆաղափական, կրոնական, տնտեսական պայմանները անոպ բերեցին սեփական գիր ու գրականություն ունենալու անհրաժեշտությունը՝ գաղափարական գետնի վրա հաջողությամբ պայքարելու Հոռոմի ու Տիգրանի դեմ:

5-րդ դարում բարգմանիչ-լուսավորիչների ստեղծած հայ ազգային մշակույթն ի սպաս դրվեց հայության: Եվ դրա գործնական արդյունքները գրանդվեցին շուտով: 5-րդ դարում, հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության ու ազատագրական հերոսական գոյամարտերի այս նակատագրական շրջանում, հայ ժողովուրդը կովում էր և՛ գրչով, և՛ սրով. սրով՝ Ավարայրում, պարսիկների դեմ, գրչով՝ հույների ու Քաղկեդոնի դեմ, կովում էր հավասար ատելությամբ ու վեհականությամբ:

Բարգմանիչ-լուսավորիչների ղեկավարությամբ և անմիջական առաջնորդությամբ մշակվել էր հայ ժողովրդի մեջ ազգային ամուր գաղափարախոսություն: Բարգմանչաց շարժման շնորհիվ ազգային ինքնագիտակցության հասած մեր ժողովուրդը ազատագրական պայքար էր մղում Բյուզանդիոնի և Տիգրանի տիրակալների դեմ:

Ֆաղափական անկախությունը կորցնելուց հետո, հանուն ազգային-եկեղեցական անկախության, հանուն հայ ժողովրդի ազատության ու անկախության, այդ ազատագրական պայքարը դիտարկում և ղեկավարում էր բարգմանչաց շարժումով գոտեպնդված հայ առաջավոր մտավորականությունը:

Գրեթե գյուտով, հայ գրավոր գրականության սկզբնավորությամբ մեծ հեղաշրջում մտավ հայ կյանքի և աշխարհայացքի մեջ. «Զայնմ ժամանակի երանելի ու ցանկալի աշխարհին Հայոց անպայման սխաշելի լինէր», որովհետև «սկիզբն դպրութեանս հայոց լինէր սկիզբն մեծի գիտութեան» (Կորյուն): Ուսման կենտրոն է դառնում պատմական Վաղարշապատ մայրաքաղաքը, ուր հայերեն լեզվով ուսման համար հավաքվում է Հայաստանի բոլոր զավառներից սովորողների մի ստվար բազմություն:

Դարերով Հայաստանում օտար լեզուներով բացված և օտար պետությունների գործակալություն հանդիսացող հույն և ասորի դրպրոցները շատ բան չէին կարող տալ մեր ուսումնաստենչ երիտասարդությանը: Դարերով գրից ու գրականությանից զուրկ հայ ժողովրդի համար, բարգմանչաց ջանքերով, զբաղվել էր գիտության աղբյուրը: Անձամբ Ս. Մեսրոպը ժողովում է երիտասարդներ ուսման տալու համար: Մեծ հայրենասեր բարգմանիչ-լուսավորիչը հոգում է նաև հայոց կես ազգի համար, որ գտնվում էր հոռոմների բազավորի իշխանության տակ: Ս. Մեսրոպն սկսեց շարունակել վարդապետի գաղափարներն ուրպես գաղափարախոս (տորեմացի):

Դարեր շարունակ հայոց մեծասմանչ լեզուն, հայ ժողովրդի հարուստ գրականությունը, ֆաղափականապես անջատ և օտար

միջավայրերում ապագոյ հայ ժողովրդի պահպանութեան քննարկները համար հանդիսացել են համազգային միության, ազգային բնդհան-րության պատմական ամենամեծ գործոնները: Նայելիս հետագա դարերում, տնտեսական հարկադրանքի ու հաղափական տենչապատ պայմանների պատճառով, Հայաստանայց Առաքելական եկեղեցուց բռնի պոկված մեր եղբայրներն անգամ չեն համարձակվել դիպչել հայոց լեզվին: Հակառակ ինկուզների ու Աղաքանյանների հայատյաց ու ազգակործան հաղափականության, լեզվի միջոցով պահպել և ազգային միությունը «մուկացի» բաժանված նույն ժողովրդի գաղակների միջև:

Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը շատ խորն էին գիտակցում հայոց լեզվի ու գրականության դերը հայ ժողովրդի միասնության և լուսավորության խնդրում:

Հայոց լեզուն, հայ գրականությունը, հայ ժողովրդի ազգային գոյության պահպանման, ամրապնդման գործում պատմական մեծ նշանակություն են ունեցել անցյալում և ունեն այժմ էլ: Ս. Թարգմանիչների հիշատակի մեծարումն ու ողբկոչումը, այսօր ավելի քան մի այլ ժամանակ, սրբազան պատականություն է դնում յուրամենյուր հայ մարդու վրա, և առաջին հերթին Սիլվոսի մեր բնական տոհմաբնակների, բնական, կրօնական խորհուրդների, մտավորականության վրա՝ աչքի յույսի պես պահել ու պահպանել հայոց մեծամասն լեզուն մեր էկեղեցիներում, բնտանիքներում, պալատիկ, օտար լեզուների ու դպրոցների ապագայն անցնող ազգեցությունների ղեմ, զաստիարակել հոր սերունդը բարգմանչաց ողով ու շնչով, քնդհանրացնել, տարածել հայ գիրն ու գրականությունը:

Այն ժամանակ, երբ Մայր Հայրենիքի դպրոցներում, ինստիտուտներում, գործարաններում, կոլտնտեսական անասնաբան դպրոցներում, տներում, դատարաններում, աշխատանքի ք. հանգստի ժամին, հեշտում է մեր մեծամասն լեզուն, Սիլվոսի որդի երկրներում մոռանում են հայերենը, տեղ-տեղ կարիք էլ զգացվում նույնիսկ անգլերեն բարդմանը Ս. Պատարագը...

Այն ժամանակ, երբ Մայր Հայրենիքում, հարստատ պետության ամենօրյա հոգատարություն շնորհիվ հյվիվում, զարգանում և հարստանում է Մեսրոպյան լեզուն, Սիլվոսի որդի գաղութներում գլու չի հալըրահարվել բնտանիքներում օտար լեզուներով խոսելովատ սովորությունը: ՄԻՊԱՅՆ ԵՎ ՄԻՊԵՊԱՅՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՐԱՅՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ, ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԳԱՂԱՊԱՄԱՄԸ ԿԱՐԵՎԻ ԿԼԻՆ ԶՈՐԱՎՈՐ

ՊԱՏՆԵՆ ԿԱՐԵՎԻՆԵՆԵՆԻ ՍԺՈՒԹՔՈՒՄ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՐԵՆՈՒՄ ԳԵՄԻ:

Պարծենալ լոկ եախնիքների առաքինություններով և անուանով՝ նշանակում է զուրկ լինել սեփական արժանիքներից: Թարգմանիչ-լուսավորիչներ սրբությամբ կատարել են իրենց պատրիշ Հայրենիքի, հայ ժողովրդի և հայ գրականության հանդեպ, մեզ ավանդ են բույն մի անդամատելի հոգևոր ժառանգություն: Դա հայոց լեզուն է և այդ լեզվով գրված հարուստ, բարգմանաբար գրականությունը: Պետք է այն ոչ միայն պահել ու անսղարտ հասցնել հաջորդ սերունդներին, այլև նորացնել, հարստացնել:

Սիլվոսիում հայ ժողովրդի հաղափական անապատով վիճակը, մուր ուժերի վարած պատկերը՝ հաղափականությունը լուրջ վտանգ են ներկայացնում ոչ միայն հայոց լեզվի և գրականության, այլև դրսի հայության փիզիկական գոյության համար: Ապրում ենք դառն ու վատ ժամանակներում: Սիլվոսի մեր մտավորականության, բնական առաջնորդների խնդիրն է՝ ամրապնդել ազգային, մշակութային հոգևոր կադր Մայր Հայրենիքի, Ս. Եսմանիքի նետ՝ փրկելու համար հայ ժողովրդի միասնականությունը: Այսօր ևս Սիլվոսի հայությանն ապրած պատմական ժամանակաշրջանը նման է հայ ժողովրդի անցյալում ապրած հաղափական վտանգավոր կացությանը: Թարգմանչաց դեր կատարելու և կոչված մեր բնական առաջնորդներ՝ Սիլվոսի հայությունը փրկելու համար նոր ուղղություններից:

Լեզվի մոռացումը և հայրենի հեռավանդ սովորություններից հրաժարվելը նակատագրական կարող են լինել Սիլվոսի համար՝ մեղ զարում, հաղափականապես վտանգված հայ ժողովրդի ազգային լեզվով գրականության մեջ և տեսնում իր ազգային գոյության պահպանման հզոր ազդակներից մեկը: Այսօր ևս Սիլվոսիում, հայ գիրն ու գրականությունը, հայոց լեզուն ու մշակույթը պետք է ի սպաս լինել Սիլվոսի հայության պահպանման գործին մինչև այն երջանիկ ժամը, երբ նորից կհնչի ներգաղթի փրկարար ձայնը, երբ գրված հայությունը կվերադառնա իր Հայրենիք, ուր բոլոր պայմանները ստեղծված են իր լեզվի, իր ազգային մշակույթի անապատ զարգացման համար:

«Այս, լեզուն, լեզուն, լեզուն ու չրի, մարդ ինչին նման կրի: Մեկ ազգի պահպան, իրար միացնող ուրացիք, էլ ինչո՞վ կարես ասել, քե ո՞ր ազգիցն ես: Ինչ հայդ, պատմական կերակուր էլ տաս Երեխին, էլի իր մոր կայր հրա համար շաբաթից էլ աանուշ, մեղրից էլ» (Արմյան):

Հայ ժողովրդի անմահ զավակ, մեծ լուսավորիչ ու հայրենասեր Խաչատուր Աբովյանի բերանով խոսում են հենց իրենք, մեր քարգմանիչ-լուսավորիչները՝ Ս. Սահակյան ու Ս. Մեսրոպը:

Այդպես էլ հավատացել, գդացել ու ապրել է հայ ժողովուրդը իր պատմության ողջ բնազդում:

Ս. Քարգմանչաց այս տոնի առթիվ, ազգիս հայրենասեր մեծ Հայրապետը, որի օժման տարեդարձն է նշվում այս ամսում, քարգմանչաց շնչով, ռզով ու օրհնակով, նույն հորդորն է կարգում իր հավատացյալ զավակներին: Վեհափառն իր սրբատառ կոնդակների միջոցով միշտ հորդորել է՝ վառ պահել հայ հավատացյալ ժողովրդի սրտերում հայրենասիրական, նվիրական ու բոցավառ զգացմունքը, մեր նախահայրերի սրբազան հավատը, մայրենի լեզուն, ազգային ավանդությունները:

Մեր անմոռանալի լուսավորիչ-քարգմանիչների անմահ գործի հիշատակը լավագույնս պահելու միջոցն է՝ սիրել ու տարածել հայոց լեզուն, հայ գիրն ու գրականու-

թյունը, պայքարել հայ լեզվի աղավաղումների դեմ:

Վեհափառ Հայրապետը փաղցր ու պատասխանատու պարտավորություն է դրել մեր բոլոր թեմերի առաջնորդների, թեմական խորհուրդների և հավատացյալ ժողովրդի վրա՝ գործադրել ու աչքի լույսի պես պահել մեր մշակութային արժեքները, սիրել ու տարածել, բնդհանրացնել մեր մեծառուցիկ լեզվով գրված հոյակապ ու հարուստ գրականությունը, մեր դարավոր ու նվիրական ավանդները, որոնք ձեռք են բերվել մեր պաշտնային նախնիների արյունով, փրփրով և կյանքով:

Մեր անմոռանալի լուսավորիչ-քարգմանիչների պայծառ հիշատակը այսօր էլ խաղաղապետում է հայ հավատացյալ ժողովրդին՝ սրբությամբ պահել ու պահպանել անցյալից ավանդ ստացած հոգևոր ժառանգությունն ա՛յն հաստատուն համոզմունքով և սրտառույց հավատով, որ «մեկ ազգի պահողը, իրար միացնողը», — իրոք, — ՀԱՎԱՏԸ: ու ՀԱՎԱՏԸ:

Նվ այս կյանի իրական, լավագույն մեծահանգր քարգմանչաց պայծառ հիշատակի:





Ք Ա Ր Ո Ջ

ԻՌԵՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ԴՐԱՄԲԱՆ

ՍԱՌԻՐ ԷՋՄԻԱՄԻՆ՝



սուրբ Էջմիածի՛ն... Ահա՛ հայ ժողովրդի միասնության խորհրդանիշը, նրա հավատի ջահը, նրա մաքառումների ու պայքարների լուսավառ աստղը՝

Սուրբ Էջմիածնի տունն է այսօր, նրա 1647-ամյակը, Ղոզանջում են Հայաստանյայց եկեղեցիների զանդերը ամենուրեք ուր հայ հավատացյալ կա, հնչում են լույսի և միասնության երգերը.

«Եկայք շինեսցուք սուրբ դիտրանն լուսոյ»

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տունն է այսօր, Հայոց Հայրապետության տունը:

1647 տարիներից ի վեր Հայոց Հայրապետությունը պայքարել է հայ ժողովրդի մշակութի գարդաշման և նրա սպահպանման համար, ի՛նչ հոյակապ պործեր են կատարվել, ի՛նչ հրաշալի կոթողներ է տվել Մայր Աթոռ իր ժողովրդին, ո՛րը թվել և ո՛րը թողնել, նրանք անթիվ են և անհամար:

Մի յոթ ժողովրդի հետ և ժողովրդի՝ համար:

Այս է կազմել ողին մեր կաթողիկոսության, այս է եղել ողնաշարը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, նվ այս է, որ սրբացրել է նրան, այս է, որ շունչ ու ոգի է ներշնչել մեր ժողովրդին, մեր հող ու ջրին, այս սրբադան պատգամով են ընթացել մեր բոլոր հայրապետները և մեր հավատացյալ ժողովուրդը համակ:

Այս սկզբունքով է, որ մեր եկեղեցին դարձել է ուրույն, իր ուրույն դիմագծով ու կերպարանքով:

Ժողովրդի՝ հետ և ժողովրդի՝ համար:

Դարերի փոթորիկները, ամեն տեսակի լուծապետական հայաժանյուններն ու որդայթները չեն վարդապետ մազաչափ իսկ շեղել մեր Հայրապետությունն այս լուսաշող ուղուց.

Ս. Էջմիածի՛ն... Ահա՛ նա խոսում է աշխարհի այս ու այն փողմը սփռված, տարադիր հաշիւին, խոսում է նրանց հայ հողի, հայ ջրի լեզվով, խոսում է և երգում մեր ժողովրդի միասնության, մեր փառապանծ և երջանիկ Հայրենիքի երգը:

Հոգիները այսօր ուրախ են և զվարթ, խիեղր և հոգեկան կորուվք վարարել է ամեն, բի՛ն...

Լս՛ւ՛, Էջմիածինն է խոսում...

Ղոզանջում են զանգակները Արարատի սրբազան կատարներից, զոզանջում են համայն հայության համար:

Մայր Աթոռի տունն է, Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցու տունը:

Ղոզանջում են զանգակները:

Վերացած՝ աղոթում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ Ս. Տ. Գեորգ Զ-ր, ի՛նչ... Այս ի՛նչ վսեմ շարական է հրնչում Մայր Տաճարում.

«Էջ Միածինն ի Հօրի,

Ու յոյս փառաց բնդ նմա...»

Հոգեպարար զոզանջյունների հետ բարձրանում են հոգիները, ճգնում են սրտերը ի՛նչ արտասովոր փայլ կա բազմություն երեսին, այս ի՛նչ խորհրդավոր և սուրբ լուծություն է:

1. Հանդուգյալ Իրեքեն արքեպիսկոպոս Դրամբուսը այս բարոյի խոսել է Ս. Էջմիածնի Մայր Տաճարում 1950 թվականի հոկտեմբերի 10-ին, Ս. Էջմիածնի տանի սրբո՛ւ — ԽՄԲ.

Աղոթում է Վենամիառը, աղոթում են միաբանները, գալիսներն ու սարկավազները: Աղոթում է բազմաթիվները: Աղոթում են Մայր Աթոռի հավերժության համար:

Աղոթում են բոլորը, իսկ զանգերը զողանջում են հնչեղ և ուրախ, զողանջում են և ավետում ողջ աշխարհի հայությունը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տոնն է այսօր:

— Սակայն ի՞նչ է տվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայ ժողովրդին...

— Հայոց Առաքելության հիմն Առաքելական Ս. Եկեղեցին, հայ ժողովրդի հոգեկան առաքինությունների մշտահոս և սրբազան աղբյուրը, քրիստոնեական, աստվածային, հավերժական ճշմարտությունների և մարդկային կյանքի ու հասարակական զարգացման համար անհրաժեշտ վսեմ դադափարների սուրբ խորանը, հայոց հավատի, կրոնական երկյուղածության և աստվածային ապրումների մշտադադար լայն շրջան կից՝ հայ օջախը, հայ կնոջ առաքելի և սուրբ կերպարը, մեր ժողովրդական նվիրական ավանդությունների, մեր ուրույն սովորույթների և բարքերի պահպանումը և քրիստոնեական դադափարների լուսով Ամենաբարձր յայնի մոտենալու և նրանով սնվելու ու վեհալնալու, հոգեպես զորանալու և կազդուրվելու աստվածային ձգտումը:

Ահա՛ սուրբ մարդը՝ Սահակ Պարթևը, Աստվածաշնչի ստվար հատորները համեմատելիս և թարգմանելիս, ահա՛ նրա սրբազան կտակը իր ժողովրդին, ահա՛ նրա հայրենական խորհուրդը՝ «Ես իմ հիվանդ ոչխարը չեմ փոխի օտարի առողջ գալլի հետ»:

Դարեր շարունակ հայ ժողովուրդը առաջնորդվեց այս սրբազան սկզբունքով, շինթարկվեց օտար գալլերին ու գաղաններին, պահպանեց իր դեմքն ու կերպարանքը, միայն հարազատ իր հողին ու ջրին, իր հայրենական ավանդություններին ու Եկեղեցուն և զգեստնեց դարերի փոթորիկները:

Ահա՛ սուրբ մարդը՝ Մեսրոպ Մաշտոցը, Մասիսի պես հոյակապ, Մասիսի պես հզոր, հպարտ ու բարձրաճակատ, որը դարերի զբոսից պոկեց իր ժողովրդին փրկող գնեք՝ հայ գիրն ու դպրութիւնը: Ահա՛ հայ դպրոցը, հայ լեզուն, հայ գիրքն ու գրիչը, ահա՛ և փնտրական հայ մանուկները:

Դարձն ք մի պահ և հայացքներդ ուղղեց՝ գեղածիծաղ Արագածին, տեսն՝ք, որքան ուրախ է նա, ի՞նչպես իր թևերը մեկնել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Ահա՛ նրա ձյունափառ կատարին լուսավորչի փանթեղը, հայ ժողովրդի հավատի խոճրդանիչը:

Արագած և Մասիս — երկու հավերժական հսկաներ, դարերի մերթնեքը քամահորդ և փոթորիկների մեղ միշտ լուսապայծառ,

հպարտ ու հաղթական, իրենց ժողովրդի պես, հայրենի հող ու ջրի պես, Սևանի լուսավար խոյանքների պես:

Հպարտ է Արագածը, նա իր գրկում, իր թևերի մեջ, իր սրտում ծարսել է հայ ժողովրդի փառքը, նրա հավաքական հանճարի վսեմ կերպարը՝ Ս. Մեսրոպին: Ցնծում է նա և նրա լուսավարս պրկից թռչող խնդության լուսեղեն ալիքները հեղեղում են Արա-րատյան դաշտը, միաձուլվում Մայր Արաքսի կոհակների հետ:

Ցնծության մեջ է մեր հողը համորեն ցնծում են դյուղերը, քաղաքները, խրճիթները և մեր լուսապայծառ լեռների կատարին խոյանում է ահա հայ ժողովրդի ու հայ Հայրենիքի՝ Սովետական Հայրենիքի փրկարար աստղը, աստղը թլսի, գիտության, ազատության ու վերելքի:

— Ի՞նչ է տվել Էջմիածնին...

— Ահա՛ թուրքերը մազադափի, ահա՛ Փավստոսը, Աղաթանգեղոսը, Խորենացին, Եղիշեն, Կորյունը, Ղազար Փարպեցին, Շիրակացին, — առաջին լուսաստղաշարը հայ գրչի ու գպրության:

Ահա՛ Վարդանանք, Ղևոնդ երեցը, Հովհան Մանդակունին, Գյուտ Արահեղացին և ուրիշները... Ահա՛ Վարդան և Վահան Մամիկոնյանները իրենց փառքով և հաղթանակով:

— Ի՞նչ է տվել Էջմիածնին...

— Ահա՛ ներսես Մեծը իր խոշոր բարեգործական հաստատություններով, ահա՛ Շնորհալին, Նարեկացին...

Ահա՛ Վարադը, Ս. Կարապետը, Սաղմոսավանքը, Սևանը, Սյունյաց դպրոցը, Վաղարշապատը իր դպրոցներով, դպրեվանքերով և աշակերտներով: Ահա՛ Վանական վարդապետը իր դպրոցով ու դրադարաններով Խորանաշատի վանքում, ահա՛ Հաղպատն ու Սանահինը, Ս. Հովհաննու վանքը, Տաթևը և ուրիշ շատեր ու շատեր...

Ահա՛ Նրուսաղեմն ու Կոստանդնուպոլիսն իրենց պատրիարքություններով:

— Ի՞նչ է տվել Էջմիածնին...

— Ահա՛ ներսես Վարժապետյանը, Խրիմյանը, Օրմանյանը, Իզմիրլյանը հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության դիրքերում ու պայքարում:

Ահա՛ սրբազան սկզբունքը՝ «Հանուն հայ ժողովրդի և հայ Հայրենիքի»:

Էջմիածինը ճղել է, կա՛ և կմնա՝ որպես հայ ժողովրդի հոգեկան ուժերի, նրա կորովի և քաջամտության աղբյուրը, նրա վերելքի, նրա հավատի, աստվածային երկյուղածության, քրիստոնեական վսեմ դադափարներով ապրելու, տոկալու և պայքարելու հզորագույն խթանը:

Ահա՛ էջմիածնի րարոյական ուժը:

Էջմիածինը հայ ժողովրդի հոգեկան ուժերի, նրա առաքինությունների, նրա պայքարների և հայրենասիրության, նրա վերելքի և կորույթի կազմակերպիչն է:

Նա հայ ժողովրդի կրոնական և ազգային միասնության հզոր զենքն է: Այդ զենքը անցել է դարերի բոլոր դաժան փոթորիկները, այն կոչել ու կոփվել է հայ արյունով, հայ պայքարով, հայ հավատով ու հայ առաքինություններով և այն անպարտելի է արդեն դարերի դաժանությունները զգեստնող իր կորովի կամքով, իր խաղաղասիրությամբ և իր մաքրակենցաղ կյանքով:

Ահա այսպիսին է Ս. Էջմիածինը, նա այսպիսին կմնա նաև հետագա բոլոր դարերի ընթացքում, քանի որ իր գոյության առաջին իսկ վայրկյանից ոգեկոչել է հայ ժողովրդի գոյության համար անհրաժեշտ սկզբունքը՝ «Հանուն հայ ժողովրդի և նրա համար, հանուն հայ Հայրենիքի և նրա հետ»:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դարերի այս իդը իրականություն է դարձել այսօր Սովետական փառապանծ Հայաստանի առկայությամբ:

Հայ ժողովուրդը այսօր ապրում է զոհ. երջանիկ և ուրախ: Հայ ժողովուրդն այսօր պաշտպանված է ամեն գոյնի և տեսակի թշնամիներից և նվիրվել է իր լուսավոր ներկայի է՛լ ավելի զարգացմանը և պայծառ ու հպարտ, քայլում է դեպի հրաշալի ապագան:

Վեհափառ Տե՛ր, սիրելի հավատացյալ ժողովուրդ. այժա է կազմում իմ ու Ձեր փառքը, այժա է կազմում հայ ժողովրդի փառքը:


Թո՛ղ հաճերժ ապրի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Թո՛ղ հաճերժ ապրի մեր փառապանծ Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը:

Թո՛ղ երկար ապրի Մայր Աթոռի Փահակայ Ամենայն Հայոց հայրենասեր ու Սրբազնասուրբ Հայրապետ Ն. Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ.ը:

Ղողանջում են դանդերը և նրանց յաղցր. հնչյուն ղողանջների հետ հողիները սլանում են իրար, ողջ հայերի հողիները եղբայրանում են սիրով ու հարազատությամբ:

Թուրքս ծունկի՝ — հայ ժողովրդի միասնության տոնն է այսօր...





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԾԱԿԱՏՈՒՄ

ԽՆԴՆԱԳՈՒԹՅԱՆ ԼՍՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈՑԻ ԿՈՄՅՈՒՆԻԿՆԵ

ՍՏՈՎՆՈՒՄ, 6 մայիսի (ՏԱՍՍ).— Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոն մամուլում հրապարակելու համար հանձնել է կոմյունիկե Ստոկհոլմում տեղի ունեցած Բյուրոյի նիստի մասին:

Կոմյունիկեում ասվում է.

«1953 թվականի մայիսի 5—6-ին Ստոկհոլմում կայացավ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի նիստը:

Բյուրոն ողջունում է միջազգային հանձնաժողովի ակտը, որը բոլոր կառավարություններին ուղարկել է Խաղաղության պաշտպանության ժողովուրդների կոնգրեսի Դիմումը, որով կոչ է արվում բանակցություններ վարել հինգ մեծ տերությունների միջև՝ Խաղաղության Պակտ կնքելու նպատակով:

Բյուրոն մեծ գոհունակությամբ նշում է, որ այդ ակտը արդեն լայն արձագանք է գտել ամբողջ աշխարհում: Բյուրոն բոլոր երկրների հասարակայնություններ կոչ է անում պաշտպանել այդ Դիմումը: Բյուրոն նորից պնդում է, որ բանակցությունների միջոցով հարցերի լուծումը պետք է հաղթանակ տանի ուժի գործադրման օգնությամբ ձեռք բերվող լուծումների նկատմամբ:

Բյուրոն արձանագրում է, որ այն պարզ ճշմարտությունները, որոնք խաղաղության համար մղվող շարժումը պրոպագանդել է մի շարք տարիների ընթացքում, ինչպես նաև նրա պաշտպանած խելացի նախաձեռնությունները սկսում են պտուղներ տալ: Ստեղծվել է նոր իրադրություն, որը պահանջում է կրկնապատկել ջանքերը:

Վերջին իրադարձությունների շնորհիվ բանակցությունների գաղափարը նվաճել է միլիոնավոր նոր կողմնակիցներ: Այդ իրադարձությունները ժողովուրդներին ցույց են

տալիս, որ նրանք կարող են իրենց գործողություններով հասնել միջազգային լարվածության թուլացման, մի բան, որը կծառույթի նրանց ընդհանուր փարոթությանը և կհանդիսանա բարգավաճման աղբյուր:

Կորեայում վերսկսվել են բանակցությունները: Ժողովուրդները պետք է պահանջեն, որ այդ բանակցությունները մոտ ժամանակներս հանգեցնեն զինադադարի կնքման և այն կոնֆլիկտի կարգավորման, որը այնքան տառապանքներ է պատճառում և սպառնում է տարածվել ամբողջ աշխարհով մեկ:

Խաղաղության պահպանումը պահանջում է նաև, որ գերմանական պորբլեմը վերջապես դառնա շուրս մեծ տերությունների բանակցության առարկա՝ նրա խաղաղ լուծման նպատակով: Գոյություն ունեն ուժեր, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով դիմադրում են միջազգային լարվածության թուլացմանը: Բայց խաղաղասեր մարդկանց ողջամտությունը և զգուխությունը ընդունակ են պարտության մատնել այդ ուժերին: Այդ խաղաղասեր մարդիկ կդիմադրեն բոլոր այն գործողություններին, բոլոր մեքենայություններին, որոնք կարող են հետաձգել կամ վարկաբեկել բանակցությունները: Նրանք կառավարություններից կպահանջեն անել ամեն բան, որպեսզի բանակցություններն սկսվեն և հաջող ավարտվեն:

Բանակցություններին նպաստող նոր ուղիներ գտնելու և խաղաղության պաշտպանության գործողություններում բոլոր այն մարդկանց ներգրավելու համար, ովքեր վերջին իրադարձությունների ազդեցության տակ սկսում են գիտակցել բանակցությունների անհրաժեշտությունը և հնարավորությունը, Բյուրոն որոշում է ընդունել 1953 թվականի հունիսի 15-ին Բուդապեշտում հրավիրել

հաղադրության Համաշխարհային հորհրդի սեփական

Ուղարկության ատենելով միջազգային կյանքի վերջին իրադարձությունները, սեփական հատուկ ուղարկություն կդարձնի այն բանին հասնելու անհրաժեշտության վրա, որ բոլոր պարագաներում հաղթանակ տանեն բանակցությունների միջոցով ձևոր բերված որոշումները: Մենսխայի աշխատանքը իր

ավանդը կմոծի միջազգային լարվածության թուլացման գործում, կնպաստի ժողովուրդների անվտանգության ապահովմանը, նրանց անկախության հարգման գործում:

ՍՏՈՎՆՈՒՄ, 6 մայիսի 1953 թվականին:

(«ՍՈՎԵՏՍԿԱՅԵ ՀԱՅԱՍՏԱՆ», 9 մայիսի 1953 թ.)

ԽՍՀՄԿՈՒԹՅԱՆ ՀԵՄԵԼՈՒՄԸ ԵՎ ԻՈՐՀԳԻ ԲՈՒՎՍԳԵՃՏԻ ՈՒՍԻՆ

1953 թվականի հունիսի 15—20-ը Բուդապեշտում դամարվեց հաղադրության Համաշխարհային հորհրդի սեփական: Մենսխայի աշխատանքներին մասնակցեցին հաղադրության Համաշխարհային հորհրդի անդամները, ինչպես նաև պանադան երկրներից հրավիրված՝ հաղադրության պաշտպանության շարժման անկախորդ գործիչներ:

Հունգար ժողովրդի անունից Հունգարական Ժողովրդական Ռեսպուբլիկայի բարձրագույն կրթության մինիստր Տիրոք Էրզել-Գրոդի սղջունի խոսքից հետո, սեփական ցեղ հաղադրության Համաշխարհային հորհրդի անդամ էմմանյունի ղեկավար զր լա Վիթերին:

հաղադրության Համաշխարհային հորհրդի ղյխավոր բարոսուդոր Ժոն Լաֆֆիոր, հաղադրության Համաշխարհային հորհրդի Բյուրոյի անունից առաջարկներ մտցրեց սեփական օրակարգի և աշխատանքի կարգի մասին: Նա առաջարկեց, որ աղի միջազգային դրության բոլոր հիմնական հարցերը քննարկվեն օրակարգի առաջին կետի շրջանակներում, որը ձևակերպված է հետևյալ կերպ. «Բանակցությունները և միջազգային դրության լարվածության թուլացումը: Օրակարգի երկրորդ կետը կլինի հաղադրության Համաշխարհային հորհրդի գերի և կադմի հարցը: Մենսխան հավանություն տվեց այդ օրակարգին:

Ապա հաջորդական նիստերում դեղեղացիների անդամներ և հաղադրության Համաշխարհային հորհրդի կողմից հրավիրված հյուրեր արաահայտեցին բոլոր ժողովուրդների միահամուռությունը՝ խաղաղության պահպանման գործում և աղին առաջարկներ՝ հորհրդի առաջ գրվող հարցերը հաջող լուծելու համար: Նյույթ ունեցողները շեշտում էին միջազգային կարևոր հարցերը բանակցությունների միջոցով լուծելու անհրաժեշտությունը:

Հունիսի 17-ի առավոտյան նիստում ղեկավար զր լա Վիթերին սեփականի մասնակցներին քննարկմանը մոտցրեց նախադրական առաջարկը հետագա աշխատանքի կարգի մասին:

Նախադրությունն առաջարկեց ոտեղծել հետևյալ հանձնաժողովները.

1) Ընդհանուր բաղաբական հարցերի հանձնաժողով, որը պետք է ձևակերպի բանակցությունների համար կամպասիայի անցկացման ընդհանուր սկզբունքները:
2) Հանձնաժողով, որը կհշակի այդ կամպասիայի անցկացման գործնական ձևերն ու մեթոդները և կքննարկի հաղադրության Համաշխարհային հորհրդի գերը:

3) Կուլտուրական փոխանակման հարցերի հանձնաժողով:

Հունիսի 18-ի սրը հատկացվեց երեք հանձնաժողովների աշխատանքներին:

Հունիսի 19-ի երեկոյան սիստում, մոտքերի փոխանակության փակումից հետո, հաղադրության Համաշխարհային հորհրդի Բյուրոյի անդամ աղիկին Քրանկո Ֆիայենն սեփականի հաստատմանը ներկայացրեց ժյուրիի որոշումը՝ հաղադրության միջազգային մրցանակներ և Ոսկե մեդալներ շնորհելու մասին:

հաղադրության միջազգային մրցանակներ են շնորհվել՝ Քրանկոյան քանատեղծ Բոյ Էյյուարին՝ նրա ստեղծագործության և ի պաշտպանություն խաղաղության նրա գործունեության համար, հյուսիս-ամերիկյան դիտնական Ու. Է. Բ. Պյուրտալին՝ ի պաշտպանություն խաղաղության նրա գործունեության համար, գերմանական ոսթիսյորներ Մարտին, Հելլերգին, Կուրա և Ժաննա Դուերներին՝ «Անկոչ հյուրեր» ֆիլմի համար, իսլանդական վիպասան Հալլգոր Լաբանսսին՝ խաղաղության գործին ձառայող նրա դրական գործունեության համար, մեքսիկական նկարիչ-փորագրող Լեոպոլդո Մեն:

դեպիսիս և «Տայիբրու դե գրաֆիկա պոպուլյարիս» աշխատակիցներին՝ խաղաղության գործին ծառայող նրանց նկարչական ստեղծագործությունների համար, հնդկի գրող Մուլք Բաշ Անանդին՝ խաղաղության գործին ծառայող նրա ստեղծագործությունների համար:

Այդ վեց մրցանակներից յուրաքանչյուրը կազմում է 2.500.000 ֆրանկ:

Ժյուրիի որոշմանը միաձայն հավանություն տվեցին սեփայն բոլոր մասնակիցները: Նրանք նաև միահամուռ կերպով հավանություն տվեցին ժյուրիի կազմի և ապագայում հաղաղության միջազգային մրցանակների շնորհման կարգի վերաբերյալ րանսիայի, որ առաջարկել էր հաղաղության Համաշխարհային հորհրդի անդամ Ալֆրեդ Վարելան (Արգենտինա):

Ապա հավանություն ստացավ կուլտուրական փոխանակության հարցերի հանձնաժողովի՝ տիկին Էթենի Կոստոնի առաջարկած հանձնարարականը, որի մեջ նշվում է, որ անհրաժեշտ է հաստատել կուլտուրական ամենալայն փոխանակում, որպեսզի բոլոր մարդիկ կարողանան միմյանց հաղորդել իրենց աշխատանքի արդյունքները, տեխնիկական պրոգրեսը, դիտության, տեխնիկայի և արվեստի նվաճումները:

Նիստի վերջում սեփայն մասնակիցները հաստատեցին հաղաղության Համաշխարհային հորհրդի Բյուրոյի կողմից առաջարկված այն դրոժիկների ցուցակը, որոնք լրացուցիչ կերպով ընտրվում են հաղաղության Համաշխարհային հորհրդի կազմում: Այդ ցուցակը նախօրոք համաձայնեցված էր բոլոր ազգային ղեկավարների հետ: հաղաղության Համաշխարհային հորհրդի կազմում ընտրվեցին 43 երկրների ընդամենը 131 ներկայացուցիչ:

Հունիսի 20-ի եզրափակիչ նիստում Գարիել դ'Արբուսյեն հաղորդեց քաղաքական հարցերի վերաբերյալ հանձնաժողովի աշխատանքի արդյունքների մասին: Ուսումնասիրելով բոլոր առաջարկները, և մասնավորապես հնդկական ղեկավարների ղեկավար Սոկհեյի առաջարկը, հանձնաժողովը մշակել է բանակցությունների օգտին համաշխարհային կամպանիա սկսելու վերաբերյալ ղեկավարացիայի նախագիծ:

Այդ փաստաթղթի հիմքում դրված է չորս դադափար, ասաց դ'Արբուսյեն: Միստիմների և ուժիմների խաղաղ գոյակցության սկզբունքը այժմյան պայմաններում ոչ միայն անհրաժեշտ է, այլև հնարավոր և բոլորի համար ձեռնտու: Այդ խաղաղ գոյակցությունը կարելի է ապահովել՝ միայն կիրառելով բանակցությունների մեթոդը և

մեն տարածայնություն լուծելու համար: Դեռևս կան պրոբլեմներ, որոնք ուսումնասիրեն ներկայացնում ամբողջ աշխարհի խաղաղությանը, անհրաժեշտ է դրանց լուծմանը հասնել բանակցությունների միջոցով, վերջապես շորտորդ դադափարը այն է, որ, չնայած մի շարք անվիճելի հաջողությունների, մենք դեռևս չենք կարող թույլացնել մեր ջանքերը: Մեր ջանքերի ամեն մի թուլացում կարող է ի չիք դարձնել ձեռք բերված արդյունքները: Դ'Արբուսյեն հրապարակեց ղեկավարացիայի նախագիծը, որին միաձայն հավանություն տվեցին սեփայն մասնակիցները:

Ապա հանդես եկավ հաղաղության Համաշխարհային հորհրդի Բյուրոյի անդամ Էմիլիո Սերենին (Իտալիա), որն ամփոփեց սեփայն այն հանձնաժողովի աշխատանքի արդյունքները, որը քննարկել էր բանակցությունների օգտին կամպանիա անցկացնելու ձևերի ու եղանակների հարցը:

Խոսելով գործողությունների այն ձևերի ու եղանակների մասին, որոնք պետք է կիրառվեն այդ կամպանիայում, Սերենին նշեց, որ անհրաժեշտ է մասսայական բնույթ տալ դրան ունյալս, որպեսզի այն հասնի և խաղաղության և բանակցությունների օգտին մղվող պայքարին մեջ ներգրավի ամեն մի առանձին մարդու: Այդ կամպանիայում գործողության կարևոր եղանակներից մեկը, ասաց հոնտորը, պետք է լինի մեր պահանջներն արտահայտող ղեկավարների ուղարկումը զանազան հասարակական կազմակերպությունների անդամների, պառլամենտի և կառավարության անդամների մոտ: Գործողության ուրիշ շատ մեթոդներ ու եղանակներ կմշակվեն կամպանիայի ընթացքում՝ փորձի փոխանակման կարգով:

Ամփոփելով սեփայն աշխատանքի արդյունքները, Պյեր Կոսը (Ֆրանսիա) այն անվանեց պարզված ձևերի սեփա, Մենք, ասաց նա, ունենք մի նկատառում՝ մեղմել միջազգային իրադրությունը, մի միտք՝ բանակցությունները, մի հոգս՝ խաղաղության գործը:

Այնուհետև հանդես եկած հնդկական ղեկավարի ղեկավար Սոկհեյը ասաց, որ հաղաղության Համաշխարհային հորհրդի այս սեփայն առաջընթաց քայլ կլինի խաղաղության համաշխարհային ճակատի գործունեության մեջ: Սոկհեյը ավելացրեց, որ հնդկական ղեկավարի մեծ գոհունակություն է զգում այն կապակցությամբ, որ բանակցությունների օգտին կամպանիայի առաջնահերթ կարևորությունը վերաբերյալ իր առաջարկը ընդունվեց հաղաղության Համաշխարհային հորհրդի կողմից:

— Մենք այդ առաջարկը մտցրինք, որովհետև տեսանք, թե ինչպես են աճել ժողովուրդների ուժերը հաղադուրյան պաշտպանության ժողովուրդների Վիեննայի կոնգրեսի ժամանակվանից:

Նիստի վերջում խոսք վերցրեց էմմանյուել դ'Աստյե դը լա Վիժերին, որը հրավիրված գործիչներին շնորհակալություն հայտնեց այն բանի համար, որ նրանք մասնակցեցին հաղադուրյան Համաշխարհային խորհրդի սեսիային, ինչպես նաև հուղարակալ կազ-

մակերպություններին ու նրանց գործիչներին՝ նրանց հյուրընկալության համար:

Դ'Աստյե դը լա Վիժերին հրապարակեց կոչի նախագիծը, որն ընդունվեց միանամուտ կերպով: Ապա դ'Աստյե դը լա Վիժերին հաղադուրյան Համաշխարհային խորհրդի սեսիան հայտարարեց փակված:

(Քաղված «ՈՌՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-ի 1953 թվականի հունիսի 17—23-ի համաժողովի ՏԱՍԻ-ի հաղորդագրություններից)

ԽՍՀՄ-ԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՈՒԴԱՊԵՇՏԻ ՍԵՍԻՅԻ ԿՈՉԸ

20 հունիսի 1953 թվականի

Մեկն է մեծ հույսը Այժմ ամեն մարդ տեսնում է, որ համաձայնությունը հետևաբար է: Կարելի է վերջ դնել արյունահեղությունների և վերջ տալ սատր պատերազմին:

Այս օրերին մենք հանդիսավոր կերպով ժողովուրդներին կոչ ենք անում իրենց կառավարություններից պահանջել, որպեսզի նրանք լիարժեքությունների միջոցով համաձայնության գան:

Մենք պետք է պաշտպանենք ամեն մի կառավարության ամեն մի նախաձեռնություն, որի նպատակն է կոնֆլիկտների խաղաղ լուծումը: Մենք պետք է խանգարենք նրանց գործողությունները, ովքեր արդեն են հարուցում կամ ձգձգում են համաձայնության հասնելը:

հաղադուրյան հաղթանակը մոտ է: Մեզանից է կախված դրան հասնելը:

(ՏԱՍԻ-ի հունիսի 20-ի հաղորդագրություն, «ՈՌՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 23 հունիսի 1953 թ.)

ԽՍՀՄ-ԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՈՒԴԱՊԵՇՏԻ ՍԵՍԻՅԻ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ՝ ԲՆԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԻԿ ՍԿՈՒԼՈՒ ՄԵՍԻՆ

Վերջին ամիսների իրադարձությունները ժողովուրդներին բերեցին այն համոզմանը, որ կարելի է հասնել միջադաշին բոլոր տարաձայնությունների խաղաղ կարգավորմանը:

Ժողովուրդները համակվում են այն գիտակցությամբ, որ հաստատակամ և համապարհաբար միջոցով իրենք կարող են հասնել խաղաղության հաղթանակին:

հաղադուրյան Համաշխարհային խորհուրդը, որը հունիսի 15-ից մինչև 20-ը նիստեր գումարեց Բուդապեշտում, ժողովուրդներին կոչ է անում կրկնապատկել իրենց ջանքերը, որպեսզի բանակցություններ սկսվեն միջադաշին միջևին հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով:

Յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի ազատորեն ընտրելու իր ապրելակերպը և պետք է հարգի այն ապրելակերպը, որ ազատ կերպով ընտրել են մյուս ժողովուրդները:

Տարբեր սիստեմների անհրաժեշտ խաղաղ գոյակցությունը այդպիսով դառնում է հնարավոր, իսկ ժողովուրդների կապերը՝ բոլորի համար շահավետ:

Այդ գոյակցությունը ենթադրում է, որ բոլոր կոնֆլիկտներն ու վեճերը պետք է լուծվեն բանակցությունների միջոցով:

Զինադադարը Կորեայում, որը վնասաբեր խաղաղության հաստատմանը, պետք է անհապաղ ստորագրվի արդեն ձեռք բերված համաձայնագրերի հիման վրա: Ամեն մի

նոր Լեզգու մասը է բերում նոր զոհեր, ավերածություններ ու տառապանքներ: Ընդունալիս պետք է դադարեցվեն անկախ ժողովուրդների դեմ մղվող մյուս բոլոր պատերազմներն ու ագրեսիվ գործողությունները: Ազգային-ավատադրական ամեն մի շարժման դեմ զենք գործադրելը միջազգային լարվածության գործոն է և կարող է պատերազմի օջախ ստեղծել:

Գերմանական ժողովուրդը ունի վերամիավորման և ազգային սուվերենության իրավունք, եթե հարգվի նրա հարևանների անվտանգությունը և թույլ չտրվի միլիտարիզմի ու ռեանշիզմի վերածնունդը:

Յապոնիան պետք է ամբողջովին ձեռք բերի իր ազգային սուվերենությունը՝ բոլոր շահագրգռված երկրների կողմից ճանաչված և Ասիայի ու Խաղաղ օվկիանոսի ժողովուրդների անվտանգությունը երաշխավորող հաշտության պայմանագրի հիման վրա:

Ժողովուրդների անվտանգությունը և խաղաղության պահպանումը կարող են ապահովվել, եթե ժողովուրդները ստիպեն հարգել իրենց սուվերենությունը, պայքարեն իրենց կյանքի տնօրինմանը օտարերկրյա միջամրտության դեմ, ռազմական բազաների և օտարերկրյա զորքերի կողմից ամեն մի օկուպացիայի դեմ:

Անվտանգության աստիճանական հաստատումը հնարավորություն կտա կանգնեցնել սպառազինությունների մրցավազքը, բանակցությունների օգնությամբ ձեռնամուխ լինել դրանց կրճատմանը և այն ռեսուրսները, որ մինչև այժմ գործադրվել են

ավերման ու մահվան գործի համար, ուղղել բոլոր ժողովուրդների համար ավելի բարձր կենսամակարդակ ստեղծելու գործին:

Բոլոր երկրների միջև պետք է տնտեսական և կուլտուրական կապեր հաստատվեն հավասարության, փոխադարձ շահավետության հիման վրա և առանց որևէ խտրականության:

Բանակցությունները կփոխեն իրադարձությունների ընթացքը: Միավորված Ազգերի կազմակերպությունը կարող է նպաստել այդ բանակցություններին, եթե նա հավատարիմ լինի իր կանոնադրության ոգուն: Նա պետք է ընդունի բոլոր այն պետություններին, որոնք դիմել են՝ խնդրելով իրենց ընդունել: Զինաստանը, ինչպես և մյուս ազգերը, պետք է Միավորված Ազգերի կազմակերպության մեջ ներկայացվի իր ընտրած պառավարության կողմից:

Ելնելով այդ ամենից, Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը որոշում է միջազգային լախ կամպանիա ծավալել հողուտ բանակցությունների, Այդ կամպանիայի ընթացքում ժողովուրդները կազմակերպական զանազան ձևերով կարտահայտեն բոլոր կոնֆլիկտները, պետությունների միջև եղած բոլոր վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու իրենց պահանջը:

Միայն ժողովուրդները, անընդհատ պայքարելով, կարող են հասնել բանակցությունների, համաձայնության և խաղաղության:

(ՏԱՍՍ-ի հունիսի 20-ի հաղորդագրություն, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 23 հունիսի 1953 թ.)





ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐԱՅԻ. Զ. ԱՃԱՌ-ՅԱՆ

(Հայկական ԱՍԻ Գիտությունների
ակադեմիայի իսկական անդամ)

ՀՈՒՇԵՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ՝

Ամիտասի հետ, 1897 թվականին սկսել, հրեք տարի շարունակաբար պաշտոնավարած ենք էջմիածնի Գեորգյան Ճեմարանը: Եվ ապրելով նույն սենյակին մեջ, ես մտան ճանաչա անոր նկարագրի դները:

Կոմիտաս մարդկային բացառիկ առարկանություններու ծով էր: Չափազանց աշխատասեր էր ան, աննկուն կամրի տեր, անկեղծ, բարեհոգի, մարդակրտսե և մեծ հայրենասեր: Բացի իր երաժշտական հանճարեն, ան ուներ նաև քովնտի շնորհքներ — բանաստեղծ էր և ճարտար կոմիկ (հրդիծող) դերասան մը, որ ֆարսի (զավեշտի) մեջ ալ մեզ հայտնի էր: Ահա թե ինչու ան Ճեմարանի մեծին ու փոքրին սիրելին էր դարձած:

Կոմիտաս բացառիկ ախորժելի ձայն մը ուներ, որուն համար Խրիմյան Հայրիկի մասնավոր համակրանքին էր արժանացած: Հայրիկի կարգադրությամբ, ան կղեկավարեր վանքի դպրաց դասը և սպասախանայտու էր նաև պատարագի՝ սուրբ խորանին երգված սարկավադի բաժնին և ավետարաններու ընթերցման կանոնավորությամբ:

Անգամ մը Ս. Խարզսի տոնին, եկեղեցին ավարտելեն վերջ, Հայրիկը ուզեց Կոմիտաս-

սին անձամբ հայտնել իր շնորհակալությունը օրվան եկեղեցական երգեցողության լավ կազմակերպման և Կոմիտասի այնքան բազմաթիվ երգիչուն համար: Եվ Հայրիկը շուտով Կոմիտասը կանչել տվավ մտադր: Անշուշտ, մեծ էր Կաթողիկոսի հրամանը, ճեմարանի ուսուցիչ և ուսանող աչ ու ծախ իմանք, բայց Կոմիտասը չզտանք:

Այդ օրը, Ս. Գեորգի ստեղծարարության ուղիով, վանքի և շրջապատի մեջ հավաքվելով Հայրաստանի շրջաններեն տասնյակ հազարավոր ուխտավորներ, որոնք ավանդական սովորության համաձայն մատաղի սեղաններ բացած, կղվարճանային: Դուրս գլուխայի երաժշտությունը կլեցներ օգրո ժողովրդական երգն ու պարը զվարթ մթնոլորտ մը կստեղծեին:

Կոմիտասի անհայտանալու լուրը հասավ Վեհի ականջը:

Ուշ երեկո էր, երբ Կոմիտաս, ճեմարանի կուրբեն իջնելով, մտավ սենյակ և օրախոսության բացառանշունություններով ցույց տվավ այդ օր իր հավաքած ժողովրդական երգերն ու սարերիցերը, որոնք ձայնադրած էր հայկական ձայնախելներով: Երբ թիվ վերջը Վեհի հափառ Հայրիկի քով դացինք, վրդոված դուռնք դինքը: Կոմիտաս ծունկի եկավ անոր առջև և Աջը ամենելով բռավ: Ենթե Վեհի դանկանա, մեղքերս շատ շուտ կբալեն, հիմա իսկ երգելով այսօր իմ հավաքած ժողովրդական երգերեն: Եվ Խրիմյան Հայրիկի ներողամիտ հայացքին տակ, Կոմիտաս երգեղ իր ձայնադրած ժողովրդական երգերեն՝ մեծ հաճությ պատճառելով Վեհի ատին: Այդ անմոռանալի օրեն վերջ, Խրիմյան Հայրիկի հրամանով ամեն տաղավարի, հետ պաշտարագի, Կոմիտաս աղատ կշրջեր ժողովուրդին մեջ, ծառայելով իր նպատակին:

1. Հանդուցյալ ակադեմիկոս Զ. Ա. Խարզսի իր այս հուշերը պատմել է տիկին Աղավենի Մեսրոպյանին՝ անդամորդու: Կոմիտասի կյանքն ու զբոժանություններն աշխատության հուշային բաժնում: Ընդառաջելով խմբագրության խնդրանքին, տիկին Մեսրոպյանը սիրահոծաբար տրամադրեց այն տպագրելու մեր ամսագրում: Ահա այնքան լինելով հայրենակից տիկին Մեսրոպյանին, սովորությունն է ունեցել նրա հետ խոսել Պոլսի բարբոսեղ, որով և պատմել է իր ներկա հուշերը: — ԽՄԲ.

Կոմիտաս մեծ ընթերցասեր մըն էր: Հայերեն լեզուն՝ աշխարհաբար և դրամար, աղեկ պիտեր, կհետաքրքրվեր ժամանակի լավագույն հայ ամսաթերթերով և մասնավորապես կկարդար Մովսես Խորենացին, Նարեկացին, Ելիշեն, Արովյանի «Վերք Հայաստանի» և զանոնք հայ ժողովուրդի ուստուգանքները կանվաներ: Կպատմեր, որ իր ուսանողական տարիներին ինք ընտրած էր իր կյանքի ուղին: Ան հաճախ կըսեր. «Միայն երգիչ մը ըլլալ և չոր երաժշտական մասնագիտութիւնը չի բավարարեր զիս», — և վստահ շեշտով մը կավելցներ, — «ես պիտի հասնիմ իմ բուն նպատակս՝ հայկական երաժշտութեան գանձերը դուրս պիտի բերեմ հայրենի ավերակներէն...»: Հայկական ժողովրդական բանահյուսութեան մասնավոր ժամեր կտրամադրեր և հաբուրավոր նմուշներ հավաքած էր:

Կոմիտաս քաջ պարող մըն ալ էր: Միևնույն ատեն ան ձևեր և բարբառներ հարազատորեն ընդօրինակելու բացառիկ շնորհք ունէր: Ընմարանի մեր մտերիմ հավաքուցիչներուն որքան հաճելի էր մեզ, երբ մեր խնդրանքին վրա, իր ծննդավայրին սորված պարերը թե՛ կերպեր, թե՛ կպարեր, և մենք ծափերով կողեւորենք իր մատներու շիկշիկ-կողմերը իր քաղմած ճոճումներուն մեջ: Տղամարդոց հայտնի հայկական ժողովրդական պարերին առհասարակ անմոռանալի կմրնա «շորոր» խիզախ ու խրոխտ պարը, որ սուրը ձեռքին, ձանր ճոճումներով և մարտական ձևերով կպարեր: Նույնպէս շինական կիններու պարերընքը, որոնք կպարեր իրենց ձայնի հարազատ ելնչներով և մարմնի ու ձեռքերու նրդին արտահայտութիւններով, հավետ անմոռանալի կմնան:

Կոմիտաս հոգատար վեր իր առողջութեան: Ան կսիրեր վաղ արշալույսին և երեկոյան արեամուտի ժամանակ դաշտային պտույտները և կըսեր. «Ես սակավ ուտելիքով կպարիմ, բայց առանց մաքուր օդ ծծելու՝ երբեք»: Կոմիտաս քծախնդիր էր մաքրութեան. իր թխորակ դեմքը, սև մազերը մաքրութեան մեջ կփայլէին: Մեծ խնամք կուսներ իր հագուստներուն մաքրութեան: Հաճախ երբ միասին դաշտային պտույտներ կվերագոհնայինք, մինչև որ սառնորակ ջուրերով լվացվեր՝ չէր հանգստանար:

Մաքրասեր Կոմիտաս ճանճի ոխերիմ թըշնամի էր: Բացի սենյակին պստուհաններէն, դուռն ալ բարակ շղարշով փակած էր: Կարծի տեսնել զինքը, երբ հանկարծակի կատակալի բառերով կհարձակեր դռնն ներս մտնողին վրա պոռալով. «Ե՛տ, շո՛ւտ մտիք»: Եվ եթէ այդ միջոցին ճանճ մըն ալ ներս մտներ, ան չէր հանգստանար, մինչև որ դուրս չհաներ զգվելի միջատը, և բոնը-

ված ճանճը անխեղով, կըսեր. «Ի՛նչ, նորին նոտաներու սրբազրի՜չ եկար...»: Անգամ մըն ալ մեր սենյակին մեկ ճանճը սատկեց՝ նեղու համար, ապակին կտրեց և իր սրամիտ խոսքով ըրածը արդարացուց ըսելով. «Այս անխեղալ ճանճը իր միկրոսով մեր երկուքին գլուխը կարող էր ուտել...»:

Կոմիտասի ամենասիրած գլուխքին մեկն էր Քանաքեռը. թե՛ Արովյանի տնակը, թե՛ գլուղեն դիտված հայրենի անհորիզոն տարածութիւնները կողեւորէին իր երգելու տրամադրութիւնները: Ես այնքան հափշտակված էի իր քաղաձայն երգերին, որ երբեք չէի մերժեր միասին Քանաքեռ երթալ, հակառակ անոր, որ ես իրեն պէս մղուններ քայլու համար տոկուն և առույգ չէի: Այդպիսի օրեր, ներշնչվելով, անվերջ կերպեր և հայրենի բնութեան դիմաց լուսաստեղծութիւններ կհորինէր և երբ իր բանաստեղծական շնորհքը կզովէի, ինքզինքը կհեղներ և իր կուշտ թիծաղի խրոխտ ձայնը վարձագանքեր մեր շուրջը:

Անգամ մը, դարնանային արևածագին հետ ճեմարանն ճամբա ելանք դեպի Քանաքեռ, այցելուու Խաչատուր Արովյանի տնակը: Այդ օրը սովորականն ավելի երկար տևեց մեր ճամբորդութիւնը: Կոմիտաս հանկարծական որոշեց միացալ ուժերով դաշտային ծաղիկներին փունջ մը կազմել և նվիրել ի հօրհտակ Արովյանին: Որքան անմոռանալի էր անոր ողևորութիւնը, երբ երեխայի մը պէս կթռկոտեր աչ ու ձախ դաշտային արահետներու երկայնքին, ամեն մեկ նոր ծաղիկի մը տեսքին իր հոգի ձայնով ինձ ալ իր մոտ կանչելով: Կեսօրին հասանք Արովյանի տնակը: Լոռութիւնը համատարած էր այնտեղ: Կոմիտաս մեր միացալ փունջերը գորդորանքով տեղավորեց տնակի պատուհանին առջև: Ինչպէս միշտ, նորին շրջեցանք տնակին բոլորտիքը, նստանք անոր մուտքի սանդուխներուն վրա և մեր խոհերուն հետ նախաճաշեցինք: Կոմիտասի փափաղով բարձրացանք տնակի կտուրը: Գարնանային զարթոնքը զարդարեր էր անոր անմահութիւնը: Թռչուններու երամակներ կճովողէին մեր շուրջը: Կոմիտաս իր ապրումներու ամենաշքեր հուզումով երգեց «Մ՛վ մեծասքանչ դու լեզուն...»: Անոր հոգի ձայնը արձագանքեց ամեն կողմ: Մեր վերադարձին, դուռ ու դրացի, նեղիկ փողոցներու տնակներու շնիքներուն առջև հավաքված, իրարու կրացատրին անոր էջմիածնի վանքին ձայնը Կոմիտասը ըլլալը:

Աշնանային օր մըն ալ Քանաքեռի բարձունքին նստած կհիանայինք մեր առջև պարզված բնութեան տեսարաններու վրա: Հանկարծ մոտակա ձորին աղջկան մը գեղջուկ մեկ երգին ձայնը առինք: Կոմիտաս,

ըստ իր սովորության, զրոյանեն թուղթի կտոր մը և մատիտ մը հանեց և սկսավ հայկական ձայնախելներով նոտագրել:

Երեկոյան մեր ռեմարան վերադարձին ընթերի ժամն էր, և մեր ամբողջ օրվան երկար ճամբորդութենէն վերջ անդիմադրելիորեն սրված էր մեր ախորժակը: Բայց ի՞նչ զարմանք. Կոմիտաս տետրակ մը բերելով, սկսավ իր ձայնագրած երգը մաքուրի տունէլ: Երբ առաջարկեցի իրեն ձաշել և հետո աշխատիլ, ան պատասխանեց. «Ինչն մարտի յառնեմ երդի ելնէնէրը, փշրանք մըն ալ կողորդես վար շերթարաւ: Իս այդ օրը հասկըցաւ, որ Կոմիտաս սովորական մահկանացու մը չէր»:

Կոմիտաս օր մը ինծի բռավ. «Հայկական 50 հատ խաղ կա: Իս կկարծեմ, որ հայոց ձայնաշարը քանի մը ձայն կպարունակի իր մէջ: Իմ ուրախությամբ վրա բերավ. «Իս գաղտնիքը գտե՛ր եմ...»:

Օր մը Կոմիտասին հարցուցի, թէ ինչո՞ւ հայկական ձայնախելներով կգրեր: Ան պատասխանեց. «Եվրոպական 5 պնայնոր թուղթ հանպատրաստից ես ուրկե՞ր գտնեմ. իսկ հայկական ձայնախելները որե՛կ թուղթի վրա անմիջապէս կգրեմ...»:

Օր մը Կոմիտաս ինձ պոլսական շարդիներ երգել տվաւ և ժողտանտրին մեջ սկսավ զրել:

— Հայր սուրբ. — ըսի անոր. — Եվրոպացիները արհամարհանում կլսեն այս շարդիները և կծաղկեն:

— Աստուծո հիշանքի եղանակներ են և աստուծո ձեռնը տվողները հանճարներ են, — պատասխանեց Կոմիտաս:

Կոմիտաս Հակոբ Պարոնյանի երգիծարանական արվեստը այնքան կսիրեր, որ անոր գործերն շատերը անգիր գիտեր:

Կոմիտաս և ես կոմիգմի (երգիծանքի) վարպետներ նկատված էինք: Ի՞նչ ուսուցչական շանդիստի ժամերուն՝ ռեմարանի մեր ընկերներին կփնտրվէինք: Արեւմտեան և ես «գետրվելով», Պաղտասար աղբարի դատատանական ժողովը կնկրկայացնէինք. և վերջի վերջը, քով-քովի, մեր քայլերը համաչափ ենտելով, պոռայով դռնէն ներս կմտնէինք...:

Կոմիտաս օր մը օպերետա մը գրեց. Հակոբ Պարոնյանի Ռադարավարության վնասներուն և աշակերտներուն սորվեցուց: Ներկայացումը անհաջող անցավ և վատ տպավորություն թողուց: Ինչ և զսով առաջինը և վերջինը:

Կոմիտաս սովորություն ուներ առանց բարձի, կարծր թախտի մը վրա քնանալու, մաշտիւնը ուղիղ վիճակի մեջ պահելով:

Երեք տարվան մեջ անդամ մը միայն տեսա Կոմիտասի կատաղի դայրույթը. — Ժեմարանի ցած պատշգամբին մեջ Կոմիտասն ու ես մտերմորեն կխոսեինք: Մեզմէ ճիշ մը անդին ուսանողները հավաքված կերգէին, իրարմե ետ ու առաջ, ցած ու բարձր ձայնելով: Այդ րոպէին, առաջին անգամը ըլլալով, ես դիտեցի անոր կատաղի բարկությունը: Ինչն օրս ընձ մոտեցաւ չղայնութենէն անոր վզի երակներուն մատնաչափ ցղվելը:

Իմացեր եմ, որ 1906-ին Փարիզի մեջ Կոմիտասի ցուցադրական մեկ համերգն վերջ. Ֆրանսացի հայտնի կոմպոզիտոր դաշնակահար Կլո-Դերուսին ծունկի դալով կհամարուէր Կոմիտասի ձեռքերը, լսելով. «Հանճարեղ հայր Կոմիտաս, Ձեր երաժշտական հանճարի առջև կխոնարհեմ...»:

Կոմիտասի ձայնը մեծ դիպագուն ուներ: Բնոյին զտնված միջոցին հայ ժողովրդական երգերը անձնապէս ցուցադրած համերգն վերջ. Բնոյինի օպերայի սոնորներ անձամբ կհրավիրէ գինքը իրեն օպերայի պիսավոր երգիչ և կխոստանա րաջատիկ վճարում: Կոմիտաս կպատասխանէ անոր. «Իմ երգչի կարողությունները մէկ նպասակի միայն պիտի ծառայեն — ժողովրդիս էլզն ու երաժշտությունը ծանոթացնել երաժշտական աշխարհին»:

1899-ին Կոմիտաս էջմիածնէն արտասահման երթալու առնել, իրմէ խնդրեցի, որ «Բաց նամակ» հավաքածոյիս համար, անցած յոլոր տեղերն պատկերազարդ րացիկներ ուղարկելու Կոմիտաս հարգեց իր խոստումը. 7 հատ պատկերազարդ րաց նամակ ուղարկեց: 7-րդ րացիկը մեր սիրաջերմ ընկերական թղթակցութեան վերջին հիշատակը եղաւ...:





ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ ՈՐՈՒՄԵՆ ԱՍՏՂԱԲԱՇԻՆ



րևմտաեվրոպական գիտնականներին շատերը, գիտություն պատմության հարցերը լուսաբանելիս, աշխատում են աղավաղել պատմական ճշմարտությունը. նրանք բոլոր գիտական հայտնագործությունները վերագրում են արևմտյան գիտնականներին, թեև նրանց շատ լավ ծանոթ է, որ գիտական հայտնաբերումների մեծագույն մասը կատարված է եղել դարեր առաջ արևելյան ժողովուրդների գիտնականների կողմից, և արևմտաեվրոպական գիտնականների որոշ հայտնաբերումներն էլ կայացել են միմիայն այդ հայտնաբերումները ճարպիկ կերպով սեփականացնելու մեջ:

Այդ բոլորը կատարվել են ձեռքով նպատակով. ա) ցույց տալ, որ արևելյան ժողովուրդները իբր թե լիարժեք չեն և, հետևաբար, նրանք գիտական հայտնագործություններ կատարելու ընդունակ չեն, բ) որ արևմտյան ժողովուրդները որպես թե հանդիսանում են քաղաքակրթության իսկական ներկայացուցիչներ, որոնք աշխատում են արևելյան ժողովուրդներին կուլտուրային առաջ շարժել:

Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության ազգային քաղաքականության շնորհիվ, վերջին ռասանամյակներում, ստեղծվեցին ազգային գիտական կադրեր, որոնց ուսումնասիրությունների շնորհիվ երևան քերվեցին բազմաթիվ փաստեր այն մասին, որ գիտական մի շարք հայտնագործությունների առաջնությունը պատկանում է արևելյան ժողովուրդներին:

Գիտական ուսումնասիրությունների հիման վրա ներկայումս ապացուցված պիտի համարել, որ հանրահաշիվը հնում բավականին զարգացած է եղել Միջին Ասիայում (ուլթրեկների և տաճիկների մոտ), Եռանկյունաչափության հիմնական թեզիսները մասին առաջին անգամ գրել է և դասավանդել ակադեմիկոս ադրբեջանական գիտնական Մուհամմեդ Նասր է-Դին ալ-Տուսին (1201—1274

թ. թ.), որը հայտնի է որպես աստղաբաշխ, մաթեմատիկոս և հանքագետ. նրա թողած աշխատությունների թիվը հասնում է 100-ի, որոնցից «Թախրիքի էվգիդիս» (հայտնի երկրաչափ էվկլիդեսի) «Սկզբունքներ» շարադրությունը) և «Շախուլ Գիտա» (եռանկյունաչափության հիմունքների շարադրություն) ռեցենզի են հսկայական նշանակություն մաթեմատիկական մտքի զարգացման վրա:

Այդ ուղղությամբ հիշատակության արժանի են նաև Ուլուլ-Բեկի աստղաբաշխական աշխատությունները¹:

Այստեղ մենք պիտի հիշատակենք և հայկական անցյալ գիտական մտքի և գիտնականների մասին, որոնք հարստացրել են գիտությունը մի շարք ալքիմիկների մաթեմատիկական, աստղաբաշխական և այլ աշխատություններով:

Ժամանակագրական կարգով առաջին տեղը պատկանում է 7-րդ դարի հայտնի մաթեմատիկոս, աստղաբաշխ և աշխարհագրագետ Անանիա Շիրակացուն: Այս դարի են մի շարք նշանավոր գիտնականներ— Հովհաննես Կոզեռնի (11-րդ դար— տոմարագետ), Հովհաննես Սարկավազը (12-րդ դար— տոմարագետ և մաթեմատիկոս, «Անկյունավոր իվերսի հեղինակը), Մխիթար Անեցին (13-րդ դար— թողել է մաթեմատիկական և աստղաբաշխական գրվածքներ), Վանական Վարդապետը (13-րդ դար), Հովհաննես Պուլզը՝ Ջորժորեցին (13—14-րդ դար— աստղաբաշխ) և մյուսները: Վերև հիշված հեղինակները ունեն նաև այլ գիտությունների գծով աշխատություններ, բայց մեզ, այս հոդվածում, հետաքրքրում են նրանց աստղաբաշխական և մաթեմատիկական աշխատությունները:

1. Шахрул Тага, Баку, 1952 г., հրատարակություն Ադրբեջանական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի:

2. Астрономическая школа Улуг-Бека, 1952 թվականին արժանացավ Ստալինյան մրցանակի:



Անանիա Շիրակացի

(Գործ՝ Լանդակալուծ Քաղալյանի)

(Ներկայացված Ռուսաստանի Գեղարվեստի և Գրականության Միության Մեծ խորհուրդին, ԽՍՀՄ-ի Գեղարվեստի և Գրականության Միության Մեծ խորհուրդին, ԽՍՀՄ-ի Գեղարվեստի և Գրականության Միության Մեծ խորհուրդին)

Մեր նպատակն է այստեղ կանգ առնել Անանիա Շիրակացու աստղարաշխական աշխատությունների վրա:

Շիրակացու գլխավոր աշխատությունն ամենայն պարզությամբ պատկերացնում է այն, որը մշակել է պրոֆ. Պ. Պ. Արտեմյանը: Այնուհետև Արտեմյանը և որոշ հրատարակիչներ է հայտնի դրել Մ. Մ. Մ.

Պետական մատենադարանի կողմից³ Այդ աշխատության աստղարաշխական մասը բացառությամբ է հետևյալ 10 գլուխներից:

3. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտության և աստղագիտության, Երևան, 1941 թ.

1. Անանիա Շիրակունոյ Համարողի առ խոստացեալսն
2. Յաղագս երկնի
3. Յաղագս երկրի
4. Յաղագս ծովու
5. Յաղագս երկնային դարդուց
6. Յաղագս որ ի մէջ երկնի և երկրի նն շարժմունք և տեսութիւնք
7. Յաղագս կաթին ծրոյ
8. Յաղագս հրախալսյին աստեղացդ
9. Յաղագս լուանի
10. Յաղագս արեղական:

Բացի այս հիմնական աշխատութիւնից, աստղաբաշխութեան դժով նրան են պատկանում նաև մի շարք փոքր գործեր, ինչպես «Յաղագս աստեղաբաշխական երկրաչափութեան», որտեղ նա աշխատել է որոշել երկնային լուսատուների հետազոտութիւնները երկրից և այլն:

Նախօրոք կանգ առնենք մի քանի խնդիրների վրա, որպեսզի ընթերցողը կարողանա ազատ կողմնորոշվել:

Առաջին խնդիրն այն է, որ Անանիա Շիրակացին այդ աշխատութիւնը գրել է ոչ թե որպես նեղ մասնագիտական հարցի նվիրված գործ, այլ որպես դասագիրք՝ իր ուսանողների համար: Այդ տեղեկագրութեան դասագիրքը է 7-րդ դարից և ընդգրկում է իր մեջ այն նյութերը, որ 7-րդ դարի հայ աստղաբաշխ դասաւորուն նպատակահարմար է համարել ուսուցանել իր ուսանողներին: Պարզ է, որ այդ աշխատութիւնն ավելի հետաքրքրական է, քան թե մի այլ աշխատութիւն: Սակայն, ինչպես հայտնի է, սովորական դասագրքերում բերվում է այն նյութը, որին պիտի տիրապետեն աշակերտները, այսինքն կրթութիւն ստացող երիտասարդութիւնը: Ամեն մի դասագիրք կազմող, ընկալող է, նյութը շարադրում է այնպես, որ օգտագործած լինի իր ժամանակաշրջանում գոյություն ունեցող լավագույն հիպոթեզները (վարկածները) կամ տեսութիւնները, ըստ որում շարադրում է այն տեսանկյունով, որին ինքը, հեղինակը կողմնակից է: Մեր եզրակացութիւնն այն է, որ այդ աշխատութեան մեջ Անանիա Շիրակացին պետք է օգտագործած լինէր և այլ հեղինակների նյութերը: Նա դասագիրքը գրելիս պիտի անպայման օգտագործած լինէր իր ժամանակաշրջանի հայտնի բոլոր հեղինակների աշխատութիւնները որոշ հարցերի լուսարանման գործում, ինչպես այդ արվել է բոլոր դարերում և կատարվում է 20-րդ դարում ևս դասագիրք կազմողների կողմից: Պարզ պիտի լինի մեզ համար, որ նրա աշխատութեան մեջ կան հատվածներ, ուր զգացվում է այս կամ այն հեղինակի ազդեցութիւնը: Մի՞թե 20-րդ դարում աստղաբաշխութեան դասագիրքը պատ-

րաստողներն իրենք են կատարում բոլոր դիտումները կամ ձևակերպում բանաձևերը: Իհարկե՝ ոչ, շեղակապես մենք իրավունք չունենք այդ հարցում մեղադրելու Անանիա Շիրակացուն: Ընդհակառակը, մենք այժմ պիտի նշենք, որ Շիրակացին հավաքողական այդ աշխատանքը կարողացել է կատարել հաջող, եվ այդ՝ նրա մեծ ծառայութիւնն է դիտութեան առջև:

Երկրորդ խնդիրն այն է, որ Շիրակացու աստղաբաշխական սխտեմը դեռ երկրակենտրոնն (դեոցենտրիկ) է և ոչ թե արեակենտրոնը (հելիոցենտրիկ): Չմոռանանք դարը, երբ գրել է Շիրակացին:

Եվ, վերջապես, երրորդ խնդիրն այն է, որ Շիրակացին 7-րդ դարի հեղինակ է և ուսուցիչ: Նա, պարզ է, պետք է հետևեր այն մատենագրերին, որոնք այդ դարում համարվում էին ճանաչված հեղինակութիւններ, ինչպիսիքն էին՝ Բարսեղ Մեծը, Գրիգոր Նազդիանացին, Հովհան Ռակեբերանը և մյուսները: Անել, որ Անանիա Շիրակացին նրանց հեղինակութիւնը չի ճանաչել և որոշ հարցերում չի աշխատել հետևել նրանց և օգտագործել նրանց տեսակետները, իհարկե, կլինէր ծիծաղելի: Նա անպայման արել է այդ: Ընդ առաջին իսկ գլխում, ուր հարց է դրվում, թե ի՞նչն է սկզբից գոյություն ունեցել — նյութը (մատերիան), թե՞ հողին — նա ընտրում է երկրորդը, հետևելով Բարսեղին:

Սակայն Շիրակացին, խուսափելու համար իր ժամանակի պաշտոնական գրաքննչութիւնից, հաճախ դիմել է ներամտութեան: Նա շարադրում է քննարկվող հարցի վերաբերյալ բոլոր կարծիքները, հայտնելով, որ «բարի փիլիսոփայքն» այսպես են կարծում, իսկ «չար փիլիսոփայքն» — այնպես, եկեղեցական հեղինակներն այսպես, և եզրակացութիւնը թողնում ընթերցողին:

Չնայած այս ամենի, միջնադարյան գրաքննչութիւնն ամենախիստ կերպով կրճատել է նրա աշխատութեան որոշ գլուխներից շատ կարևոր հատվածները, որոշ միջամտութիւններ արել: Ահա այս է պատճառը, որ Անանիա Շիրակացու շարադրութիւնը տեղ-տեղ կտրված է, նրա մեջ տեղ-տեղ նկատվում է մտքերի հակասութիւն: Գրաքննչութիւնն ամեն ջանք դործադրել է, որպեսզի մեծ գիտնականի աշխատութիւնը «խմրագրվի» իր ժամանակի պաշտոնական տեսանկյունով:

Շիրակացու մեզ հասած տեքստերից ամենաանհաջողը պիտի համարել այն տեքստը, որն իր ժամանակին հրատարակել է պրոֆ. Բ. Պատկանյանը 1877 թվականին «Արեւոյ թանից» վերնագրի տակ: Ինչպես նշեցինք սկզբում, մենք օգտվել ենք պրոֆ. ղոկտ. Աշոտ Արաւհամյանի հրատարակած տեքստից և առաջնորդվել նրանով, որպես ամեն-

նահապանակներ (ամենահապանական ասե-
լով լպիտի հասկանալ իսկական քնադրի
տեղատր, այլ՝ նրան ամենամոտ եղողը)։

Մենք, իհարկե, կանդ չենք առնելու քրե-
նարկվող աշխատության մեջ արժանիքավոր
գիտական բոլոր հարցերի վրա։ Մենք ցան-
կանում ենք ընթերցողին ծանոթացնել Երա-
կացու աստղաբաշխական հայացքի հետ։

Անանիա Երակացու սխտեմը, ինչպես
հիշեցինք արդեն, երկրակենտրոն է։ Ե՛նչ ձև
ունի ինքն երկիրը։ Ըստ Անանիա Երակա-
ցու՝ երկիրը զնդածն է. «Եւ եթէ որ կամիցի
օրինակ տեսական գարտաքնոցն լսել՝ իրր թէ
զկայա երկրի նմանեցուցեալ, ինձ ի դէպ
թո՛ւ ասացեալն՝ իբրեւ ձու, որդկս նորա զե-
ղինն ի միջին զնդածն կառուցեալ կայ ե
սպիտակն շուրջ զնովաւ. և խեճեալս պատ
առեալ զամենայնիս, նոյնպէս երկիրս ի մի-
ջու կառուցեալ կայ. և որ շուրջ զնովաւ ե
երկին պատ առեալ զամենայնիս»¹։ Չվի զնդ-
նուցը միշտ զնդածն է կամ նրան շատ մոտ։

Մինչև Խաչակ նյութներ, գիտնականնե-
րը պարզ չէին պատկերացնում, թէ ինչու՝
երկնային մարմինները վայր չեն ընկնում։
Այն եզրակացությունը, որ ամեն մի մարմին
անպայման վայր պիտի ընկնի, մարդկու-
թյունը վերցրել է ամենօրյա կյանքի փորձից.
երկրի վրա ամեն մի նետած մարմին վայր
է ընկնում և հետեապես մարդիկ կարծում էին,
որ երկիրը, յուսիսը և արեգակն ու մոլորակ-
ներն ևս նույն հասկությամբ պիտի ունե-
նան և ցած ընկնեն։ Մարդկության միտքը
զբաղված էր այդ մարմինների համար հենա-
րաններ ստեղծելու վրա։ Սկզբում պարզ և
շղարգացած միտքը եկել էր այն եզրակացու-
թյան, որ, օրինակ, երկիրը պիտի հաստատ-
ված լինի մի հսկայական, մեծ կենդանու
վրա։ Հնդիկները որպես հենարան ընդու-
նում էին փղեր, ուրիշ ժողովուրդները՝ եղ-
ներ, կրիաներ և այլն։

Անանիա Երակացին տալիս է շատ հե-
տաքրքիր լուծում. «Բանպի երկիր խրով ծան-
րութեամբ հակէ ի վայր իջանել»²։ Հողմն իւ-
րով ուժգնութեամբն ջանալ ի վեր բերել զնա-
ւ, ո՛չ ծանրութիւն երկրի թողացուցանէ ի վեր
բերել. և ո՛չ ուժգնութիւն հողմայն թոյլ տալ
ի վայր իջանել։ Եւ այնպէս զհաստարակչի
կէտն կայեալ կայ։³ Երակացին ընդունում
է, որ գոյութիւն ունեն երկու հակառակ,
բայց հավասար ուժեր. 1) երկրի ծանրու-
թիւնն է, որ նրան պիտի վար իջեցնի, և 2)
ինչ որ նույն ծանրության ուժին հավասար,
բայց հակառակ ուղղված՝ հողմի ուժ, որն
աշխատում է երկիրը բարձրացնել վերն և

այդ երկու հավասար և հակառակ ուղղված
ուժերի շնորհիվ հավասարակշռության կենտր-
ոնը գտնվում է երկիրը, մնում է իր տեղում՝
տիեզերքում։ Այդ տեսակետը հետաքրքիր է
այն իմաստով, որ միջին դարերի վերջում
և վրոպական գիտնականների մի խումբ ևս
առաջ քաշեց այս հիպոթեզը (тесная связь)։

Եթե երկիրն ունի զնդի ձև, ապա դրա հետ
կապված անմիջապես հարց պիտի առաջա-
նար հակոտնյանների (антитеза) մասին, որն
Անանիա Երակացին անվանում է այսպես.
«Եւ թէ զոն ի ներքոյ երկրի մարդիկ և այլ
կենդանիք, որք ընդդիմոտունը են մեզ՝ որ-
պէս ճանճք պիտեճորով պատեալք, նոյնպէս
և մարդիկ զերկրաւ և յամառեալ պնդին ա-
սելով՝ եթէ ո՛չ էին մեզ ընդդիմոտունը ներ-
քոյարեակք, ո՛ւմ արդեօք արեգակնդ տայր
յոյս դէս աւուրն, յորժամ ստուերաւն զմեզ
զիշերացուցանէ, զի՝ յանսգոտս արեգակն
ծախել զընթացս անհնար է ասելու։ Հարցը
տրված է շատ կոնկրետ կերպով։ Այդ հար-
ցադրումից պարզ երևում է, ա) որ Անանիա
Երակացին միանգամայն համոզված է, որ
երկիրը պռնդ է և բ) որ արեգակը նման
զնայքում կարող է լուսավորել կես օրվա ըն-
թացքում զնդի մեկ կեսը և կես օր էլ երկրա-
գնդի մյուս կեսը—երբ առաջին կեսը ծածկը-
ված է լինում իր սովորով, հետեապես այդ
մասում զիշեր է, իսկ մյուսում՝ ցերեկ։

Աշխատության այդ մասը շատ հետաքրք-
րաբան է, որից երևում է, որ Անանիա Եր-
ակացին տեղ-տեղ համարձակվում է դուրս
գալ ճանաչված պաշտոնական տեսակետից.
«Թէպէտ և յսէի ի մարդաբնից, և յամենայն
աստուածային գրոց, ի վարդապետաց եկե-
ղեցոյ, եթէ ո՛չ զոն այլ ներքոյարեակք կեն-
դանիք, սակայն ևս հաւանեալ էի ընդդիմո-
տունս մեզ լինել։ Եւ քստ իմոց խորհրդոցս
դաստուածային քանսն ձեանալ համարէի.
Եւ արդ, մի՛ գիտ եպեմէք, սիրելիք, գիտէ
ծածկագէտն, զի ո՛չ ստեմոն։ Այս տողերում
Անանիա Երակացին շատ պարզ կերպով
շարադրել է իր տեսակետը և կարծես թե
հարցը լուծված պիտի համարվեր, ոակայն
հետեւյալ տողերում թեն չի հրաժարվում իր
տեսակետից, բայց և այնպես գրել է, որ ու-
սուցիչը խորհուրդ է տվել իրեն զեկամբարվի
Ամփրայոսիոսի մեկնաբանությունից։ Միջ-
նադարյան իսլամը իրականության մեջ,
պարզ է, որ Երակացին այլ կերպ վարվել
չէր կարող։

Երակացին իր աշխատության ծովերին
նվիրված գլխում ժխտում է այն տեսակետը,
որ իր երկիրը որպես կղզի լողում է տիեզե-
րական ովկիանոսում (որը հանդիսանում է

¹ Անանիա Երակացի, Տիեզերագիտութիւն և աս-
տար, էջ 10։

² Նույն տեղում, էջ 9—10։

³ Նույն տեղում, էջ 12։

⁴ Նույն տեղում, էջ 13։

որպես հենարան երկրի) և հարցը ճշտում է այս ձևով. «Փիլիսոփայքն բարիք ասացին զծովէ, եթէ այս իսկ է, որ ի վերայ երկրի է և ի մէջ, ընդ որ շրջին մարդիկ, և ո՛չ գոյ այլ ծով արտաքոյ երկրի»⁸։ Դրանից հետո նա բացատրում է, որ ծովեր պիտի համարել այն շրային ավազանները, որոնք միացված են իրար հետ, իսկ այն ավազանները, որոնք թեև ունեն և՛ աղի ջուր և՛ մակերես, բայց մեկուսացած են մյուսներից, պիտի համարել ծովակներ (լճեր)։

Ինչպես տեսնում ենք, այս հարցում Շիրակացին կանգնած է եղել այն տեսակետի վրա, որին կողմնակից ենք և մենք այսօր. «Են և այլ բազում ծովակք որ ո՛չ են յաշխարհածովէ, թէպէտ և զաղի և զդառն ճաշակ ունիցին, և աւագօք սահմանեալ զտանիցին ըստ օրինակի կերպարանաց մեծի ծովուն, սակայն ո՛չ է մարթ զծովակսն ծովս կոչելու... Եւ ո՛չ մեր աշխարհիս ծովակ զոր կոչեմք Բզնունեաց, և ո՛չ այլքն որ յարեւել են նոյնանմանք։ Զի սոքա, զորս թոնցաքս, ծովակք են և ո՛չ ծովք, թէպէտ և ասեն ոմանք զծովէն որ անուանեալ կոչի Հիւրկանիա, և զնորուն ընկերն որ անուանեալ կոչի Ասպիայ թէ զատեալ մեկնեալ են սահմանօր ի բուն ծովէն»⁹։

Այնուհետև հեղինակը հարց է դնում, թե ի՞նչպես է լինում, որ ծովերն ընդունելով մեծ քանակությամբ դետերի և անձրևների ջրերը, չեն լցվում և ավերից դուրս գալիս։ Եվ նա բացատրում է. «Եւսկ փիլիսոփայք բարիք այսպէս ասացին վասն միակշիռ կալոյ ծովու. թէ ջերմութիւն արեգականն ծծէ և քաշէ զքաղցունս և զնորքսն և զթեթեան զուրդեան հանէ յօդն, Եւ թանձուքն և ծանուցն անդէն մնան, այսինքն է մորեալքն և պղտորեալքն։ Եւ որ անդէն մնան, են աղիքն և դառինքն։ Եւ վասն այնր է ծով միակշիռ և ժահահոտ, զի գոլորշին որ ձգեցաւ ջերմութեամբն արեգական՝ պակասեցոյց զյաւելուածն և տարաւ զքաղցրութիւնն»¹⁰։

Այս հարցը լավ լուսարանելու նպատակով, Շիրակացին կանգ է առնում մի շատ հետաքրքիր փորձի վրա. «Ասան օրինակ և ի նաւավարաց որոց պակասի ջուր ի ծովու, առնուն ասէ ջուր ծովուն զաղին և զդառն և արկանեն ի կաթսայ և եռացուցանեն ի հրատի, և դնեն սպունգս մեծամեծա խփունս կաթսայիցն. և ի խոնաւութենէն զոր առնուն

ուպունգքն ի գոլորշոյն՝ ջուրս քաղցունս ժողովեն ի նոցանէ քամելով, և այդպիսի հնարիւք առնին դարմանք կենաց նոցա ի նեղութենէ ջուրցն նուազութեան յորժամ պակասիցի ի ծովու»¹¹։

Այս կապակցությամբ Անանիա Շիրակացին ծաղրի է ենթարկում և խարանում այսպես կոչված աստղագետներին (աստղադուշակներին)։

Ի միջի այլոց «Մնացորդ բանիցս տեքստում, որը հիշատակեցինք վերևում, այս զուրք համարյա 90 տոկոսով կլուծուած է, իսկական տեքստը բերված է առաջին անգամ «Տիեզերագիտութիւն և տոմարս գրքում։ Պարզ է այսօր մեզ համար, որ նման բովանդակութեամբ զուրք շատ անհանդուրժելի պիտի լիներ խավարամիտ մարդկանց համար։

Մաղրի ենթարկելով աստղադուշակներին՝ նա իրավացիորեն հարց է դնում՝ եթե ամեն ինչ կախված է աստղերի դասավորութիւնից երեխայի ծնվելու ժամանակ և եթե դրանով ամեն ինչ արդեն կանխորոշված է, այն դեպքում «Անվերդ են դարձեալ և դատաւորք, որ պատուեն զբարեգործն, և առնեն զպատիժս չարագործացն արդար դատաստանօք, քանզի ըստ բախտից ծննդոցն ժպրհութիւն և շարութիւն գոգոյն իւրեանց կամացն, և ո՛չ անօրէնութիւն սպանողին իւրով յօժարութեամբն, զի ո՛չ թէ և կամէր արգելով զձեռս իւր ի սպանելոյ (1), կարէր ապրել ի շարիսն գործելոյ. զի բնութիւն ծննդեան իւրոյ հարկ առնէր նմա զալ ի գործ սպանութեան։ Նա և մեծավաստակն արուեստագիտաց ընդունայնասոյր է և վայր՝ և աշխատութիւն մշակացն անօգուտ էր. զի իբրու ոչ կարկառուցուն զձեռս իւրեանց ի գործ գայցէ դարման կենաց իւրեանց առանց մտկան շրջելոյ. և վաճառականին այն կամք էին թէ զայցեն զիպիցեն նմա շահք բազումք մեծութեանց յորժամ խաղաղ նստիցի յաշխատութենէ ճանապարհաց, եթէ ի քաշխից բախտից ժողովէին նմա մեծութիւնքն ձրի. և թէ ընդ արդարութեան զոր գործէին մարդիկ ո՛չ լինէր նոցա պատիւ և պարգև, և ո՛չ պատիժ և դատապարտութիւն չարագործացն, ապա ի զուր և ընդունայն են յոյս քրիստոնէից, և առանց նահանջելոյ անձանց ընթանային ամենեքեան յամբարշտութիւն, զի ո՛չ գոյր վրէժխնդիր, որ խնդրէր վրէժ չարեացն գործուց, քանզի ո՛չ մեղով կամաւ լինին, որպէս ասեն մոլորեալքն»¹²։

8. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 15։

9. Նույն տեղում, էջ 17։

10. Նույն տեղում, էջ 17—18։

11. Նույն տեղում, էջ 18։

12. Նույն տեղում, էջ 15։

Այս հարցում պիտի ասե՛լ, որ Անանիա Շիրակացին այնքան էլ ինքնուրույն չէ. նա ընդօրինակել է այս բոլոր բրիտանական զաղափարախոսության հիմնադիրներին, տվյալ դեպքում՝ Բարսեղ Մեծի աշխատություններին¹³։ Ի դեպ, նրանից՝ Բարսեղ Մեծից ընդօրինակել է նաև 5-րդ դարի հեղինակ Ոգնիկ Կողբացին։

Վերև հիշված դիմում Շիրակացին կանոն է առել այն հարցի վրա, թե ի՞նչ է անհրաժեշտ բույսերի և կենդանիների դարդացման համար, նրա կարծիքով — այդ օգն է, շուրջ և լույսը։ Ձի սղն ունիցի գնովություն և լույսն զարեղակնային մասն հրոյն. և ի ձեռն այս երկոցունց նուր և անօտ սարերացս կենդանաձենայ լինի երկիր օգնականությունը՝ ձուլային ջրով բոյսը խոտոց և պատուրք ձուտոց. և շարժուն կենդանաւոնակը շնչաւորը. և ամենայն սողուն և հետեակը, թռչուն և սեռականը, դադանը, անասունը, նուազությունը և անմոտը, ապականությունը մարմնոյ, լրմոնը և պականությունը ուղղոց անասնոց և մարդկան, նոյնպէս արեանց և շնչոց առ ի լինելություն և ապականություն գի լինելություն իցէ սկիզբն ապականութեան, և ապականություն դարձան անդէն իցէ սկիզբն լինելութեան։ Ձի այսմ անվնաս հակառակությունէ՝ աշխարհ առցէ, գտեւություն¹⁴։

Շիրակացու արտահայտած վերջին մտքերը կարելի է համարել միանգամայն գիտական, քանի որ՝ օգը, ջուրը և լույսն անհրաժեշտ պայմաններն են երկրի վրա, որոնց առկայութեան դեպքում կարող է զարգանալ թե՛ բուսական և թե՛ կենդանական կյանքը։

Անվիճելի է նույնպես Շիրակացու վերջին նախադասությունը, թե՛ ապականությունը սկիզբ է լինելության և լինելությունը նույնպես սկիզբ՝ ապականության և այդ երկսի հակադրությունից է կախված աշխարհի անվողությունը։

Անանիա Շիրակացին իր աշխատության հետևյալ գլուխը նվիրել է այն երևույթներին, որոնք տեղի են ունենում «երկրի և երկրի միջև», այսինքն՝ ամպամածությունը, ամպրոպին, կարկուտին, կայծակին, սրտախն և բնական այլ երևույթներին։ Այժմ այդ բոլոր հարցերով զբաղվում է գիտության հաստիք մի հյուղ՝ օդերևութաբանությունը, իսկ հին և միջին դարերում զրոնցով զբաղվում էր աստղաբանությունը։

Թեև այդ դիմում արձարծված հարցերը շատ հետաքրքրական են, բայց մասնագետ

չլինելով, չենք ուզում ծանրանալ դրանց վրա։ Միջանկյալ ձևով միայն պիտի նշենք, որ այդ դարերում հայտնի է եղել, որ լույսի արագությունն անհամեմատ ավելի մեծ է, քան ձայնի արագությունը։ Այսպես, Անանիա Շիրակացին գրում է. «Բայց մեք, որ յառաջ հուրն տեսանեմք և ապա դորոտումն լսեմք, այս է պատճառն, զի թևալտ և յամպոյն գոյդ ելանէ ձայնն և հուրն, այլ մեզ հուրն առաջոյ երեւի, վասն զի ավն նրազ է քան գունկն, և ակն փոյթ կարէ տեսանել ի հետին գհուրն յորժամ յամպոյն ելանէ, իսկ զձայնն ռմկն ոչ կարէ լսել ի հեռիւ, մինչև տ՛շ փ մօտ հասանէ, իսկ զգոյմանէ աստեղացոյ ստին»¹⁵։ Թէ հոգմն այն ի պարզ ժամանակի բախտ ինքն գինքն և հուրն ելանէ որովս ամպոյն, բայց նոսր ելանէ ի հոգմոյն և ոչ որպէս յամպոյն¹⁶։ (Այդ շրջանի դիտնականներին, իհարկե, հայտնի չէին լույսի և ձայնի իսկական արագությունը, որ ճշգրիտ գործիքներով ու բազմաթիվ փորձերից հետո միայն որոշվեց հետագա դարերում՝ 18—20-րդ դարերում — լույսինը՝ մոտ 300.000 կիլոմետր մի վայրկյանում, իսկ ձայնինը՝ մոտ 330 մետր մի վայրկյանում։

Շիրակացին վերև բերված պարբերության մեջ շոշափում է մի կարևոր աստղաբանական հարց ես, այն է՝ ավայր ընկնող աստղերով կամ աստղների հարցը։ Տարօրինակ լպիտի համարել, որ Անանիա Շիրակացին այս հարցը տեղափոխել է օդերևութաբանության դիմում, քանի որ մինչև 19-րդ դարը, մինչև իտալական հռչակափոր գիտնական Սկիապարելին, բոլորը կանգնած էին այն տեսակետին, որ աստղներն առաջանում են երկրի մթնոլորտում։ Առաջին Սկիապարելին էր, որին հաջողվեց ապացուցել աստղների տեղեկության բնույթը։ Անանիա Շիրակացին իր ժամանակաշրջանում եղած բոլոր հիպոթեզներից բերում է միայն մեկը, Արիստոտելի հիպոթեզը, ըստ որի մթնոլորտից վերև գտնվող տեղեկորքը լցնող եթերի հոսանքների շփումից առաջանում է թույլ փայլատակում, որը մենք անվանում ենք աստղների երևույթ։ Այն ժամանակաշրջանում պոյություն ունեցող բոլոր հիպոթեզներից, պետք է ասել, որ ամենից գիտականն այդ էր, քանի որ միացածները սնտոփապաշտական էին (այսպես՝ մարդը մեռավ, աստղը բնկավ և այլն)։

13. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և աստղ, էջ 31։

14. Նույն տեղում, էջ 36—37։



ԻԳՆԱՏԻՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՅԱՆ

ՉԵՔԵԼ-ՄՈՒՍԱՅԻ ԲԱՐՐԱՌԷ՝

4. ԵՐԿԱՐՈՒԱԹՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԱՅ

61. Հին հայերենի այ երկրորդադար միավանկ բառերի բառասկզբում Ջերկ-Մուսայի բարբառում կորցնում է յ կիսաձայնը և դառնում ա. այծ — ած, այս — աս, այդ — ադ, այն — ան, այլ — ալ:

62. Բազմավանկ բառերի բառասկզբում այ դառնում է ի, կրկնվում է հաջորդող քաղաձայնը. այգի — իլգա, այծեր — իծծիր:

63. Միավանկ բառերի բառամիջում այ երկրորդադար յ կիսաձայնը ընկնում է, դառնում է ա. կայծ — գած, փայտ — փադ, մայր — մար, ձայն — ձան, լայն — լան, գայլ — կ'ալ:

64. Բազմավանկ բառերի բառամիջում այ դառնում է ի, երբեմն կրկնվում է հաջորդող քաղաձայնը. կայծակ — գիծծիլ, պայծառ — բիծծուռ, փայտեղ — փիտոցի, հայկի — ճիլիլ, կայծեր — գիծծիր, հայել — ճիլիլ:

65. Բառավերջում այ երկրորդադար դառնում է օ. չովսայ — չովսօ, փեսայ — փիսօ, տղայ — դղօ, սատանայ — սադանօ, բակլայ — պազլօ:

Ինչպես երևում է, այստեղ այ ձայնափոխվում է ոչ թե որպես երկրորդադար, այլ որպես բառավերջի ա ձայնավոր (հմմտ. § 15):

Այս դեպքում որոշյալ հոգ ստանալիս նորից ի հայտ է գալիս այ երկրորդադար, որտեղ ընկել է յ կիսաձայնը. սատանայ — սադանօ — սադանան (որոշյալ), տղայ — դղօ — դղան (որոշյալ), փեսայ — փիսօ — փիսան (որոշյալ):

66. Այր բառը դադարելով ընդհանուր գործածությունից, հանդես է գալիս միայն բարդ բառերի մեջ, այր — առ ձայնափոխմամբ.

հուրերառ — հօր + հոյր + այր = հորաքրոջ ամուսին, մուրերառ — մօր + հոյր + այր = մորաքրոջ ամուսին, սգրառ — սկեսուր + այր = սկեսրոջ ամուսին:

67. Կայանալ բայը որպես բացառություն ընդհանուր օրենքից, դառնում է գայնիլ (կանգնիլ). կամ նաև սովորական ձայնափոխմամբ գինիլ (լինիլ) բայը այլ իմաստով:

ԱԻ

68. Այ երկրորդադար ձայնավորներից առաջ դառնում է ալ. ավել — ալիլ, խալիծ — խալիզ, հալանել — հալանիլ, լալանալ — լալանիլ, քաղառ — քալալիլ, ալելի — ալիլալ:

Այ դառնում է ալ. առաջ — ալաջ: Երբեմն ալ երկրորդադար ա ձայնավորը ընկնում է, դառնում է վր. վ. ծառանել — ծալվրենիլ, պառանել — քալվիլ, առաւօտուն — առվրղօն:

69. Վերջին վանկում ալ դառնում է ուլ. ծառալ — ծալուլ, պառալ — քալուլ, կալալ — գալուլ, կտալ — գղուլ, հալ — հուլ, գալ — ցուլ:

70. Բաղաձայնից առաջ շեշտյալ ալ (օ) դառնում է ու. աղօբ — աղուրբ, եօսբ — եուրբ, աեօթի — աեուրթա, աբօր — աբուր, մօրուլ — մուրօլ, օծ — ուծ, խելօլ — խիլիլ, օղ — ողալ, օրօբել — օւրբիլ, օրհնել — ուշնիլ:

Յօճք բառը, որը բարբառում եղակիում չկա, հոգնակիում դառնում է ուճքվալ:

71. Ինչպես նկատելի է, ալ երկրորդադար մեծ մասամբ ձայնափոխվում է բարբառում ոչ թե որպես երկրորդադար, այլ որպես մի ձայնավոր և մի քաղաձայն — ալ. միայն § 70-ում այն ձայնափոխվում է որպես երկրորդադար:

1. Եւրոմակված ամսագրի 1952 թվականի մարտի և 1953 թվականի փետրվարի համարներից:

ծԱ

72. Հայերեն բառերի բառակցքում չի պատահում, օտարներից փոխառյալ բառերի բառակցքում ևս դառնում է յա. ևսխնի — յախնօ, ևարալի — յարալա, ևարար — յարարալ:

73. Բառամիջում ևս դառնում է ի. կար — ևակ — գիրիլ, լիառ — լիռ, ցորեան — ցլի — րին, սևամ — շիմլ, վառեսակ — վառիլ, (ուր — ևանլ — ֆրիենլ, իրեանց — իրինց:

Այստեղ էլ նկատելի է, որ ևս ձայնափոխվում է ոչ թե որպես ևս (յա) երկրարբան, այլ որպես և ձայնավոր:

74. Ուրիշ վերջավորովոյ բառերի — ուրեան սեռական Հայկեր, ինչպես նաև — ևալ դերբայները պակասում են քաղաքացից. դործածվում է ած — ուծ դերբայաձևեր:

ծԱԻ

75. Բառակցքում պատահող ևուրն — ևօրն բառում ևս դարձել է յու. յաւրն — յուրբբ:

Բառերի միջում ևս դարձել է իւլ. սևաւ — սիւլ, բարեւաւ — պարիւլ, առաջեւաւ — առջիւլ:

ծԻ

76. Թե՛ բառամիջում և թե՛ բառավերջում ևս դարձել է իվ և երբեմն էլ վ. րեթեւ — րի — րիվ, արեւ — արիվ, ձեւ — ձիվ, րեւ — րիվ, եւրեւ — նրբիվ, եւելիւ — բովրնիլ, ձեւել — ձիվիլ:

77. Պատահող երկու օրինակների մեջ իայ երկրարբանը տարրեր ձայնափոխում ենք ունի. լուրիայ — լուլիա (չորու մանր տեսակը) (իայ — իա), կրիայ չորահատուկ ձևով դարձել է գուրլուլ (իայ — յուլ):

ԻԻ

78. Բառակցքում պատահող օրինակների մեջ իւ (յու) երկրարբանը դարձել է ի. կոր — ցրել և տառք. իղ — իղ, փուրեան — իրիենլ, իուրեան — իւրինց, իւր դարձել է իւ (իւ — ի):

79. Միավանկ բառերի բառամիջում իւ դառնում է ալ. ձիւն — ձալն, սիւն — սալն, իւր — հալու, ձիւր — ձալլ:

Այս օրենքին է հետևում նաև բազմավանկ աղբիւր — ախպալբ բառը:

80. Բազմավանկ բառերի բառամիջում իւ դառնում է է. ալիւր — իլէր, հաւիւր — հաւէր, արիւն — վիրէն:

81. Ղ բաղաձայնից առաջ իւ դառնում է ի. գիւղ — կիղ, գիւլագի — կիղագա, ձիւղ — ձիղ, իւղ — իղ: Բացառություն է կազմում ճիւղ — ջօղ բառը, որտեղ ղ-ից առաջ իւ դարձել է օ:

82. — ուրիշ վերջացող բառերի մեջ իւ դարձել է է. մեծուրիւն — մինծուրէն, — իշուրիւն — իշուրէն — բաժնուրիւն — պանցրու —

բէն, լաւուրիւն — լաւուրէն, խնուրիւն — խնվուրէն, մալուրիւն — միրուրէն:

83. Բառամիջում կամ բառավերջում ձայնավորներից առաջ իւ դառնում է իվ. ճիւլանդ — ճիվուտ, ճիւլանցանալ — ճիվրեկիլ, քիւ — քիվ:

84. Կիւրակ է և միոսն բառերի մեջ իւ դարձել է ի. կիւրակէ — գիւրակէ, միոսն — միոսն:

ՌՅ

85. Բառակցքում չի պատահում, բառամիջում ոչ երկրարբանը դարձել է ալ. լոյս — լալս, բոյս — պալս, լալն — ալալն, բոլլ — բալլ, բոյր — քալր, բեկոյց — ունեալց, հանգոյց — հանկալց, կոյր — գալր:

86. Հետևյալ բառերի մեջ ոչ դարձել է և. պատուոյս — բաղբէւ, գոյց — գրէց, սովորոյս — սարվէր: Բացառություններ են՝ աւնոյշ — աւօշ (ոյ — օ), երեկոյ — իրիգօն (ոյ — օ), զրականից փոխառյալ կոյս — գոյս բառը:

87. Ուս երկրարբանը դառնում է ու. Լուսուած — Լսղոծ, դծուար — դիծուր, սակայն տուաւ — փյօր (անկանոն խոսքարհում):

88. Ուս դառնում է վա, վու, վր. լուացք — լվուսք, լուանալ — լվանիլ, շուան — շվուն, լուացուկ — լվացվիլ, իրիկուան — իրիգվուն (ընթրիք), Լեւկուան — իւիվուկ:

89. Ուն, ուի. ուօ սակավադեպ երկրարբանները դառնում են վն, վի, վօ, վր. բեկկնի — սիվգիւնա, կոստուկ — գուսրվիլ, քրտել — քրվիլ, բրտել — էրվիլ:

ՌՎ

90. Ով երկրարբանը սովորաբար դառնում է ուվ. կով — կուվ, ծով — ծուվ, բարով — պարով: Ով դերանունը դառնում է ուվ, իսկ հոլովվում է որպես ու հարաբերականը:

91. Գործիական ով վերջավորությունը շատ աննշան բացառությամբ Հաջի — Հաքիլի մասնաձևովում դարձել է ում, իսկ մյուս գյուղերում՝ ուվ (Յուղուն — Օյուրի մասնաձևով) և օն (Քասարի մասնաձևով):

Եզրակացություն

92. Երկրարբանների ձայնափոխումը պարզ ցույց է տալիս, որ Զերել — Մուսայի բարբառում, ինչպես նաև մեր մյուս բարբառներում, առհասարակ նկատվում է ձրգտում երկրարբանների հնչյունային պարզացման և հնչյունական հեղտություն համար:

Հատկապես կրճատված է և տառով կազմված երկրարբանների շարքը, որոնց արտասանությունը ղժվարովյունների հետ է կապված. և դիտվում է որպես վ բաղաձայն մեծ մասամբ:

Պատահող յա, այ երկարորառները կա՛մ արդյունք են տարներին կատարված փոխառության (յա) կա՛մ հեշտացումն են ավելի ղեկավարահեշտուն երկարորառների (ոյ — այ, իւ — այ):

Երկարորառները շատ հաճախ վերածվում

են մի ձայնավորի և մի բաղաձայնի՝ հնչման հեղուկության համար:

Բարբառում գործածական է իւ երկարորառը, որը դադարել է երկարորառ լինելուց, այլ գործ է ածվում որպես մի ձայնավոր (ֆրանսիական և հնչյունը):

5. ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բ

93. Բ թրթռուն բաղաձայնը Զերել — Մուսայի բարբառում դառնում է պ. բոյս — պայս, բուսնիլ — պուսնիլ, բերել — պիրիլ, բամբակ — պամպուկ, բանել — պանիլ (աշխատել), բոյն — պայն, բանալի — պալենի, բարև — պարիվ, բուրդ — պոթ, բան — պուն, բզեզ — պզիզ, բերան — պիրուն, բարձր — պուցըր և այլն:

94. Բառակցքում կան մի քանի բառեր, որոնք բ դառնում է փ. բորբոս — փրփիս, բորբան — փրփրիլ, բուրվառ — փրվուռ:

95. Բառամիջում բ դառնում է փ երբ ազատ է. արեթ — ամփթ, խարել — խամփրիլ, շարաթ — շամփուր, շարաթ օր — շամփարուր, ուրբաթ — ուրփուր, սրբել — սրփիլ:

96. Բառամիջում մ ռնգականից հետո բ դառնում է պ. բամբակ — պամպուկ, ամբար — ամպուր, ամբիոն — ամպիոն:

97. Բառամիջում ղ բաղաձայնից հետո բ դառնում է պ. աղբիր — ախպայր, եղբայր — ախպար:

98. Բառակցքում բ դառնում է փ. երբ — յիփ, սուրբ — սօրփ, Մեսրոբ — Մեսրոփ, նուրբ — նօրփ, Զենոբ — Զենոփ:

Առանձին ձայնավորի ման արդյունք է բոքիլ բառը, որը դարձել է պիգաֆ, որտեղ բառակցի կ — ֆ բաղաձայնի ազդեցությամբ բառամիջի բ դարձել է կ — ֆ:

Գ

99. Գ բաղաձայնը բառակցքում դառնում է կ կամ կ'. գիլ — կիլ, գիշեր — կիշիր, գարի — կարա, գինի — կինա, գտանել — կ'ընել, գողանալ — կուլել, գօտի — կուդո, գերեզման — կըրգմուն, գարուն — կ'արոն, գետին — կիդեն:

100. Գ բաղաձայնը բառամիջում դառնում է ֆ. այգի — իֆա, հագանել — հաֆելի, հոգի — հիֆա, պագանել — ֆաֆել, գալ — ուֆիլ (ակցքում ավելացել է ու), բազառ — քաֆալի, սգառ — սքաֆիլ:

101. Բառամիջում կամ բառակցքում և ռնգականից հետո գ դառնում է կ կամ կ'. մանգալ — մանկիլ, հանգույց — հանկ'այց, փնգտալ — փրոնկիլ, հինգ — հենկ, եղունգ — դոնկ, ժանգ — ժանկ:

102. Բառակցքում հթե գ բաղաձայնին չի նախորդում և ռնգականը, ապա գ դառնում է ֆ. ուրագ — ուրիֆ, նուգ — ջըրիլ, գոյգ — գայիֆ, պատարագ — քաղարիֆ:

103. Երբ գ (կամ կ) գառնվում է երկու և ռնգականների միջև, ապա դառնում է լ, ընդ որում ընկնում է և մի և ռնգականը. կանգնել — գայնիլ, կանգնած — գայնուծ, անկանել — իյնիլ, ցնկնել — ձիյնիլ:

Այս փոփոխությունը նույնն է նաև Պոլսի բարբառում:

Դ

104. Դ բաղաձայնը բառակցքում մնում է դ. դառնալ — դառնիլ, դուն — դոն, ձողալ — դուղիլ, դանակ — դանիֆ, դարակ — դարդիֆ, դուռ — դոռ, դեն — դնիլ, դուռար, — դիծուր, դե — դիվ և այլն:

105. Դարման բառը օհնար, ճար, դեղա իմաստով դառնում է տարմուն, իսկ ճանաչանի կերպ իմաստով դառնում է դարմուն, դաս բառը դառնում է բուս:

106. Դդում բառը պահելով հանդերձ իր դ հնչյունի փոխադր փոխադր տեղ, որտեղ մեջ ներմուծվել է բ, իսկ դ և ու տառերի մեջ ներմուծվել է ք. դդում — դրդում:

Բառամիջում անկախ դ պահում է իր երանգը. զադրել — զադրիլ (հոգնել):

107. Դ բաղաձայնը և թե՛ բառակցքում դառնում է տ. պինդ — բենտ, սանդ — սունտ, սնդուկ — սնտոֆ, գնդան — գնտուն, հիւանդ — հիվունտ, խնդալ — խնտիլ (տրախանալ), խնդրել — խնտրիլ (բարիք մաղթել), բարեկենդան — պարգընարինֆ:

Այս օրենքին է հետևում և այդ — առ բառը:

108. Թե՛ բառակցքում և թե՛ բառամիջում բ բաղաձայնից հետո դ դառնում է բ. մարդ — մուրթ, վարդ — վուրթ, բուրդ — պուրթ, վարդավառ — վարթիվուր, երդում — ութրոմ, վարդապետ — վարթարիդ, կարդալ — գարթիլ, արդար — արթուր:

Այս օրենքին է հետևում և խնդիլ — խրիլ բառը:

2. Տե՛ս ակադեմիկոս Լ. Ահաբաբյան, «Փոփոխություններ բարբառի», Երևան, 1947 թ., էջ 53—54, § 84:

2

109. Ա րադաձայնը րառասկզբում մնում է զ. զատիկ — զազամ, զնղան — զնտուն, զոս — զրոսիլ, զոյգ — զայլ, զոյց — զռէց, զե — զնուլ — զրնիլ, զարկալեւ — զարկիլ: Բացառու-
թյուն է զատ րառը, որը գործ է ածվում նախ-
գիրով՝ զատ — իզգուս (կրկնվել է զ տառը),
սակայն րայը լինում է զատել — զաղիլ:

110. Բառամիջում զ նույնպես մնում է զ. ազատել — ազաղիլ, վերեզման — կրքզմուն, զզել — կ'զիլ, լեզու — լիզգո, լեզուանի — լիզ-
վանա, հազալ — հազգիլ, հազար — հազգուր, վազել — վազգիլ (մի տեղից թռել):

111. Բառավերջում նույնպես զ մնում է անփոփոխ. խոզ — խիզ, հազ — հուզ, մազ

— մուզ, բնկոյզ — ուն'ալզ, լուզ — լոզ, խլզ — խիզ, վիզ — վիզ:

112. Մասնավոր պարագաներ են. զան-
գակ — ժամբուր = անհղեցու զանգ (զ — ժ), զանգալաւել — ժամբուրիլ = անհղեցում զան-
գաւաւաւել (զ — ժ), Լեռագ — իւրուն (զ — ձ)
կա և իւրուզ, ազոլս — ածծիլս = հասած խա-
րոշ (զ — ձ):

Թ

113. Թ րադաձայնը րառասկզբում մնում է անփոփոխ. բրու — լըբրու, բրունիլ — բրբ-
վիլ, բոյլ — բայլ, րարալել — րարիլ, րա-
զաւուր — րաւ'ավուր, րողել — րաղիլ, րուզ —
րոզ, րաց — րուց, րանձու — րունցըր:

114. Թրքիլ րայը լուչիլի հետ չգիտնելու
համար ստացել է ուրիշ ձայնափոխում. քը-
շել — դըշիլ, քոշել — բըռոփիլ:

115. Բառամիջում ր անկախ լինելու կամ
կրկնվելու դեպքում մնում է ր. բքու — բըլ-
բու, լքել — բիրիվ, աւօրի — աւուրա, նայ-
բել — ջիրիլ, րուել — րըրվիլ, կարել —
զարբիլ, րթան — րըրթան:

116. ուրիւն վերջացող վերացական գոյու-
կանակերտ մասնիկի մէջ ր մնացել է անփո-
փոխ, մեծուրիւն — մինցուրեն, խուրիւն —
խիվուրեն, րաւճուրիւն — պանցուրիւն,
մայրուրիւն — միւրուրեն:

117. Բս րադարձում գտնվել է քց. կա
միայն մի օրինակ՝ վարսուն — վարցուն:

Յուրահատուկ ձայնափոխումներ են նրկու
շաղկապներ. րկ — զր, բոլ — դը (ք — ղ):

118. Թե՛ միավանկ և Թե՛ րազմական րա-
ռերի րառավերջում ր մնում է անփոփոխ.
կար — զուր, կար — գէր, բուր — բօր, ձիւր
— ձայր, մուր — մօր, առձաք — առգուք, Լը-
կար — իրգուք, ուրջաք — ուրվուք, րուզր —
րօխր:

119. Թ րադաձայնը րառասկզբում մնում է
անփոփոխ. ժանգ — ժանկ, ժողովիլ —

ժուլվիլ (կա նաև ճուլվիլ), ժամ — ժամ (ե-
կեղեցի), ժամանել — ժմնիլ (շաղարտված մի
բանի վրա նստնել), ժամանակ — ժամանիլ,
ժամակոչ — ժամկիւց:

120. Բառամիջում ժ մնում է ժ. րաժին —
սիժեն, արժել — իժիլ, րաժանել — պիժնիլ:

121. Բառամիջում ժ դարձել է ճ. հետեւյալ
բառերի մէջ. վարժապետ — վարճարիզ, վստ-

ժունի — վարճունի, մժեղ — մուջօք:

122. Բառավերջում հազվադեպ պատահող
բառերում ժ մնում է անփոփոխ. ժամ (երկ-
րայարժ):

123. Բացառութայն է՝ ժայռ — շնո (ժ — շ),
պատիժ — բաղիւ (ժ — շ):

է

124. Բառասկզբում լ րադաձայնը մնում է
անփոփոխ. լոյս — լայս, լեզու — լիզգո,
լայն — լան, լիսուն — լեռ, լակոտ — լազիւտ,
լուսանալ — լուսնիլ, լաց — լուց, լեղիլ —
լլալ, լակել — լաղիլ, լու — լո, լծել — լըծ-
չիլ, լուծ — լօծ և այլն:

125. Լի խումբ րառեր, որոնք սկսում են
լ րադաձայնով, նշման հնչողութայն համար,
նախկանպես եթե հաջորդ տառը րադաձայն
է, սկզբից մի ուրիշ ձայնավոր են քնդու-
նում. ու՛ լալ — ուլիլ, կատարյալը՝ լացա-
ր՝ լուացր — ըվուր, լուսնալ — ըլանիլ,
լուացուն — ըվացվիլ, լիք — ըլլաք:

Իսկ ուսումնասիրակ լ-ով սկսվող բառերի
սկզբում նկատելի է ր թեթիւ հնչողութ:

126. Թե՛ րառավերջում և թե՛ րառամիջում
լ մնում է անփոփոխ. ոգիլ — իշիլ, աւել —
ավիլ, րայել — րիլիլ, լոյլ — րայլ, ծալել
— ծալիլ, խելիք — խիլիք, խլզ — խիզ-
զալլ — կ'ալլ:

Այլ, ալ ձայնափոխվելիս վերջում ստանում
են ու, ա, և ձայնավորներից մեկը, ալէ,
ալա, ալա:

127. Անցյալ դերբայի Լալ վերջավորու-
թյան լ գտնում է ր. սիրեալ — սիրիւր, մո-
ռացեալ — մոռցիւր, գնացեալ — կ'ացիւր,
խօսեալ — իտուիւր:

Խ

128. Խ րադաձայնը րառասկզբում մնում է
անփոփոխ. խարել — խաիլիլ — խափըլիլ,
խաճանել — խազնիլ, խառնակիլ — խազրե-
կիլ, խալիժ — խավիզ, խնձոր — խնձիւր,
խմել — խմիլ, խոզ — խիզ, խոշոր — խու-
շիւր և այլն:

129. Բառամիջում խ մնում է անփոփոխ.
րաբախել — րաբխիլ, ձախել — ձախիլ, կո-
խել — զիխիլ (խփել), կախել — զախիլ:

վախենալ — վախելի, մոխիր — մախիտէր, ախիւս — ախիւսիք:

Բառամիջում բաղաձայնների տեղափոխում է կատարվել աշխարհ — ախշուր բառի մեջ, իսկ եկել է շ-ից առաջ:

130. Բառամիջում իս մնում է անփոփոխ. սոխ — սիւխ, Բացախ — Բացիւխ, մոխ — մօխ, քարախ — քարիւխ, վախ — վիւխ, վլուխ — կ'լօխ:

Ծ

131. Ծ բաղաձայնը բառասկզբում ունի երկու երանգ. մնում է ծ կամ դառնում ծ, որն ափելի հաճախակի է. ծ — ծ՝ ծառ — ծառ, ծալի — ծալիլ, ծով — ծով, ծախել — ծախիլ, ծայր — ծարհ, ծակել — ծաղիլ, ծակ — ծօհ: ծ — ծ՝ ծոց — ծիւց, ծունկ — ծօնկ, ծագել — ծիթիլ, ծաղիկ — ծաղաք, ծաղկել — ծաղգիլ, ծեծ — ծիծ, ծեծել — ծիծիլ, ծեփել — ծիփիլ, ծիրա — ծիրգ:

132. Բառասկզբի ծ բաղաձայնը գ է դարձել հետևյալ բառերի մեջ. ծառագարդար — զարգարթուր (ազգվել է հաջորդ գ-ից), ծանր — զանաթր, ծաթիւն — զթթիւն (ազգվել է թյուրքերենից):

133. Բառամիջում ծ դառնում է ծ. ձիծալիլ — ձիծաղիլ, ձեծել — ձիծիլ, լծել — լծիլ, ածու(հ) — ածօհ, ածելի — ածիլա, ածել — ածիլ, ծածկել — ծածգիլ:

134. Բառամիջում ծ — գ է դարձել հետևյալ բառերի մեջ. առծար — առգուր, հեծալ — հիգիլ, խածալ — խագիլ: Գործածվում են նաև առծուր, հիծելիլ, խածելիլ ևն:

135. Բառավերջում ծ դառնում է ծ. ցած — ցուծ, ձիծ — ձէծ, ալիծ — ալէծ, մեծ — միհնծ, Աստուած — Ասդուծ, կերած — զիրուծ, տուած — զրվուծ:

136. Բառավերջում ծ մի բառի մեջ դարձել է գ. խալիծ — խալիգ:

137. Ը փոխարինությունը բարբառում դառնում է սփ. լուծփ — լօսփ, կուրծփ — զօսփ, (զործածվում է նաև զօսծփ ևն), խնդրուածփ — խնարվուսփ:

Կ

138. Բառասկզբում կ բաղաձայնը դառնում է գ կամ գ՝. կաղնի — գաղնա, կանչել — գիւշիլ, կով — գօվ, կարմիր — գ՛արմէր, կանգնել — գայնիլ, կծու — գրծօ, կշռել — գշշիլ, կարգալ — գարքիլ, կարկուտ — գ՛արգօղ:

139. Բառամիջում կ դառնում է գ. ականջ — ագանջ, երկեղ — իրկօն, փակել — փագիլ,

երկայն — իրգան, սատակել — սաթգիլ, հերկել — հիրգիլ, կարկուտ — գ՛արգօղ, ներկել — նիրգիլ, ոսկի — իսգա:

140. Բառամիջում կ բաղաձայնը և ուղղականից հետո դառնում է գ. տնկել — դինգիլ, ընկոյզ — ունէյզ, ընկեր — ընգիր:

141. Բառավերջում կ բաղաձայնը և որնդականից հետո մնում է կ. ծունկ — ծօնկ, խունկ — խօնկ, եղունգ — դօնկ, ճանկ — ջանկ, և առհասարակ գ. կ, և հնչյունները բառավերջում և ուղղականից հետո դառնում են կ:

142. Բառավերջում, եթե կ բաղաձայնը չի նախորդում և ուղղականը, կ դառնում է փ. ծաղիկ — ծաղաք, տախտակ — դախտիլ, գառարկ — դարդիլ, պտուկ — բուղօհ, գիրկ — գ՛էրփ, մուկն — մօհ, խակ — խօհ, երկ — իրիլ, բարակ — պարիլ:

Զ

143. Զ բաղաձայնը բառասկզբում մնում է անփոփոխ. հառս — հուրս, հառսանիլ — հառսնալ, համբել — համբերիլ, հիւանգ — հիվուտ, հաշի — հաշի, հաստ — հուսդ, հիւսել — հիսիլ, հագանել — հագնիլ, հուստել — հիդդիլ:

144. Բառասկզբի և բաղաձայնը ընկել է հետևյալ բառերի մեջ. հաճցնել — աճցնիլ (ընկել է զ), հալատալ — ալդիլ, հրճել — ըճիլ:

145. Բառասկզբի և դարձել է իս. հող — իլիդ, նույն է պարագան նաև թյուրքերեն հախ — իլիլ (իրավունք) բառի, որոնք այդպէս են դարձել ազգվելով հաջորդ բաղաձայնից:

146. Բառամիջում և մնում է անփոփոխ. ջուկակ — ջրկիլ, պանկ — քիլիլ:

Ունի իզականակերտ մասնիկի մեջ և պահում է իր երանգը, փոխվում է վերջի ի տառը. Տիգրանուհի — Դիկրանուհի:

147. Բառամիջի և բառավերջի և բաղաձայնը երբ գտնվում է ուրիշ բաղաձայնի կողքին, ընկնում է հնչյուն հեշտութեան համար. հաճապարհ — ջաւրուհ, շնորհատր — շրերփիլ (լ — ֆ), աշխարհ — ախշուր, շնորհ — շնիլ:

148. Բառամիջի զարտուղի ձայնափոխումներ են. սանկ — սիփիլ (հ — ֆ), օրհնել — ուշիլ (րհ — շ):

149. Բառավերջում ա ձայնավորից հետո և մնում է անփոփոխ. շահ — շուհ, դահ — դուհ, մահ — մուհ (համաճարակ), ահ — ահ:

150. Ցուրահատուկ ձայնափոխում է սկիս — սըգէն (հ — ց):

2

151. Չ բաղաձայնը բառասկզբում մնում է ձ. ձև — ձառ, ձուկ — ձօկ. ձմեռ — ձմրո. ձի — ձէն, ձէյ — ձիթ. ձիւն — ձայն. ձիւրկ — ձիւրկնա, ձապ — ձիւր, ձայն — ձան. ձմեռուկ — ձրմրոթ, ձև — ձի, ձևել — ձիվիլ:

Ջարտուղի ձայնափոխում է ձազար — դար — րար բառը (ձ — զ):

152. Բառամիջում ե հնդգականից հետո ձ դառնում է զ. բարձր — սլունցր, բանձր — րունցր, սլղինձ — բղէնձ (մեծ կաթնա), անձուկ — անզգիվ, ինձուր — խնցիւր, տանձ — ղունց, տանձենի — ղանգլինա, խանձել — խանցիլ:

153. Բն բառամիջում ե թև բառավերջում ե ղ բաղաձայններից հետո ձ դառնում է զ. պարձուցանել — զարցրիլ, ղերձան — ղիրպուն, ղաւձ — ղուրպ, ճոգնղաւձ — ճիլլըպուրց, արձակել — արզակիլ, բարձ — պուրց, ղեղձ — ղիլց, ղեղձենի — ղեղջինա:

154. Բառավերջում անկախ ձ պատահող մի բառի մեջ ձ մնացել է անփոփոխ. ամձ — ուձ:

3

155. Բառասկզբում պատահում է երեք բառ, որոնք հայերենում իրենց ունեցած ձայնավորը կորցրել են. ուլարկել — ղուրկիլ — խուրկիլ, ուղեղ — ղօղ (ոսկորի ծուծ), ելունց — ղօնկ:

156. Բառամիջում ձայնավորներից կում թրթուռն բաղաձայններից ետ ե առաջ պատահելիս ղ մնում է զ. զողանալ — կուլնիլ, ղեղին — ղիղլեն, եղունգ — ղօնկ, ժողովել — մուղվիլ, լեղի — լիղա, մեղր — միղր, գիւլացի — կիղացա, տույլ — ղղօ, ծաղիկ — ձաղաֆ:

157. Բառամիջում խուլ բաղաձայնից ետ ե կամ առաջ ղ դառնում է խ. բուղբ — բօխտ, խեղդել — խլխրիլ, ճեղք — ջիխք, մեղք — միխք, եղբայր — ախպար, սղբիւր — ախպայր, աղբառ — ախբուր:

Սեղմել բառը վերջվել է թշուրթերենից ե աակայն ենթարկվել այս կանոնին. սեղմել — սրխմրչիլ:

158. Բառավերջում մեծ մասամբ ղ մնում է անփոփոխ. իղ — իղ, ասղ — սուղ, աղ — իղ, պաղ — բիղ, ճեղ — ճիղ, մաղ — միղ, մաղմաղ — մաղմիղ, մանգաղ — մանկիղ:

Սատղ բառը բարբառում դորձածվում է նվազական մասնիկով, ներմուծելով ր. աստղ — արքստղաֆ:

159. Հետևյալ բառերի մեջ ղ զարտուղի ձայնափոխման է ենթարկվել. մձեղ — մուճօք (բնկել է ղ. ափնացել Դ), սղեճն — բրջիք (բնկել է ղ. ափնացել Դ), աղբիկ — աշղեն (բնկել է ղ. չ զարձել է շ. ափնացել Ե):

Ճ

160. Ը բաղաձայնը բառասկզբում դառնում է զ. ճանապարհ — զամբունք, ճանն — զանք, ճիպոլ — զարո, ճիղ — զօղ, ճեղք — ջիղք, ճակատ — զագուր:

161. Բառամիջում ե բառավերջում ճ դառնում է զ. անել — իջիլ, ինղն — ինղը (միայն վերջի ե հիվանդի համար) ճնճղուկ — ջինջրօք, ճանն — զանք, կարճ — զարջ, կոնակ — զիջիլ, կուրճ — ղղաջ, ման — մաջ:

162. Ը անփոփոխ է մնացել բառամիջին, վախճանել — վաղճանիլ (հոգեորականների մահանայ) բառի մեջ:

163. Բառամիջում թրթուռն բաղաձայնից առաջ ճ դառնում է ձ. կոճակիլ — ղուճվիլ, տաճկանալ — ղիճվիլ (սաստիկ ջղախնայ կամ կրոնափոխ լինել):

164. Բառավերջում բղղուն բառի մեջ ճ մնացել է անփոփոխ բղղոն (հում ձափարով ձաշ, փրցված կտոր):

Մ

165. Մ բաղաձայնը բառասկզբում միշտ մնում է անփոփոխ. մարդ — մուրք, մայր — մար, մտանել — մրենիլ, միս — մէս, մարգարէ — մարկարա, մօրոք — մուրօք, մաշել — միշիլ, ման — մաշ, մանրել — մանրիլ, մեծ — մինձ, մեղք — միխք:

166. Բառամիջում մ նույնպես մնում է անփոփոխ. բոժումել — բիւմիլ, ամիս — ամէս, ձմեռ — ձմիռ, ամառ — ամուռ, չամիչ — շամէշ, կամիւր — գամւէր, համար — համուր:

167. Բառամիջում բացառութիւն է եղմրճանալ — ուխրվնիլ ե եղումն — ուխրոմ, որտեղ մ — ն հանդիպումից մ դարձել է ձ:

168. Բառավերջում մ մնում է անփոփոխ. ղղում — սրղրոմ, ժամ — ժում, համ — հում, սեւճ — սիւճ, սեւամ — շիւմ, մում — միւմ, կամ — զում, ղէմ — ղիմ:

3

169. Բառասկզբում գտնվող յ կիսաձայնը ջնջվում է. եթէ գտնվում է ձայնավորից առաջ, ձայնափոխում է այդ ձայնավորը. յօնք — ունքվա, յօրանք — իրքղղղիլ, յեւս — իղիվ, յետին — իղյէն:

Եթէ հաջորդում է բաղաձայն, յ ջնջվելուց հետո ավելանում է մի այլ ձայնավոր, յըս —

տակ — իսգիւր, յստակել — իսգիւր, յղի — սղա (միայն անասունների համար):

170. Միայն յիսուն բառի մեջ յ կիսաձայնը պահել է իր երանգը և հնչվում է կիսաձայն (հ) — յիսուն — յիսսօն. նույնն է պարագան և յեա — յիդ բառի:

Յ-ի մյուս պարագաների մասին չենք խոսում, որովհետև արդեն այդ մասին խոսվել է երկբարբառների ձայնափոխման ժամանակ:

Ն

171. Ն բաղաձայնը բառասկզբում մնում է ն. նեղանալ — նիղանիլ, նոր — նիւր, նեղ — նիդ, ներքև — ներքիվ, նստել — նսդիլ, նըշխար — նիշխուր, նուրբ — նօրփ, նուշ — նօշ, նօրել — նիւրիլ, նօւր — նուսըր, նօրահարս — նիւրհուրս:

172. Նման բառի գործածությունը չկա բարբառում, իսկ նրանից կազմված բայերի՝ նման — նմանել — նմանեցուցանել կա, որտեղ ն — մ հանդիպումից են դարձել է և սկզբից վերջից ը ձայնափոքը. նմանել — ըմմանիլ, նմանեցուցանել — ըմմանցընիլ:

173. Բառամիջում ն մնում է ն. ականց — ականչ, կանաչ — գանաչ, նանն — ջանց, մաղանի — մաղեա, ունեճալ — ունընիլ, բն-

կոյզ — ունեճայզ, սպանել — ըսքանիլ, սանյալ — սանդույ, սինձ — սէնց:

174. Բառամիջում երկու ն իրար հաջորդելու դեպքում մեկն ընկնում է. անկանել — իյնիլ (ընկել է կ), կանգնել — գայնիլ (ընկել է գ), ցնկնել — ձիյնիլ (ընկել է կ), (Այս մասին տես և § 102-ում):

Բառամիջի ն-ն ընկել է և լնուլ — լըուիլ բայի մեջ, առաջի և վերջի լ տառերի ազդեցությամբ դարձել լ:

175. Բառավերջի ն-ն մնում է անփոփոխ ն. աման — ամուն, տուն — դօն, քսան — քսուն, երկայն — իրզան, շուն — շօն, մածուն — մացօն, պարան — բարուն, երեսուն — յարսօն, չուան — չվուն:

176. Գրաբարի մի խումբ բառերի բառավերջի ն-ն ընկնում է, սակայն ի հայտ է դալիս հոգնակիի, ածանցման, բայականման, հոլովման ժամանակ. մուկն — մօկ, — մգնիւր

(հոգ.), տասն — դուսր — դըսըմլէֆ (ածանցում), ամառն — ամառ, յօթն — յուրբը, հարսն — հուրս, մառն — մույ, երդումն — ուֆթօմ, դուռն — դօռ:

Սակայն մի բառի մեջ ն մնում է բառավերջում շեշտելով անգիր ք-ն. բոռն — բուրճ:

177. Բառավերջի ն-ն վերածվել է մ-ի մի բառի մեջ՝ մըշիւն — մշում: Անկաղնիկոս Հ. Աճառյանի կարծիքով, դա միացորդն է

հին հայերենի մըշիւն ձևից և հոգի հապավումով³:

Ն բաղաձայնը մ է դարձել նաև մի այլ բառի բառամիջում՝ բօշնել — ըիշմիլ:

178. Հնուկյալ բառերի մեջ ն բաղաձայնը ենթարկվել է դարտուղի ձայնափոխումների. խնջել — խմշիլ (ն—մ), կա նաև խնշիլ. նաճապարն — ջամփունն (ն — մ), անայի — ալլա (հաջորդող լ-ից ազդվելով ն-ն դարձել է լ):

Շ

179. Շ բաղաձայնը բառասկզբում մնում է շ. շուն — շօն, շինել — շինիլ, շալիկ — շապակ, շարել — շարիլ, շերեփ — շիրփի, շաբար — շափուր, շահ — շուն, շալակ — շալիւֆ, շատ — շիւդ, շիլ — շէլ, շինձու — շինձօ:

180. Մի քանի բառի մեջ բառասկզբում շ բաղաձայնից առաջ ալիւպացել է մի ձայնափոք հնչման հեշտությամբ համար (տես § 125). ու՝ շուտ — ուշէդ, ի՝ շփել — իշփիլ — իշփըվիլ — իշփըցընիլ:

181. Բառամիջում շ մնում է շ. խարշել — իիշիլ, գիշեր — կիշիւր, աշուն — իշշօնն, կուշտ — կիշդ, կշռել — գիշըռիլ, փշրել — փըշրիլ:

182. Բառավերջում շ մնում է շ. էշ — թշ, յուշ — քօշ, անուշ — անօշ, փուշ — փօշ, նուշ — նօշ:

Միայն շարժ բառում բառամիջի մ-ի ապօքնությունամբ շ փոխվել է մ-ի. շարժ — ժաժ (ընկել են ռ, ք), որից միմիլ ցցցցել, շարժել:

Չ

183. Բառասկզբում չ մնում է չ. չորս — չուրս, չոր — չիւր, չափ — չուփ, չորանալ — չիւնիլ, չուխա — չուխօ, չոփել — չուփիլ:

184. Բառամիջում չ մնում է չ. կանչել — զինչիլ, կանաչել — կանչըրիլ, աղաչել — աղչիլ, չարչարանք — չարչարիւնք, չարչարել — չարչարիլ, փչել — փշիլ, հաչել — ճիշիլ:

Բացառություններ են՝ ամաչել — ամըշնիլ (չ — շ հաջորդ ուղղականի ազդեցությամբ), աչք — աշք (չ — շ). կա նաև աչք:

185. Բառամիջի չ ընկել է հետևյալ բայերի մեջ. դիպչել — դիպիլ, փակչել — փակիլ, փախչել — փախիլ:

186. Բառավերջում չ մնում է չ. փարչ — փարշ, չումիչ — չամէշ, փիչ — փէշ, կանաչ — զանաշ, խաչ — խաշ:

Բացառություն է ժամակոչ — ժամգիւց բառը (չ — ց):

3. Տե՛ս ակադեմիկոս Հ. Աճառյան, «Փնտրություն Պոստ բարբառի», Երևան, 1947 թ., էջ 56, § 169:

Պ

187. Բառակերպում պ դառնում է բ. պա-
րան — բարուն, պակաս — բաղուս, պագ —
բիւք, պառուս — բառով, պաշար — բիշուս,
պատ — բուդ, պարս — բիւրդ, պղտու —
բղդիւր, պժգալի — բվդալա, պառառ — բա-
ղուս:

188. Բառամիջում պ դառնում է բ. շա-
պիկ — շարաք, հապա — հարթ, դիպել —
դիրիլ, տապակել — դարգիլ, ապուր — արօր:

189. Բառավերջում պ դառնում է բ. ամպ — ումք, պարապ — բարուր, կապ —
զուր, պապ — բուր:

190. Հանապարհ բառի մեջ ն ռնգականի
ազդեցությամբ պ դարձել է փ. հանա-
պարհ — ֆամփունի:

Յուրահատուկ ձայնափոխում է ապաի-
նիկ — ավավանիլ (հաջորդ վ-ի ազդեցու-
թյամբ պ դարձել է վ):

Ջ

191. Բառակերպում զ մնում է զ. ջուր —
ջուր, ջուրի — ջիւրա, ջրհուր — ջրհիւր, ջուլ-
հակ — ջլհիկ, ջրաղաց — ջաղուցք, ջով —
ջիվ:

Բացառությամբ են (զ դարձել է ե)՝
ջարդել — ճարբիլ, ջայլել — ճիւրիլ:

192. Բառամիջում զ դառնում է շ. ոջիլ —
իշիլ, առաջեալ — առշիվ, յուշիկ — յորշիլ,
շրջել — շրշիլ, մրջիւն — մրշուք, հաջել —
հիշիլ:

193. Բառամիջում ն ռնգականից հետո
սլատահեցիս զ մնում է զ. տանջել — դանջիլ,
կռնջ — իրէնջ, բնջուկ — թնջուկ, իշանել —
իջնիլ:

194. Բառավերջում զ դառնում է շ. մէջ —
միջ, առաջ — առաշ, արջ — ուրշ:

195. Մէջք բառի մեջ զ դարձել է շ. մէջք —
միշք, որից բիշք՝ մեանների մրսելուց կամ
ձանրութիւնից ցավելը:

Բ

196. Զերել-Մուսայի բարբառում երբեք
բառակերպում ո բաղաձայնով սկսվող բառ
չի պատահում, նույնն է պարադան և բ-ի
համար: Սա մնացել է հին հայերենից, որ-
տեղ, ինչպես հայտնի է, այդ տառերով
սկսվող բառերը շատ հազվադեպ են և ծ-
ղածներն էլ փոխառություններ մի օտար
լեզվից: Բառակերպում ո-ով սկսվող հա-
տուկ անուններն անցած սկզբից ստանում
են ր հենարանը. (Թերեկա — Թոթիկա, Թու-
րեն — Թուրեն, ռոս — րոսոս):

197. Բառամիջում ո մնում է ո. հետո —
հիտոս, պարա — բառով, վառել — վառիլ,
վառեուկ — վառիք, բառասուն — բառսեն,
բռնել — բոռիլ, կռնել — կիշրոիլ:

198. Ի ձայնի հատկապես շեշտվում է հ
ռնգականին հանդիպելիս. մոռանալ — մառ-
նիլ, խառնակել — խաւրնդիլ, դառնալ —
զառնիլ, բռնել — պռնիլ, մեռնել — միռնիլ,
առնել — առնիլ:

Բացառությամբ է ձառագարդար — զար-
գարդուր, որտեղ հաջորդ բ-ի ազդեցությամբ
ո դարձել է ր:

199. Բառավերջում ո մնում է ո. ձեռ —
ձառ, ձմեռ — ձմիռ, ամառ — ամուռ, վար-
լավառ — վարլիվուռ, ծուռ — ծոռ, ծառ —
ծուռ:

Ս

200. Ի բաղաձայնի բառակերպում ձայ-
նավորից առաջ մնում է ս. սեւալ — սիվ, սո-
վորել — սուրվիլ, սիրել — սիւիլ, սիսեռ —
սիսիո, սիրտ — սիրդ, սեւմ — սիւմ, սատա-
կել — սարդիլ, սանդ — սուճտ, սան — սուն,
սալ — սուլ, սողալ — սուղիլ:

201. Ի բաղաձայնի բառակերպում բաղա-
ձայնից առաջ վերջից կամ սկզբից ստանում
է մի ձայնավոր հենարան, սպանանել — թո-
բանելիլ, սպիտակ — իւրիւղիլ, սկեստ —
սղիստ, սրել — սբւփիլ, սգաւոր — սբա-
վիւր, սղուրլան — սղուրլեն, սկին — սրզեն,
սկեստայ — թագրուար:

202. Բացառությամբ է սեւամ բառը, որը
դառնում է շիւմ, շիւմք, ո — շ ձայնափոխ-
մամբ:

203. Բառամիջում ո մնում է ո. փնայ —
փիսա, սիսեռ — սիսիո, առնդ — առիդ,
բառ — բրսուն, բառասուն — բառսեն, երե-
սուն — յարսուն:

204. Բառամիջի բս հանդիպումը տալիս է
բց. վարսուն — վարցուն:

Անկ բայի ս-ն կատարյալում տալիս է ց.
սզա, աջիւր, սզունք, աջաք, աջեն:

205. Բառավերջում ո մնում է ո. չորս —
չուրս, ոս — օո, փոս — փիւս, ամիս — ա-
միւս, միս — միւս, լոյս — լայս, բոյս — պայս,
բուրս — փրփիւս:

206. Բառավերջի հետեւյալ բառերի մեջ ո
դարձել է ց. ավետիւս — ավիդից (և՛ հատուկ
անուն և՛ բարի լուր), եւրփս — նրփցէ (ի ձայ-
նավորը տեղափոխվել է), զուրս — զուրքցի,
(ավելացել է չ), Երվց բառի հետ ձայնական
ներդաշնակության համար):

(Շարունակելի)



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ո Ւ Մ

Մայիսի 3-ին, Երևանի Ս. Խաչի տոնի օրը, հավատացյալների խումն բազմաթիվաներկայությամբ Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագի ժամ էր Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանը։



Մայիսի 2—5-ին Մոսկվայից, Թբիլիսիից, Բաքիից և Սովետական Միության ուրիշ շատ քաղաքներից Ս. Էջմիածին ժամանեցին բազմաթիվ պատգամավորություններ, էքզակուրսանտների խմբեր և այլ այցելուներ։ Նրանց մեջ կային Ստալինյան մրցանակի լատիներտներ, ակադեմիկոսներ, գիտության ակադեմիկոսներ, ներկայացուցիչներ, արվեստի աշխատողներ։

Այցելուները մեծ հետաքրքրությամբ դիտեցին հնադարյան Մայր Տաճարը, ուսումնասիրեցին նրա ճարտարապետական կառուցվածքը, մանրանկարչությունը, այցելեցին Տաճարին կից եկեղեցական հնագիտական թանգարանը, եղան Վեհարանում, ուր դիտեցին արվեստի գեղեցիկ նմուշներ և տեսան Մայր Աթոռի մագաղաթյա ձեռագրերը։ Այցելուներին ոգնում և բացատրում էին միաբանության անդամները։



Մայիսի 12-ին Մայր Աթոռից Թբիլիսի մեկնեց Էջմիածնի ավագապոյն միաբաններից գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը։

Սրբազանը, Թբիլիսիի թեմի թեմական գործերը վերստուգելուց և կարգավորելուց հետո, մայիսի 21-ին վերադարձավ Մայր Աթոռ։



Մայիսի 14-ին, Քրիստոսի Համբարձման տոնի օրը, հազարավոր ուխտավորների ու հավատացյալների ներկայությամբ, Մայր

Տաճարում մատուցվեց եպիսկոպոսական սուրբ պատարագ։ Պատարագին էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Պատարագի վերջում սրբազան հայրը քարոզեց Հայրապետական Աթոռը 1441 թվականին Սաից Էջմիածին տեղափոխելու պատմական դեպքի մասին։ Նա վեր հանեց Մայր Աթոռի կատարած խոշոր պատմական, մշակութային գերազանցական և ազգահավաքման գործում։ Աթոռի փոխադրությունը Սաից Էջմիածին՝ հիմք դրեց հայության հոգևոր և նվիրական կենտրոն Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նոր զարթոնքի։

Սրբազան հայրը խոսեց նաև Էջմիածնի և Սաի Կաթողիկոսական Աթոռների բարեկամական փոխադարձ հարաբերությունների մասին և մաղթեց, որ այդ բարեկամական անկախ կապը Աստված հարատև պահի։ Վերջում տեղի ունեցան հանդես և Հայրապետական մաղթանք, ներկա էր ողջ միաբանությունը և ժողովրդի հոծ բազմություն։



Համբարձման տոնի օրը Էջմիածնից մի քանի միաբաններ մեկնեցին Արայի լեռան ստորոտում կառուցված Մաղկավանք՝ կատարելու կրոնական պաշտամունք, այդ օրը հավաքված բազմաթիվ հավատացյալ ուխտավորների համար։

Մաղկավանք ուխտի էր եկել Երևանից, Թբիլիսիից, Էջմիածնից և շրջակա գյուղերից ժողովրդի շտեմնված բազմություն։ Պատարագից հետո ամբողջ օրը սարի լանջերը թնդում էին ժողովրդական խաղերի, պարերի և ավանդական զբոսայգիների տրախձայններից։



Մայիսի 19-ին Մայր Աթոռ այցելեց Արգենտինայի բանվորական պրոֆսոնիստական պատգամավորությունը։ Պատգամավոր-

ներն բնդունվեցին պատշաճ հարգանքով էջմիածնի միաբանության կողմից. նրանց ամենամանրակրկիտ քաջատրուծություններ էր տալիս Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը:

Հյուրերն այցելեցին հնադարյան Տաճարը, եղան թանգարանում, հիացմունքով դիտեցին Վեհարանում մագաղաթյա ձեռագրերի լավագույն և արժեքավոր նմուշները, ապա նրանք մեկնեցին Երևան, իրենց հետ տանելով լավագույն տպավորություններ և Ս. էջմիածնից և՛ միաբանությունից:

Մայիսի 23-ին Մոսկվայի ճանապարհով Մայր Աթոռ ժամանեց Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ գերապատիվ Ս. Վաղդեն եպիսկոպոս Պաճյանը: Իրենանի քաղաքային կայարանում, Վեհափառի և միաբանության կողմից սրբազանին դիմավորեցին հոգեշնորհ Կոստանդին արեղա Թադևոսյանը և շնորհօրհմակ Արդիս սարկավադ Մարգարյանը:

Մայիսի 24-ին, Հոգեգալստյան տոնի կապակցությամբ Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Վաղդեն սրբազանը: Հավատացյալների խումբն ընդունվելուց Տաճարում շարժվելու տեղ չկար: Հայր մերոից առաջ պատարագիչ սրբազան հայրը քարոզեց: Սրբազանը իր քարոզի սկզբում ողջունեց հավատացյալներին՝ նա իր ուրախությունը հայտնեց, որ 4-րդ անգամ իրեն բախտ է վիճակվել լինել Մայր Հայրենիքում և աղօթել էջմիածնի դարավոր կամարների տակ: Նա պարզ ու մեկին քաջատրեց ու վեր հանեց Պենտեկոստեի, Հոգեգալստյան տոնի նշանակությունն ու իմաստը և առնչելով իր խոսքը հայ ժողովրդի կյանքի ու ճակատագրի հետ, ասաց. «Հայ ժողովուրդին վրա իջած է ու անոր առաջնորդած այդ իսկ Ս. Հոգին, որուն շնորհքներովը այն եղած է տեկուն ազգ մը, շինարար և ստեղծագործ և իր մշակութային արժանիքներուն համար պայքարող»: Վերջում նա բարեմաղթեց, որ մեր ցանկալի Սովետական Հայաստանը էլ ապիկի ծաղկի ու քարզավաճի Սովետական Միության եղբայրական մյուս ուսուցիչականների համերաշխ ընտանիքում:

Երկուշաբթի, հունիսի 1-ին, «Արքոց կուսանացն Հոփսիմեանց» տոնի օրը, մեծ հանդիսավորությամբ սուրբ պատարագ մատուցվեց Հոփսիմեի տաճարում: Պատարագիչն էր վանքի վանահայր Ս. Նահապետ արեղա Մուրադյանը: Տաճարը լիքն էր հա-

վատացյալների խումբն բազմաթյամբ: Պատարագի վերջում տեղի ունեցավ հոգեհանդիստ, նվիրված Հոփսիմեանց կույսերի հիշատակին: Պատարագին ներկա էին Ս. էջմիածնի միաբանությունը, Հոգևոր ձեռնարանի սաները:

Հունիսի 2-ին, «Արքոց կուսանացն Գալիանեանց» տոնի օրը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց Ս. Գալանեի վանքում: Պատարագիչն էր Ս. Կոստանդին արեղա Թադևոսյանը: Երևանից և շրջակայքից հավաքված հավատացյալների խումբն ընդունվեց իր տաճար, Հարյուրավոր մոմեր էին բոցկտում խորանի անմիջապես տակը գետնափոր խուցում, սուրբ կույսի գերեզմանի վրա:

Սուրբ պատարագից հետո, վանքի դավթում կատարվեց հոգեհանգիստ, հիշվեցին զավթում թաղված հայոց հայրապետները:

Հունիսի 4-ին, «Յովհաննու Կարապետի և Աթանասիանայ եպիսկոպոսի» տոնի օրը, Ս. Շողակաթի վանքում տեղի ունեցավ հանդիսավոր սուրբ պատարագ: Պատարագիչն էր Ս. Մկրտիչ քահանա Մկրաշյանը: Վանքի մոմերով, վարդերով ու կանաչով զարդարված էր Մարիանե կույսի գերեզմանը:

Սուրբ պատարագի վերջում տեղի ունեցան հոգեհանգստյան սրբազան արարողություններ:

Հունիսի 6-ին, «Արքոց Գրիգորի Կուսատրեչին մերոյ ելն ի վիրապէն» տոնի օրը, Մայր Տաճարը լիքն էր հավատացյալների խումբն բազմաթյամբ: Տոնականորեն զարդարված ու լուսավորված Իջման սեղանի վրա տեղի էր ունենում հանդիսավոր սուրբ պատարագ:

Երեկոյան, զանգերի մեղմալուր հնչյունների տակ, աղոթիս Վեհափառ Հայրապետը հանդիսավոր թափորով խնում է եկեղեցի, ժողովրդի անթիվ բազմությունները շրջապատել են թափորը: Վեհը արդեն Իջման սեղանի առջև է և իր սովորական ղեկավարն է մրմնջում: Տաճարը հաճելիորեն լուսավորված է, ամեն ինչ տոնական ու զվարթ է Տաճարում:

Երեկոյան ժամերգությունից հետո, ողջ միաբանության մասնակցությամբ տեղի է ունենում դիշերային հսկում: Ուշ երեկոյան հանդիսավոր թափորով Վեհափառ Հայրապետը ուղեկցվում է Վեհարան:



Հունիսի 7-ին, ռՍՍԿ Կաթուղիով Ս. էջմիածնի օրը, Մայր Տաճարի շրջափակը լեցվել էր շրջակայքից եկած ուխտավորների մի ահագին ընդմիջումով: Տոնականորեն դարձրված ու պայծառ լուսավորված էր Ս. Իջման սեղանը: Պատարագի ժամ էր գերաշնորհ Ս. Վազգեն սրբազան եպիսկոպոսը: Տաճար էր իջել Վեհափառ Հայրապետը:

Շալար մերձից առաջ պատարագի սրբազանը քարոզում է: Նա իր քարոզով վեր է հանում այն խոշոր նշանակությունը, որ ունեցել է Մայր Աթոռ Ս. էջմիածնի ամբողջ հայության կյանքի վրա, դրվատում է Գեորգ Զ. Վեհափառ Հայրապետի գործունեությունը, որը հայ ազգի հայրենասեր զավակների հետ մի սիրտ մի հոգի դարձած, ամեն կերպ աշխատում է պայծառ ու շին պահել Ս. էջմիածնի: «Դարեր են մեզ ավանդված ձեռքով խորան» Ս. էջմիածնի իրապես մեզի լույսի աղբյուր է, եղած է, մեր հավատքին գործավոր հիմքը, — վերջացրում է սրբազանը իր խոսքը:

Սուրբ պատարագից հետո տեղի է տեւելում Հայրապետական մազթանը:

Մազթանից հետո Վեհը և ամբողջ միաբանությունը զգեստավորված, հանդիսավոր թափորով դուրս են գալիս: Բոլորը ցանկանում են համարել Վեհի աչքը: Ժողովուրդը ախպիսի մեծ ցանկությամբ է շրջապատում Վեհին, որ թափորը երկար ժամանակ Տաճարից դուրս չի կարողանում գալ: Վեհարանի դռանը Վեհը հետ է դառնում, օրհնում ժողովրդին և շնորհավորում օրվա տոնի կապակցությամբ:



Հունիսի 8-ին, սկսվեցին Հոգևոր Ժամադարանի տարեկան քննությունները: Ժամադարանի տաները ինչպես միշտ, այս անգամ նույնպես մեծ հաջողությամբ հանձնեցին առաջին քննությունները: Քննություններին ներկա էին և սաների պատասխանները ուղարկել լսում էին Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Ժամադարանի վերատեսուչը և ուրիշներ:



Հունիսի 17-ին Մայր Աթոռից Ռոստով (Նոր-Նախիջևանի թեմ) մեկնեց գերաշնորհ Ս. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, տեղի թեմական գործերը կարգավորելու և կարգադրություններ անելու համար:



Հունիսի 20-ին, շաբաթ օրը, «Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսավորչին» տոնի առթիվ Մայր Տաճարում մեծ հանդիսավորությամբ մատուցվեց սուրբ պատարագ Ս. Իջման սեղանի վրա: Օրվա պատարագին էր արժանապատիվ Ս. Խորեն ավագ քահանա Նուշանյանը:



Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ Հունիսի 21-ին, երեկանի Ս. Զորավար եկեղեցում, հավատացյալ ժողովրդի և հոգևորականության ներկայությամբ, դերաշնորհ Ս. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը տիրացու Գրիգոր Տեր-Նսալանին՝ ձեռնադրեց ավագ սարկավագ: Զեռնադրության խորհրդին ներկա էին նաև էջմիածնի միաբանությունից գնացած ներկայացուցիչներ:



Հունիսի 25-ին, «Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ» տոնի օրը, Ս. էջմիածնի միաբանությունը, Հոգևոր Ժամադարանի ուսանողությունը, վերատեսուչը և ուրիշներ մեկնեցին Օշական գյուղ՝ Ս. Մեարոպի գերեզմանի վրա հանդիսավորապես տոնելու օրվա տոնակատարությունը: Մատուցվեց սուրբ պատարագ: Պատարագին էր բարձրապատիվ Ս. Կոստանյան արեղա Թառնյանը: Հավոր պատշաճի քարոզ խոսեց գերաշնորհ Ս. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը: Պատարագից հետո տեսա՛նողությունը այցելեց Օշականի մի շարք պատմական հնություններ, որից հետո ընդհանուր միաբանական սեղանի շուրջը, ուրախ ու ջերմ մթնոլորտում, բաժակաճառերով շնորհավորեցին իրար Ս. Մեսրոպի տոնի կապակցությամբ: Վերջում, Հոգևոր Ժամադարանի վերատեսուչը բարեմաղթեց ուսանողներին ու երիտասարդ սարկավագներին՝ մեծ ուսուցիչներ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի օրինակով, ձեռք բերել նորանոր դիտելիքներ, ուսման մեջ հաղթել ամեն մի դժվարություն և դառնալ նրանց արժանավոր հաջորդները:



Հունիսի 28-ին, կիրակի, «Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի» տոնն է: Նույն օրը լրացավ Ամենայն Հայոց Ս. Տ. Գեորգ Զ. Մայրադույն Պատրիարքի և Կաթողիկոսի օժման 8-րդ տարեդարձը:

Մայր Տաճար էր հավաքվել հավատացյալների մեծ ընդմիջումով: Հավատացյալներ էին եկել Հայաստանի զանազան քաղաքների:

րից, անգամ հարեան ռեսպուբլիկաներից՝ Բրիտիսից, Բաքվից, Կիրովաբադից և այլն:

Կիրակնօրյա սուրբ պատարագին Վեհփառ Հայրապետը հանդիսավոր թափոռով ներս է մտնում Տաճար, Զանգակները դրսում դողանքում են, ավիտելով Վեհի զալուստը: Տաճարը վեհօթյամբ է լցվում: Հաւատամքից հետո շուտով Վեհը բազմում է զահին: Պատարագը շարունակվում է: Պատարագի վերջում տեղի է ունենում Հայրապետական մաղթանք: Բոլորը շրջապատում են Ս. Իջման սեղանը: «Հրաշափառ Աստուած» շարականի վեհասքանչ հնչյունների տակ, օրվա հանդիսագիր գերաշնորհ Տ. Վուհան արքեպիսկոպոսը զալիս, տեղ է բռնում Վեհի կողքին: Ետևով նա քարոզ է տալիս: Արբազանք ունի ու պատկերավոր արտահայտություններով վեր է հանում Վեհփառ Հայրապետի՝ կաթողիկոսության 8 տարիների ընթացքում ցուցաբերած նուսնզուն գործունեությունը: Վեհփառ Հայրապետը, վերջացնում է իր խոսքը սրբազանք, — Հայ եկեղեցու եզակի կաթողիկոսներից է որոնք

փայլում են իրենց գործունեությամբ Ս. Հոստովորչի զահի վրա: Մաղթենք, սիրելի՛ք, և ազոթենք, որ ամենարարձրյալն Աստված երկար կյանք, քաջատոգչություն ու արևշատություն պարգևի իր ընտրյալ Հայրապետին, որպեսզի նա աշխուրջ ու հայրական սիրով լովի իր հավատացյալ հոտին երկար տարիներ:

Գահարանական ազոթքից հետո խոսմբը երգում է «Էջ Միածինն ի Հորդ» հոգեպարայն շարականը:

Արբազան արարողություններից հետո Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ժամարանի վերատեսուչը և այլ անձինք Վեհարանում շնորհավորում են Վեհփառ Հայրապետին նրա զահակալության 8-րդ տարեկիցի տոթիվ: Վեհփառը խոսում է Հայոց Հայրապետի սրբազան պարտականությունների մասին՝ հանդեպ իր Հայրենիքի և իր ժողովրդի:

Վերջում բոլորը համարելով Վեհփառ Հայրապետի Ս. Աջը, ուրախ ու գոհ դուրս են գալիս Վեհարանի Մաղկյա զահիճից:





ԻՌՈՐԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՈՒՒՏԱԴՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԳԵՊԻ ՕՇԱԿԱՆ

(Հիմնադրվել է 25 հունիսի 1953 թ.)

«Ուրբան» թերթի տնօրինությունը գիտատեսական և գեղարվեստական խմբագրություն է, որի գլխավորը ինքն է։

ՇԱՐԿԱՎԱՆ ԹԱՐԿԱՎԱՆՑԱՅ



Ինքնագրի առաջին է. Ս. Էջմիածնի միաբանությունը, Հոգևոր ճեմարանի ուսանողությունը պատասխանում են մեկնելու Օշական, այնտեղ կատարելու եկեղեցական հանդես և տոնելու ազգային մեծ տոնը. «Տօն է սրբոց թարգմանչացի մերոց Սահակայ և Մեսրոպայ»։

Հայ ուխտավորը, հայ մանուկն ու ծերը այսօր շտապում են Օշական, մի անգամ էլ խոնարհվելու, համարվելու իրենց երանելի մեծ ուսուցչի, հայ ժողովրդի ամենահանձարեղ մարդու, հայ գրի ու գրականության սկզբնավորողի ու տարածողի խնկելի ու նվիրական գերեզմանը։

Հունիսի այսօր արեգակը ղենիթից իր կրակն է թափում, Մեր ավտոմեքենան արդեն սլանում է էջմիածնից Օշական տանող դաշտամիջան ճանապարհով։ Չորս փողմը փռված են համալսարանի մշակված անծայրածիր դաշտերը։ Մեր ետևում, ամբողջ հորիզոնով մեկ ծավալվում է Արարատյան կանաչ ու բերքառատ դաշտը, մինչդեռ հեռվում վեհորեն վեր խոյացած Մասիսը, իր ձյունափայլ գագաթով, կարծես գալիս է մեղմացնելու Արարատյան դաշտավայրի միջոցի այսօր ու հեղձուցիչ տապը։ Առջևում ցորենի արտերի, խաղողի այգիների ու երկնասլաց բարդների կանաչ համալսարանները հասնում է Արագածի ծաղկավետ փեշերին։ Շուտով ճանապարհը դառնում է զառիվեր։

Շրջանցելով բլուրները, մոտենում ենք Քասաղ գետի ձախ ափին։ Առջևում ձորն է. աննման գեղեցիկ տեսարանը շրջնում է բոլորին։ Հեռվում, ձորի մյուս ափին, կանաչ ծառերի ֆոնի վրա, կարմրին է տալիս Օշականի եկեղեցու սլացիկ զանգակատունը։

Ահռելի դիսպատույտ դառնալով, ավտոմեքենան դանդաղ ուղղվում է ճանապարհով, անցնում կամուրջով, մի քանի զառիվեր ուղարկատուներ և ահա տեղ ենք հասնում։

Եկեղեցու բակը լիքն է ուխտավորների խայտառղետ բազմությամբ։ Եկել են շրջակա շենքերից, գյուղերից, քաղաքներից, Երզնի, Կապադի, ուրախության ձայնները խառնվել են իրար, մի փոքր հեռու հայ ուխտավորը իր ավանդական մատաղն է դնում, իսկ ամենից հետաքրքիրն են հայկական աննման գեղեցիկ սլաքները, որոնք իրենց ամբողջ ճկունությամբ ու նազանքով ցուցաբերվում են այդ օրերին։

Մեծ դժվարությամբ ճեղքելով ժողովրդի հոծ լիցքությունը, մտնում ենք եկեղեցի։ Անպաճույճ, պարզ ու տապալուրիչ է եկեղեցու ներսը։ Պատարագի սեղանի, խորանի աջ կողմում կա մի դուռ, որտեղից աստիճանները տանում են դեպի ստորերկրյա մի նեղ մուկ խուց, խորանի անմիջապես տակը։ Ինչու ենք աստիճաններով ներքև, ներս մտնում ենք դռնից։ Մեր առջև բացվում է մոմերով լուսավորված մարմարե ոչ այնքան շքեղ մի գերեզման. դա Մեսրոպ Մաշ-

տոցի գերեզմանն էլ, Համբարձումյան հանգիստն ու անդորրն են իշխում այստեղ. առկալծող մոմերը թույլ լույսով լուսավորում են ստորերկրյա խցի խնկից ու մոմից խոնացած հնադարյան պատերը: Հուլիսյան մագնիսացքով էլ քոլորին: Պահլու հուլիս է ու անկրկնելի: Այդ պահի մեջ կարծես դարձնում է հազարամյակներն են խտացել ու մեղմ ու հուշիկ շնչում են ականջիդ անցյալի նվիրական ղեկավարի ու ղեմների մասին: Մի երկվայրկյան, ու միտքը թռչում, սահում է անցյալի մշտնապատ հետուն, ուր դարավոր պատմության նվիրական խորքից, կարծես այսօր, քեզ է նայում հայ գրերի դուռի հանձարող հեղինակ Ս. Մեսրոպ Մաշտոցը: Միայն հայ ժողովրդի անցյալի դարավոր տառապանքներով լի պատմությունը ուսումնասիրելուց, կարդալուց հետո է, որ կարելի է գնահատել ու արժեքավորել այն մեծ ու խաշոր գործը, որ կատարել են Մեսրոպ Մաշտոցը և նրա հետ միասին Սահակ Պարթև կաթողիկոսը և 5-րդ դարի մեր մյուս թարգմանիչները:

387 թվականից հետո, երբ Հայաստանը բաժանված էր երկու հարևան պետությունների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, հայոց եկեղեցիներում սկսում են իշխող հանդիսանալ ասորի և հույն հոգևորականները, որոնց լեզուն (այդ լեզուներով բարոյվում էր Ս. Գրիգոր) անհասկանալի էր ժողովրդին: Քրիստոնեությունը երկրում միայն անունով էր տարածված, քրիստոնեական դադափարները մատչելի չէին ժողովրդին, իսկ հայ գիրը դեռ չկար: Պարսկաստանը, իր մասի Հայաստանում, գրադաշտականությունը ասարածելու միջոցով ևույժան փորձեր էր կատարում: Նույնպիսի ոտնձգություններ էին տեղի ունենում նաև հունաց բաժնում: Օրհասական էր Հայ եկեղեցու, հայ ժողովրդի դրությունը, նրանց հարկավոր էր հաստատուն կոման ու պատենչ այդ բոլոր ոտնձգությունների դեմ պայքարելու համար: Նրանց հարկավոր էր հայերեն գիր ու դրականություն: Եվ ո՞հա ձանդեմ է դալիս Մեսրոպ Մաշտոցը, ճարտն դավառի Հացեկաց գյուղից, Վարդան անունով մի «երանելի մարդու որդի: Մեսրոպը իր դարմանալի, գործունյա եռանդով ու աշխատանքով, վերջապես կարողանում է

գյուլս բերել այդ բարդ ու դժվարին գործը: Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վատն իւրոյ ազգին բարեաց ինչ «ճան դտանելոյ» Որում պարզներ իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ձեռնդս նորոյ և սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուինս՝, — գրում է նրա վարքագիր Կորյունը:

412 թվականին Սամոսատ քաղաքում Մեսրոպը վերջնականապես ձևավորում է հայերեն այբուբենի տառերը:

Շուտով Մաշտոցը իր խմբով վերագտնում է Վաղարշապատ: Թաղավորը (Վումշապուհ), կաթողիկոսը (Սահակ Պարթև) և ամբողջ արքունիքը խնդությունով դիմավորում են Մեսրոպին: Մեսրոպը, տեղ հասնելուն պես, սկսում է, իր եռանդուն գործունեությամբ, երկրի ամեն կողմերում դպրոցներ բանալ, հավաքել երիտասարդներին ու հայ դիրն ու դպրությունը ուսուցանել: Ի դեպ, սովորող այդ առաջին հայ երիտասարդների մեջ էին արքունիքի երեխաների զավակները, ինչպես Սահակ Պարթևի թոռը՝ Վարդանը, ապագա Վարդանանց պատեհապետ հերոսը:

Մեսրոպը անցնում է հունաց բաժնի Հայաստան, ուր նույնպես իրականացնում է հայոց լեզվի դործածությունը եկեղեցիներում և դպրոցներում: Վերջապես նա հորինում է գրքեր, թարգմանություններ անում, ուսուցչություն անում, քարոզում քրիստոնեություն երկրի հեթանոսական շրջաններում:

Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի՝ այս առաջին հայ ուսուցիչների ձեռքի տակ, ամենայն խնամքով աճում է առաջին հայ թարգմանիչների համաստեղությունը, այն է՝ Հովհան Եկեղեցացի, Հովսեփ Պաղանցի, Եղեթիկ Կողբացի, Կորյուն, Մուշե և այլն: Սկսվում է մի շտեմնված գրական եռուգետ: Սահակ Պարթևի անմիջական ղեկավարությամբ սկսվում է Ս. Գրիգոր հունարեն օրինակից հայերեն թարգմանությունը: Ամենակարճ ժամանակամիջոցում Մաշտոցն ու

1. Կորյուն, Վարդ Մաշտոցի, Արևան, 1941 թ., էջ 48:

իր գործակիցները վիթխարի մշակութային աշխատանք են կատարում:

Հայ գրի ու գրականության ստեղծումով հայ ժողովուրդը ստացավ դադափարական մի հզոր ու անխոցելի զենք. այդ զենքը դարերով պաշտպանեց նրան ձուլման վտանգից, աշխարհի երեսից անհետանալուց, դարերի ընթացքում իր գրի ու գրականության միջոցով նա պահպանեց իր հազարամյա մշակութային, արվեստը, երաժշտությունն ու ճարտարապետությունը:

Հայ գիրն ու գրականությունը դարերով եղել է այն միացնող թանկագին ոսկե օգակը, որը ի մի է ձուլել, մի սիրտ, մի հոգի է դարձրել ի սփյուռս աշխարհի ցրված, օտար անհյուրընկալ հորիզոններում ղեղնորդ հայ ժողովրդի տարագիր զավակներին:

Հայ գրերի գյուտի անխոցելի հեղինակն ու հայ առաջին մեծ ուսուցիչը, գիշեր ու ցերեկ, առանց դադարելու, տքնաքան աշխատելով, յուրացնելով ու տարածելով լուսավորության մեծ գործը, 440 թվականի մեհակն ամսի 13-ին (փետրվարի 17-ին) Վաղարշապատում, շրջապատված իր սիրասուն աշակերտներով, խոր ծերության հասակում վախճանվում է: (Իսկ նրանից առաջ վախճանվել էր Սահակ Պարթև կաթողիկոսը և թաղվել Բագրեանդի Բլրոցաց գյուղում 439 թվականին): Մեծ հանդեսով, ժողովրդի բազմությամբ, նրան տանում թաղում են Վահան Ամատունու սեփական կալվածում, Օշականում: Իսկ այնուհետև, Կորյունի վկայությամբ, «...յետ երից ամաց անցելոց յաջողեցան Վահանայ Ամատունու քրիստոսասէր փութով խորան սքանչելի կանգնել տաշածոյ վիմօք քանդակելովք, և ի ներքսադոյն խորանին զսրբոյն հանգիստն յօրինեալ...»²:

Հետագայում նույն եկեղեցու բակում է թաղվում նաև Վահան Ամատունի իշխանը, աշակերտը իր ուսուցչի կողքին, դարերով համիտենական սիրով շաղկապված:

Մի քանի տեղեկություններ տաճարի շինության վերաբերյալ:

Վահան Ամատունու շինությունից հետո, տեղեկություններ տաճարի շինության կամ

նորոգության վերաբերյալ մեզ չեն հասել: Սակայն ինչպես նշել ենք է վկայում, 451 թվականի դեպքերի ժամանակ, ավերվել է Օշականը, հավանաբար վնասվել է նաև տաճարը և ապա նորոգվել: Այս շրջանին վերաբերյալ տաճարը չունի և ոչ մի արձանագրություն: Ամենահին արձանագրությունները Պարոն Սահմադինի թողած մի քանի կալվածագրային արձանագրություններն են (1286—1295 թ. թ. ընկած ժամանակամիջոցում): Քանի որ այս արձանագրություններում չի հիշատակվում տաճարի նորոգության կամ վիճակի մասին որեէ տեղեկություն, պարզ է, որ այս շրջանում տաճարը չեղել է չեն վիճակում:

Այնուհետև երկար ժամանակ ոչ մի տեղեկություն չկա, մինչև Առաքել Դավթիսեցի պատմագրի հիշատակությունը: Դավթիսեցին գրում է. «... Արդ այս տաճար հանգրստարանի սրբոյն Մեսրոպայ վարդապետին ի վաղ ժամանակաց ըովանդակ տանիքն փրկեալ իջեալ էր, և միայն առաջ խորանն էր մնացեալ ծածուկ, և ի ժամանակս կաթողիկոսութեան իւրոյ, սուրբ հայրապետ Փիլիպպոս սկսաւ դայն ևս նորոգել՝ որ և կատարեաց բազում ծախիւք և աշխատութեամբ, խարտեալ քարիւ և մածուցեալ կրով մինչև աւարտեաց զըովանդակն ի թուականիս մերոյ ՌՂԴ (1645 թ.)»³:

Նորաշին այս տաճարը նույնպես շուտով քայքայվում է, մինչև որ Գեորգ Դ. շինարար կաթողիկոսը 1875 թվականին գրեթե ամբողջությամբ շինում ու նորոգում է տաճարը, իսկ 1884 թվականին Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանի ձեռքով, Մաշտոցի գերեզմանի վրա դրվում է մի մարմարյա տապանավեմ (Անդրեաս արքեպիսկոպոսի կուակի համաձայն) հետևյալ արձանագրությամբ:

ՏՅամի Տեառն 441, փետրվարի 20, Վահան Ամատունի իշխան ամփոփելով աստ յՕշական զմարմին սրբոյ վարդապետին մեծին Մեսրոպայ թարգմանչի, կառուցեալ է ի վերայ դամբարանիս յանուն նորին զեկեղեցիո, զոր նորոգեաց յամի 1640 Փիլիպպոս կաթողիկոս. և վերջնումս յամի 1875 նորոգեաց

3. Պատմութիւն Առաքել Դավթիսեցւոյ, Վաղարշապատ, 1884 թ., էջ 271:

2. Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 94:

Տ. Գէորգ Դ. կաթողիկոս, որոք ժողովրդեան հայոց նրեանայ և այլ վիճակացն Ռուսաստանի Իսկ դտապանս կանդնեաց ի յիշատակ՝ Կ. Պօլսեցի Անդրէաս արքեպիսկոպոսն, յամին 1884, և հայոց ՈՅԼԳ»:

Տաճարի արեւելյան կողմում գեղեցիկ քանդակազարդ գանդակատուներ նույնպէս 1884 թվականի շինութիւնն է: Տաճարը արտաքուստ ունի երկարավուն ուղղանկյան ձև, կամարակապ կանոնավոր լուսամուտներով ու արևմտյան և հարավային դռներով: Տաճարի նախնական ճարտարապետական կառուցվածքի մասին անվանի ճարտարապետ Ռորոս Թորամանյանը հետևյալ կարծիքն է հայտնում.

«Այս եկեղեցին ալ, 5-րդ դարու ուրիշ եկեղեցիներու նման ունեցել է արեւելյան կողմին դեպի հյուսիս և հարավ դուրս ցցված թեկեր, որոնց հիմերը մինչև այժմ կերելն հողին երեսին: Գեորգ կաթողիկոս ավելորդ համարելով այդ մասերը վերաշինել, իսպառլանդեր է. այս տիպի եկեղեցիներ են՝ Տեկոր, Երերուլք, Օձուն, Արթիկ»:

Կնաօրից անց է, երբ տաճարում սկսում է սուրբ սյուսարապի արարողութիւնը: Ներկա դտնվող հոգևորականութիւնը, հանդիսավոր ու տոնական զգեստավորված, կանդնած է

դասում: Սրբազան մեղեդիներ, շշնջածայն սրտառու լաղթրներ ձայների մեղմածայն եկեղեցիներ լոյում են յուրաքանչյուրի լսելիք և խնկի բուրումնավետ կապտավուն ծխի մշուշի հետ պարուրվում վերև: Սարկավազը խորանի բնմից արդեն հիշատակում է Հայ եկեղեցու նվիրական անձերի անունները. «...Սահակայ, Դանիէլի և Խաղայ, Մեսոպրայ վարդապետին...»:

Պատարագը ավարտվում է, մի վերջին անգամ, սրտի աննման ու անկրկնելի թրթռոցով խոնարհվում, համբուրում ենք հայ մեծ մարդու գերեզմանը և դուրս գալիս տաճարից:

Դրսում, եկեղեցուն դեմ-հանդիման կառուցված է Մեսրոպ Մաշտոցի անվան երկհարկանի գեղեցիկ ու լուսավոր լրիվ միջնակարդ դպրոցը:

Մի առժամանակ հանդսասանալուց հետո, պատրաստվում ենք վերադառնալու: Կանդնել ենք քարափի զլխին և սպասում ենք մեր ավտոմեքենային, ներքեում անդնդախոր ձորն է, Բասաղի ալիքները անդուսպ թռչում են քարերի զլխով և խուլ վշշոցով կարծես դարերի հավիտենական երդք մրմնջում սրբի գերեզմանի վրա:

Շուտով երևում է մեր ավտոմեքենան: Բոլորս տեղավորվում ենք, Ավտոն շարժվում է: Վերջին անգամ հայացքով մնաս քարով ենթաստամ Մաշտոցի գերեզմանին:

1. Ռորոս Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, Երևան, 1942 թ., էջ 243:





ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԵՍ ԴԱՋԼԻՃԸ



ալիսի 17-ին, կիրակի երեկո-
յան, մեծ հանդիսավորությամբ
կատարվեց Հայֆիլհարմոնիա-
յի համերգային նորակառույց
մեծ դահլիճի պաշտոնական բացումը։ Այդ
առթիվ դահլիճում տրված առաջին ճոխ հա-
մերգը կազմակերպվել էր ի պատիվ ճար-
տարապետական այս հույակապ կոթողի
բարդ ու նրբարվեստ շինարարության վրա
աշխատած բանվոր-ծառայողների բազմա-
մարդ կոլեկտիվի՝ որպես շնորհավորություն
այդ համբերատար և ճաշակավոր շինարար-
ների կատարած շնորհակալ աշխատանքին։
Համերգին մասնակցեցին Հայֆիլհարմոնիա-
յի սիմֆոնիկ նվագախումբը, Պետական եր-
գեցիկ խումբը, Երգի-պարի վաստակավոր
անսամբլը, Ալեքսանդր Սպենդիարյանի ան-
վան կվարտետը և Օպերայի ու Բալետի պե-
տական թատրոնի հայտնի արտիստներից
ոմանք։

Այդ օրերին Հայաստան եկած նիդերլան-
դական (հոլանդական) պատվիրակությունը
դիվանավորող ականավոր հրապարակագիր Յան
Վան Ջեդեկենը, որ ներկա էր գտնվել այդ
համերգին, խոսելով Հայաստանի հեռագրա-
կան գործակալության թղթակցի հետ վերա-
ծնված ու վերակերտվող Հայաստանից
պատվիրակության կրած տպավորություն-
ների մասին, ի միջի այլոց, այսպես էր
ընդամենը համերգային նոր, մեծ դահլիճը։
«Հայաստան կատարած մեր այցելությունը
երջանիկ պատահմունքով ղուպաղիպեց հայ
ժողովրդի կուլտուրական կյանքի կարևոր

իրադարձությանը՝ Հայկական ֆիլհարմո-
նիայի համերգային դահլիճի բացմանը։ Այդ-
պիսի դահլիճ ունեն եվրոպական պետու-
թյունների ո՛չ բոլոր մայրաքաղաքները։
Մենք նույնիսկ երևակայել չէինք կարող, թե
կմտնենք կուլտուրայի իսկական պալատ, ո-
րը հիացմունք է պատճառում իր գեղեցկու-
թյամբ և հույակապությամբ։

Եվրոպայից և Ամերիկայից Հայաստան այ-
ցելող պատվիրակություններին անխտիր
հիացմունք պատճառող Հայֆիլհարմոնիայի
նոր շենքը երկրորդ կեսն է այն հույակապ,
փառաշուք, սովետահայ նորագույն ճար-
տարապետությամբ կառուցված սքանչելի
կուլտուրական պալատի՝ Ալեքսանդր Սպեն-
դիարյանի անվան Օպերայի և Բալետի պե-
տական թատրոնի, որ գրանիտե սրբատաշ ու
գեղաքանդակ քարերի ճարտար համադրու-
թյամբ բարձրանում է մայրաքաղաքի կենտ-
րոնական մասում, Լենինի պողոտայի,
Ստալինյան պողոտայի, Տերյանի և Լեւոն-
տովի պողոտաների հատման կետի վրա։ Ակա-
ցիաների, թիւկիների, հացենիների, գեղու-
ղեշ բարդիների, լայնատերե ճանտարիների
(չինար), մշտադալար շոճիների և հազար ու
մեկ տեսակ այլ զարդածառերի և բուրավետ
ծաղկաստանների միջից երկնասլաց խոյա-
ցող այդ հավերժական կոթողը գործն է ճար-
տարապետ Ալեքսանդր Հովհաննիսի Թոման-
յանի։

1878 թվականին Եկատերինոդարում (այժմ
կրասնոդար) ծնված, 1898 թվականին Պե-
տերբուրգի (այժմ Լենինգրադ) Գեղարվեստի
ակադեմիային կից Գեղարվեստի բարձրա-
գույն ուսումնարանի ճարտարապետական

բաժանմունքն բնդունված և նրա դասընթացը 1904 թվականին ճարտարապետ-արվեստագետի կոչմամբ ավարտած, որպես նորաձագակ և խոտապահանջ գեղարվեստագետ իրեն դրսևորելով, 1914 թվականին Մոսկվայի լակագույն շենքի (իշխան Նչերրակովի տան) նախագծման և շինարարության համար ոսկե մեդալի և այդ և արվեստի ասպարեզում ունեցած ուրիշ մեծ հաջողությունների համար Գեղարվեստի ակադեմիայի կողմից ճարտարապետության ակադեմիկոս աստիճանի արժանացած Ռաֆայելյանը, անվտանգ բնդունելով Հայրենիք վերադառնալու հրավերը, եկել էր Հայաստան (1920 թ.)

Հայաստանի Սովետական կոոսովարությունը գրկաբաց ընդունել էր Գեղարվեստի

և տվել սովետահայ ճարտարապետության նորագույն յուրահատուկ ոճին, որի յուրացնողներն ու արժանավորապես շարունակողներն եղան նրա աշակերտներն ու հետևորդները՝ ՍՍՌՄ-ի ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ Ս. Սաֆարյանը, նույն ակադեմիայի թղթակից անդամ Շ. Մարգարյանը, Լենինի հրապարակում Լենինի սթանշելի հուշարձանի ստեղծողներ Վարդանյանն ու Պարեմազովան, Քանաքեռի բարձունքի վրա Ստալինի երկնակալակառուցված փառահեղ մոնումենտ-թանգակի ստեղծիչ՝ Ստալինյան մրցանակի լավորեալ Ռ. Իսրայելյանը, Մ. Գրիգորյանը, Գ. Աղաբաբյանը, մեծանուն ակադեմիկոսի որդին՝ Գ. Ռամանյանը և ուրիշները:



Հայկական ֆիլիսոփոսիայի հուշակոթողը Ռաֆայելյանի մեծ դանլինի նսկաար

ակադեմիայի նախագահի տեղակալ ակադեմիկոս Ռաֆայելյանին և շինարարության ասպարեզում անսահմանափակ լիազորություններ տալով նրան, նշանակել Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի ղլխավոր ճարտարապետ և Հայաստանի ճարտարապետական հնությունների պահպանության կոմիտեի նախագահ: Այդ օրվանից մինչև իր մահը (1936 թ.), ամբողջ տասնվեց տարի, Ալեքսանդր Ռամանյանի ճարտարապետական հանձնարը գործմվելով յուրաքանչյուր ճարտակառուցի վրա, ծնունդ

Ակադեմիկոս ճարտարապետ Ռամանյանի հիմնադրած ճարտարապետական ոճի մեծությունը կայանում է ալի իրողության մեջ, որ նա ստեղծեց բովանդակությունը սոցիալիստական, բայց հայ ազգային ճարտարապետության ամենագեղեցիկ ձևերով ու մոտիվներով հագեցած հրաշակերտներ, բուլբուլն էլ համաձայն աշխատավոր ժողովրդի և նոր կյանքի պահանջներին: Ուր են հին իրանյի նեղ ու փոշելից փողոցները, հողաշեն կոտորներով ցածրիկ տները, տնամերձ խուպան հողերի վրա մեծղները բույն դառած

նեխած ջրով ճահիճները նրանք անհետ կորել են այժմ, տեղ տալով ասֆալտապալային պողոտաներին, բազմաշարկ բնակելի տներին, հիանալի դպրոցներին, կուլտուրայի ու հանգստի դրոսայգիներին, լայնարձակ հրապարակներին և բյուրացան ծառերով ու ծաղիկներով զարդարված պուրակներին, շնորհիվ թամանյանի հղացած նախագծի, որի հիման վրա են կատարվում ներկայումս էլ հսկա թափով առաջ տարվող մեծամեծ շինարարությունները:

Սովետահայ ճարտարապետության նորագույն ոճի հիմնադիր թամանյանի հանձարին ենք պարտական կառավարական տունը, Աստղադիտարանը, Ալեքսանդր Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանը, Պոլիտեխնիկական, Գենեոլոգիական, Զիզիոթերապևտիկ, Անաստասուսական ինստիտուտները, Մանկական կլինիկան, Հրադանի գեղածածուկ ձորում կառուցված Նրդեսը և մանավանդ Օպերայի և բալետի պետական թատրոնը, որի հյուսիսային կիսաշրջանակն է կազմում Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանակիր Հայկական ֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճը (մեծ դահլիճ, որովհետև Արուսյան փողոցի վրա մնում և շարունակում է գործել Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճը):

Պատկառելի տեսք ունի համերգային նոր դահլիճի արտաքինը գրանիտյա բարձրաբերձ սյուների կառավարները զարդարող խոյակներով, գեղարվեստի զանազան ճյուղերը խորհրդանշող քանդակներով, լայնանիստ դռներով ու պատուհաններով: Բայց գերազանցորեն գեղեցիկ, հետաքրքրական և տպավորիչ է նրա ներքին տեսարանը:

Լայն, օդասուն, ջահագարդ նախասրահից դեպի երկրորդ հարկի զբոսասրահ բարձրանում ես սպիտակի վրա կարմրերակ մարմարե աստիճաններով, որոնց վրա, վարից վեր փովել է երևանյան երկար գլուզը: Զբոսասրահում էլ լույսը հորդում է առատորեն, թորեղդ ուղում են առողջ օդով, աչքերդ լսվում՝ առաստաղի նրբարվեստ զարդաքանդակների հետ պատուհաններից երևացող մերձակա զբոսայգիներից բացի, հյուսիսում՝ Քանաքեռի բարձունքի և արևելքում՝ Նորքի այգեստանների ընդարձակ պուրակ-անտառների ակնապարար կանաչությունները:

Զբոսասրահի վրա բացվող ամֆիթատրոնից, պարտերի, 32 օթյակների և 2 յարուսների ղռներից որևէ մեկով դահլիճ մտնողը այն տպավորություն է ունենում, որ գրտնրվում է հեթաթային հրաշալիքներով լի մի պալատի մեջ, որի 200 քառակուսի մետր տարածություն ունեցող բեմի վրա մայրաքա-

ղաքի առաջնակարգ արտիստները շտաով երգում ու երաժշտությամբ, պարով ու լեզվաթափոսությամբ զվարճացնելու են 1.400 հանդիսականներին:

Զմայելի է 36 մետր բարձրության վրա, որպես երկնակամար տարածվող առաստաղը, որի գեղազարդ և քովանդակալից զարդաքանդակների միջից վար են կախվում յուրաքանչյուրը շորս մետր տրամագիծ ունեցող նուրբ արվեստով բանված քրոնդե շորս ջահերը, որոնցից մեղմորեն էլեկտրական լույս է հեղեղվում հանդիսատեսների վրա, ինչպես շատրվանից մանրակաթիլ ընկնող, դեպի երկինք բարձրանալուց հետո, իջնում է շրավազանի կապույտի վրա:

Դիտողի աչքերը, առաստաղի վրա, քանդակագործ Սուրեն Ստեփանյանի զարդաքանդակները հիացմունքով ըմբռնելուց հետո, ինքնաբերաբար սահում են պարզ պատերի սլացիկ կամարաշարից վար, դահլիճի ամենաաչակյան մասը կազմող բեմի վրա, որտեղից մերթմեղմ, մերթմեղմ բարձրանում է Հայկական ՍՍՌ-ի ժողովրդական արտիստ, Ստալինյան մրցանակի լատերեստ երաժշտագետ Թաթուկ Ալթունյանի ղեկավարած երգի-պարի վաստակավոր անսամբլի բազմաձայն երգը (կամ բեմի վրա կատարված ամեն տեսակ ելույթների ձայնը), զարնվում պատերի ոչ զանցառելի մասը երեսպատող ծաղկոտկեն սալիկներին, ներդաշնակ ելեղներով ոլորվում, տարածվում ընդարձակ դահլիճի ամբողջ մթնոլորտում, առանց ամենադուրս անախորժ արձագանքի հասնում օթյակների հեռավորագույն անկյունում նստած ունկնդիրների ակնշնչերին՝ ճիշտ այնպես, ինչպես պարտերում, բեմի հենց մոտիկը նստած ունկնդիրներին:

Իսկապես վեհաշուք է Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճը, որի նախագործման պատիվը եթե պատկանում է մեծ ճարտարապետ Ալեքսանդր թամանյանին, ապա նրա գեղակերտ կառուցման փառքը վերաբերում է ակադեմիկոսի հարազատ որդուն ու հանձարի ժառանգին՝ ճարտարապետ Գեորգ Թամանյանին, որ լրացրել է նույնքան անմասն, հոյակապ ու սքանչելիքներ կառավարական տան շինարարությունը:

Համերգային նորակառույց դահլիճը, որի պաշտոնական բացումը զուգահեյպեց հետ մահու Ստալինյան մրցանակի լատերեստ ակադեմիկոս Թամանյանի ծննդյան 75-ամյակին, ամենաշքեղ արտահայտությունն է Սովետական հարազատ կառավարության աշխատավոր ժողովրդի կուլտուրական պահանջների նկատմամբ տածած անդուլ հոգատարության և հայ աշխատավոր ժողովրդի կուլտուրական մակարդակի աննախընթաց բարձրացման:

Արդարև, արտասահմանում, իմ տեսած երկրներում, կառուցված զեղարվեստի հատուկ շենքերը՝ կինո, թատրոն, մյուզիկ-հոլ, ոչ թե այդ երկրների բնիկ ժողովրդի կամ կառավարության, այլ մեծաշարունակ անհատների կամ ամբողջ ընկերությունների սեփականությունն են՝ հիմնված դուրս շահագիտական նպատակներով: Այնուհետև, այդ մենաշնորհյալ հաստատությունների կառուցման զնայքում իսկ, գոյություն չունի ժողովրդի զեղարվեստական ճաշակի բարձրացնելու ազնիվ ձգտումը կամ ճարտարապետական միասուն կոթողով երկիրը օժտելու նպատակը:

